ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍԿԱՆԱԼ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

ՀԱՍԿԱՆԱԼ

ՄԱՐԴՈՒ

ԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

«Փոլ Վոշերն ունի հազվագյուտ պարգև. նա համադրում է աստվածաբանական ճշգրտությունը գործնական կիրառության հետ: Նրա ուսուցումները սրտեր են քննում և կյանքեր են փոխում: Այս աշխատանքային ձեռնարկը կօգնի ձեզ ավելի լավ հասկանալ այն կարևորագույն հարցերը, որոնք ձևավորում են ձեր հիմքային գիտելիքն այն մասին, թե ով է Աստված, և ինչպես պետք է հաղորդակցվենք Նրա հետ: Վոշերը բացառիկ աշխատանք է կատարում. նա մեծարում է Աստծո գերիշխանությունը՝ միաժամանակ բացահայտելով մեր մեղքի զարհուրելի խորությունները: Այս գիրքը հրաշալիորեն մեծարում է Աստծո փրկարար և սրբացնող շնորհքը. այն, նախ, խոնարհեցնում է ձեզ, իսկ հետո դրդում է սավառնել դեպի շնորհքի գահի բարձունքները: Ուշադրությամբ կարդացեք այս աշխատանքային ձեռնարկը, մտախոհ պատասխանեք ներկայացված հարցերին և կտեսնեք, որ ձեր հոգևոր կյանքը մեծ առաջընթաց կապրի»:

— **Դոկտոր Սթիվեն Ջ. Լոուսոն, «OnePassion Ministries» ծառայության** նախագահ և հիմնադիր

«Մեր ձեռքում է պարզ և միաժամանակ խորը աստվածաշնչյան աշխատանքային ձեռնարկ, որը սովորեցնում է մարդկային ցեղի մասին: Այն ընդգրկում է ամեն ինչ, և ես նկատի ունեմ հենց ամեն ինչ՝ մարդու անկումը, Աստծուն փնտրելու մեր բարոյական անկարողությունը, Նրա ատելությունը և՛ մեղքի, և՛ մեղավորի հանդեպ, ինչպես նաև դժոխքի իրական լինելը և զարհուրանքը... Ես չեմ կատակում, մենք օգտագործելու ենք այս ձեռնարկը Նիդրի համայնքի եկեղեցու անդամներին կրթելու համար (նաև մեր ամբողջ ծառայողական դաշտի համար): Այս գրքում ծանր ճշմարտությունները ներկայացված են հասկանալի և առանց խստության»:

— **Մեզ ՄաքՔոննել, «20schemes»** ծառայության տնօրեն և ***«Ո՞վ կա այդտեղ»*** գրքի հեղինակ

«Փոլ Վոշերը մեծապես խրախուսում է ինձ, քանի որ նա հրաժարվում է անտեսել Եկեղեցու գոյության պատճառը՝ այն, որ մենք պետք է լինենք վկայության խորան այս աշխարհի անապատում: Թող Աստված գործածի այս գիրքը, որպեսզի հիշեցնի մեզ, որ դժոխքն իրական է, և որ մենք պարտավոր ենք զգուշացնել յուրաքանչյուրին, որպեսզի կատարյալ կանգնեցնենք յուրաքանչյուրին Քրիստոս Հիսուսում»:

— **Ռեյ Քամֆորտ, «Living Wat\s»147** ծառայության հիմնադիր և գլխավոր գործադիր տնօրեն

ՀԱՍԿԱՆԱԼ **ՄԱՐԴՈՒ** ԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակային իրավունքները՝ 2020թ., Փոլ Դեյվիդ Վոշեր

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել ցանկացած կերպով՝ առանց գրավոր թույլտվության, բացառությամբ կարճ մեջբերումների քննադատական հոդվածների և ակնարկների մեջ: Ուղղե՛ք ձեր խնդրանքները հրատարակչին հետևյալ հասցեով.

Հրատարակված է.

HeartCry Missionary Society
PO Box 3506
Radford, VA 24143
www.heartcrymissionary.com

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, 2017թ.
Առաջին հրատարակություն

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, կամ, հատուկ նշումների դեպքում՝ «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչից» (NASB):

ISBN 978-0-9886681-6-4

Խմբագիրներ՝ Ֆորեսթ Հայթ և Էլզելին Հայթ
Հավելյալ խմբագրում. Ռեյնա Հոֆման
Էջադրումը և ձևավորումը՝ Ջոն Գրին, Մեթյու Ռոբինսոն և Ֆորեսթ Հայթ

Բովանդակություն

	Ներածություն	7
	Ուսումնական ծրագիր՝ ըստ ցանկության	9
	Նախաբան. Այս ձեռնարկի նպատակը	11
	Մաս Մեկ. Մարդու արարումը և անկումը	
1.	Մարդու արարումը	15
2.	Ադամի անկումը	22
3.	Կարևոր հարցեր անկման մասին	28
4.	Մարդկության անկումը	32
	Մաս Երկու. Մարդու բարոյական արատավորությունը և մեղավորությունը	
5.	Բացարձակ արատավորություն և բարոյական ապականություն	39
6.	Հոգևոր մահ	46
7.	Բարոյական անկարողություն (Մաս Մեկ)	53
8.	Բարոյական անկարողություն (Մաս Երկու)	58
9.	Բարոյական անկարողություն (Մաս Երեք)	65
10.	Ստրկացում սատանային	70
11.	Մեղքի էությունը և համընդհանուր բնույթը	77
	Մաս Երեք. Աստծո վերաբերմունքը մեղավորի հանդեպ	
12.	Տրտմություն	87
13.	Զայրույթ (Մաս Մեկ)	91
14.	Զայրույթ (Մաս Երկու)	97
15.	Ատելություն կամ խորշանք	102
16.	Թշնամություն և վրիժառություն	108
	Մաս Չորս. Աստծո դատաստանը մեղավորի հանդեպ	
17.	Բաժանված Աստծուց	117
18.	Մատնված թշվառության	123
19.	Մատնված մեղքին	127
20.	Մահ (Մաս Մեկ)	132
21.	Մահ (Մաս Երկու)	134
22.	Մահ (Մաս Երեք)	141
23.	Անօրենների վերջնական դատաստանը	148
24.	Դժոխք (Մաս Մեկ)	156
25.	Դժոխք (Մաս Երկու)	164
26.	Մարդու միակ հույսը	168

Ներածություն

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿԻՑ

Այս դասընթացի մեծագույն նպատակն է, որ ուսանողը *հանդիպում ունենա Աստծո հետ Նրա խոսքի միջոցով:* Այս ուսումնական ձեռնարկը հիմնված է այն համոզմունքի վրա, որ Աստվածաշունչը Աստծո ոգեշնչված և անսխալական խոսքն է, և այնպես է կազմված, որ ուսանողը բառացիորեն *անկարող է* ընթերցել այն՝ *առանց բաց Աստվածաշնչի:* Նպատակն է՝ օգնել ընթերցողին հնազանդվել Պողոս առաքյալի հորդորին Բ Տիմոթեոս 2.15-ում.

> *«Ձանք արա, որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստծո առջև՝ իբրև մի մշակ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես»:*

Այս ձեռնարկի յուրաքանչյուր գլուխ մարդու և սուրբ Աստծո առջև նրա հուսահատ դրության վարդապետության մասին է: Յուրաքանչյուր գլուխն ավարտելու համար ուսանողը պետք է պատասխանի հարցերի և կատարի առաջադրանքներ, որոնք տրված են համաձայն օգտագործված աստվածաշնչյան հատվածների: Ուսանողին առաջարկվում է մտորել ամեն մի աստվածաշնչյան հատվածի շուրջ և գրի առնել մտքերը: Այս դասընթացի օգտավետությունն ուղիղ համեմատական է ուսանողի ջանքերին: Եթե ուսանողը պատասխանի հարցերին՝ առանց մտածելու, գրեթե արտագրելով համապատասխան աստվածաշնչյան հատվածը և չձգտելով հասկանալ դրա իմաստը, այս գիրքը քիչ օգտավետ կլինի:

«Հասկանալ մարդու իրական դրությունը» գիրքը գլխավորապես աստվածաշնչյան ուսումնական ձեռնարկ է և չի պարունակում գունազարդ պատկերներ, հետաքրքրաշարժ պատմություններ և նույնիսկ աստվածաբանական մեկնություններ: Հեղինակը ցանկացել է ստեղծել այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնացույց է անում Աստվածաշունչը և թույլ է տալիս, որ Աստծո Խոսքը խոսի իր փոխարեն:

Այս ուսումնական ձեռնարկը կարող է օգտագործվել անհատական ուսումնասիրության համար, փոքր խմբերում, կիրակնօրյա դպրոցների դասարաններում կամ ցանկացած միջավայրում: Շատ կարևոր է, որ ուսանողն ինքնուրույն ավարտի յուրաքանչյուր գլուխը մինչև փոքր խմբի կամ կիրակնօրյա դպրոցի դասարանի հավաքույթը, որտեղ նրանք քննարկելու են այդ գլուխը և պատասխանելու են դրանում գտնվող հարցերին խմբի կամ աշակերտական թիմի առաջնորդի հետ:

ՀՈՐԴՈՐ ՈՒՍԱՆՈՂԻՆ

Մենք հորդորում ենք յուրաքանչյուր ուսանողի զբաղվել աստվածաշնչյան վարդապետության ուսումնասիրությամբ և բացահայտել դրա վեհ դիրքը քրիստոնեական կյանքում: Ճշմարիտ քրիստոնյայի համար շատ դժվար կլինի գործել և նույնիսկ՝ գոյատևել, եթե նրա զգացմունքները հակասում են նրա մտքին, կամ, այլ կերպ ասած՝ եթե նրա պատկերացումն Աստծուն ընծայվելու մասին՝ հակասում է Աստծո մասին նրա վարդապետական գիտելիքին: Համաձայն Աստվածաշնչի՝ ո՛չ մեր զգացմունքները, ո՛չ էլ փորձառությունը բավարար հիմք չեն քրիստոնեական կյանքի համար: Միայն Աստվածաշնչի ճշմարտությունները, որոնք փոխանցվում են վարդապետության ուսուցման միջոցով և հասկացվում են մտքով, կարող են լինել այդ հաստատ հիմքը, որի վրա մենք պետք է կառուցենք մեր համոզմունքները և վարքը, և որոշենք մեր զգացմունքների և փորձառությունների վավերական լինելը: Միտքը սրտի թշնամին չէ, իսկ վարդապետությունը չի խոչընդոտում նվիրմանը: Երկուսն էլ անփոխարինելի են և պետք է անբաժան լինեն: Սուրբ գիրքը պատվիրում է մեզ սիրել մեր Տեր Աստծուն մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ անձով և մեր ամբողջ մտքով (տե՛ս Մատթ. 22.37), և երկրպագել Աստծուն և՛ հոգով, և՛ ճշմարտությամբ (տե՛ս Հովհ. 4.24):

Վարդապետական ուսուցումը և՛ զարգացնում է մեր միտքը, և՛ ամրացնում է մեր նվիրումը: Այն ջերմեռանդ որոնում է, ձգտում առ Աստված, որը պետք է առաջնորդի ուսանողին ավելի մեծ անձնական վերափոխման, հնազանդության և սրտանց երկրպագության: Գոյություն ունի մեծ սխալմունք, որից ուսանողը պետք է զգուշանա. նա չպետք է փնտրի անանձնական գիտելիք՝ Աստծո Անձը որոնելու փոխարեն: Թե՛ չգիտակցված նվիրումը, թե՛ սոսկ տեսական գիտելիք ստանալու ձգտումը անօգուտ են, որովհետև երկու դեպքում էլ մարդը կորցնում է Աստծուն:

ՆՈՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Այս գրքի անգլերեն հրատարակության մեջ օգտագործվել է Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշունչը (NASB)։ Աստվածաշնչի այս թարգմանությունն ընտրվել է հետևյալ պատճառներով. (1) թարգմանիչների անվարան համոզվածությունը, որ Աստվածաշունչը՝ Աստծո անսխալական խոսքն է և (2) ճշգրիտ թարգմանությունը բնագրային լեզուներից։

Ներկա հայերեն հրատարակության մեջ Աստվածաշնչի այս թարգմանությունը (NASB) օգտագործվում է, երբ առկա է մեջբերված հատվածների իմաստային երկվություն հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանության (1869թ.) հետ։ Այն ավելանում է գրքի տեքստին և աստվածաշնչյան մեջբերումներին փակագծերի մեջ՝ որպես այլընտրական տարբերակ։

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

Չունենալով ճիշտ պատկերացում մարդկային բնության և մեղքի մասին՝ անհնար է հասկանալ Հիսուս Քրիստոսի Ավետարանը և լիարժեք գնահատել այն շնորհքը, որն Աստված տվեց մեզ Նրա կատարած վեհ աշխատանքի միջոցով։ Այնպես որ, այս աշխատանքային ձեռնարկի նպատակն է պատկերել ընթերցողի համար մարդու անկում ապրած բնության իրական լինելը և նրա մեղքի զարհուրելի հետևանքները։ Նպատակը ոչ թե ընթերցողի հույսը խլելն է, այլ մատնացույց անել միակ ճշմարիտ հույսը՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը։ Այլ կերպ ասած, այս աշխատանքային ձեռնարկն անցկացնում է ընթերցողին մարդկային մեղքի խավար գետնուղիով, որպեսզի նա շատ ավելի պարզորեն տեսնի Աստծո շնորհքի լույսը։

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել իմ կին Չարոյին՝ մշտական աջակցության համար, և իմ չորս զավակներին՝ Յանին, Էվանին, Ռոուենին և Բրաունվինին, որոնք շարունակում են մեծ բերկրանք պարգևել ինձ։ Նույնպես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել «Հարթ Քրայ» ծառայության աշխատակիցներից երկուսին. Ֆորեսթ Հայթին, ով ջանասիրաբար և մանրակրկիտ խմբագրել է այս ձեռագիրը, և Ջոն Գրինին, ով աշխատել է գրաֆիկայի, էջադրման և ձևավորման վրա։ Նրանց ներդրումն այս աշխատության ընդհանուր ընթեռնելիության մեջ անգնահատելի է։ Նույնպես շնորհակալ եմ «Հարթ Քրայ»-ի բոլոր աշխատակիցներին, որոնք խրախուսում էին ինձ այս գրքի հրատարակման ընթացքում։

ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

«Հասկանալ մարդու իրական դրությունը» գիրքը կազմվել է Փոլ Վոշերի նախորդ աշխատություններից մեկի՝ *«Ճշմարտությունը մարդու մասին»* գրքի հիման վրա։ Այն զգալիորեն ընդլայնվել է, վերանայվել է և փոփոխության է ենթարկվել։ Այս երկու գրքերի նմանության պատճառով, այս ձեռնարկի նյութը մասամբ ծանոթ կլինի նրանց, ովքեր արդեն ուսումնասիրել են *«Ճշմարտությունը մարդու մասին»* գիրքը։ Նախորդ աշխատության համեմատ, այս գիրքը պարունակում է (1) ավելի քան հարյուր քսան նոր նշում, (2) մի քանի նոր կետեր և ենթակետեր, (3) անթիվ այլ փոփոխություններ և՛ նյութի, և՛ ձևավորման մեջ և (4) ավելի ընթեռնելի բովանդակություն՝ շնորհիվ բազմափուլ խմբագրական գործընթացի։ Համոզված եմ, որ *«Հասկանալ մարդու իրական դրությունը»* գիրքն օգտավետ կլինի բոլորին, նույնիսկ այն մարդկանց, որոնք ծանոթ են *«Ճշմարտությունը մարդու մասին»* գրքին։

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ՝ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Ստեղծված Աստծո պատկերով», Էնտոնի Հոուկեմա
«Քրիստոնեական տեսանկյունը մարդու մասին», Ջ. Գրեշեմ Մախեն
«Ոչ այնպես, ինչպես պետք է լիներ», Կոռնելիուս Պլատինգա Կրտ.
«Ադամի մեղքի վերագրումը», Ջոն Մյուրի
«Կամքի գերության մասին», Մարտին Լյութեր
«Մեղքի մեղավորությունը», Ռալֆ Վենինգ
«Մարդկային բնությունը՝ չորս տեսանկյունից», Թոմաս Բոստոն (առաջադեմ ուսանողների համար)
«Քաղվածքներ Սուրբ գրքից. Մարդու բացարձակ արատավորությունը», Արթուր Վ. Փինք (առաջադեմ ուսանողների համար)

Ուսումնական ծրագիր՝ ըստ ցանկության

Շաբաթ Մեկ	**Մաս Մեկ. Մարդու արարումը և անկումը**
Օր Մեկ	Նախաբան
	Գլուխ 1, Գլխավոր կետեր 1,2
Օր Երկու	Գլուխ 1, Գլխավոր կետեր 3-5
Օր Երեք	Գլուխ 2
Օր Չորս	Գլուխ 3
Օր Հինգ	Գլուխ 4
Շաբաթ Երկու	**Ճշմարտությունը մարդու մասին, Մաս Մեկ**
Օր Մեկ	Գլուխ 5, Բաժին 1
	Գլուխ 5, Բաժին 2, Գլխավոր կետեր 1,2
Օր Երկու	Գլուխ 5, Բաժին 2, Գլխավոր կետեր 3-5
Օր Երեք	Գլուխ 6, Գլխավոր կետեր 1,2
Օր Չորս	Գլուխ 6, Գլխավոր կետեր 3,4
Օր Հինգ	Գլուխ 7
Շաբաթ Երեք	**Ճշմարտությունը մարդու մասին, Մաս Երկու**
Օր Մեկ	Գլուխ 8
Օր Երկու	Գլուխ 9
Օր Երեք	Գլուխ 10
Օր Չորս	Գլուխ 11, Բաժին 1
	Գլուխ 11, Բաժին 2, Գլխավոր կետ 1
Օր Հինգ	Գլուխ 11, Բաժին 2, Գլխավոր կետեր 2-4
Շաբաթ Չորս	**Աստծո վերաբերմունքը մեղավորի հանդեպ**
Օր Մեկ	Գլուխ 12
Օր Երկու	Գլուխ 13
Օր Երեք	Գլուխ 14
Օր Չորս	Գլուխ 15
Օր Հինգ	Գլուխ 16
Շաբաթ Հինգ	**Աստծո դատաստանները մեղավորի կյանքում**
Օր Մեկ	Գլուխ 17, Բաժին 1
	Գլուխ 17, Բաժին 2, Գլխավոր կետեր 1,2
Օր Երկու	Գլուխ 17, Բաժին 2, Գլխավոր կետեր 3-7
Օր Երեք	Գլուխ 18
Օր Չորս	Գլուխ 19, Գլխավոր կետեր 1,2
Օր Հինգ	Գլուխ 19, Գլխավոր կետեր 3-5
Շաբաթ Վեց	**Աստծո մահվան դատաստանը**
Օր Մեկ	Գլուխ 20
	Գլուխ 21, Բաժին 1, Գլխավոր կետեր 1,2
Օր Երկու	Գլուխ 21, Բաժին 1, Գլխավոր կետեր 3,4
Օր Երեք	Գլուխ 21, Բաժին 2

Օր Չորս	Գլուխ 22, Բաժին 1
	Գլուխ 22, Բաժին 2, Գլխավոր կետ 1
Օր Հինգ	Գլուխ 22, Բաժին 2, Գլխավոր կետեր 2-5
Շաբաթ Յոթ	**Վերջին դատաստանը, դժոխքը և Ավետարանի հույսը**
Օր Մեկ	Գլուխ 23, Գլխավոր կետեր 1-4
Օր Երկու	Գլուխ 23, Գլխավոր կետեր 5,6
Օր Երեք	Գլուխ 24, Բաժիններ 1-3
Օր Չորս	Գլուխ 24, Բաժին 4
	Գլուխ 25
Օր Հինգ	Գլուխ 26

Նախաբան. Այս ձեռնարկի նպատակը

Մինչև ուսումնասիրությունը սկսելը, ուսանողը պետք է պատկերացում կազմի այս ձեռնարկի բովանդակության և նպատակի մասին: Այս ձեռնարկում կդիտարկենք մարդու մեղքը և սուրբ Աստծո պատասխանը նրան: Մենք կփորձենք ներկայացնել մարդու բարոյական արատավորության խորքերը և մեղսալի գործերը, որոնք բխում են այն բանից, թե ինչպիսին է նա դարձել: Մենք նույնպես կդիտարկենք Աստծո արձագանքը անկում ապրած և շարունակական ապստամբության մեջ գտնվող մարդու հանդեպ: Եվ, ի վերջո, մանրակրկիտորեն կդիտարկենք մարդու թշնամանքն Աստծո դեմ և Աստծո դատաստանը մեղավորի հանդեպ, և միայն հպանցիկ կանդրադառնանք Աստծո սիրուն և Քրիստոսում կատարված Նրա փրկարար աշխատանքին: Այս ձեռնարկի նման կառուցվածքը հետապնդում է չորս նպատակ. (1) որպեսզի ուսանողը հասկանա մարդու զարհուրելի բարոյական վիճակը՝ առանց Աստծո շնորհքի, (2) որպեսզի ուսանողը հասկանա մարդու սարսափելի դրությունն Աստծո դատաստանի և բարկության առջև, (3) որպեսզի ուսանողը հասկանա այն աստիճանը, որով Աստծո արդարադատությունը պետք է բավարարվի՝ Նրա զայրույթը խաղաղեցնելու համար, և (4) որպեսզի ուսանողն է՛լ ավելի գնահատի Աստծո շնորհքը մեղավորի հանդեպ, որը հայտնվել է Հիսուս Քրիստոսի Ավետարանի միջոցով:

Վերևում նշված պատճառներով, աշխատանքն այս ձեռնարկի հետ հեշտ չի լինի: Թերթելով ամեն էջը՝ մենք է՛լ ավելի կիջնենք ամեն քայլափոխին խավարող մի նեղ գետնուղիով, մինչև մոտենանք անմիջապես դժոխքին: Մենք կտեսնենք մարդուն այնպես, ինչպես, հավանաբար, երբեք չէինք տեսել անցյալում, և կտեսնենք Աստծո որոշ հատկանիշներ, որոնք հաճախ անտեսվում են կամ շատ հազվադեպ են հստակ քարոզվում: Այս ձեռնարկը ստիպողական արշավ է մարդու բարոյական ապականության բաց վերքի միջով: Այն կոչ է դիտարկելու Աստծուն Իր ամբողջ զայրույթով՝ մեղքի և մեղավորի դեմ: Այն անհրաժեշտ խավար է, որի միջով մենք պետք է դեգերենք, որպեսզի գնահատենք լույսը, երբ այն հայտնվի: Միայն տեսնելով մարդուն իր բացարձակ մեղավորությամբ և նայելով Աստծուն Իր կատարյալ արդարությամբ և արդարադատությամբ, մենք կարող ենք ճշմարտապես արժևորել այն Աստծո սերը, Ով Փրկիչ ուղարկեց մեզ համար:

> «Մենք երբեք չենք ունենա ճիշտ պատկերացում այս փրկության մեծության մասին, քանի դեռ թեկուզ ինչ-որ չափով պատկերացում չենք կազմել այն մասին, թե ինչպիսին էինք մենք մինչև այն ժամանակը, երբ այս մեծ զորությունը համակեց մեզ, և չենք գիտակցել, թե ինչպիսին կլինեինք մինչև հիմա, եթե Աստված չմիջամտեր մեր կյանքերում և չփրկեր մեզ: Այլ կերպ ասած, մենք պետք է հասկանանք այն, թե ինչպիսին է մեղքի խորությունը, ինչ է մեղքն իրականում նշանակում, և ինչ վնաս է այն պատճառել մարդկային ցեղին»[1]:

> «Եթե մենք չիմանանք մեր անհավատարմության և ապստամբության մասին, երբեք չենք ճանաչի Աստծուն՝ որպես ճշմարտության և շնորհքի Աստված: Եթե մենք չիմանանք մեր հպարտության մասին, երբեք չենք ճանաչի Նրան՝ Իր մեծությամբ, և ո՛չ էլ կգանք Նրա մոտ՝ ստանալու այն բժշկությունը, որի կարիքն ունենք: Երբ մեր մարմինը հիվանդ է, և մենք գիտենք այդ մասին, մենք գտնում ենք բժշկի և հետևում ենք նրա ցուցումներին բուժվելու համար: Բայց եթե չիմանանք, որ հիվանդ ենք, մենք օգնություն չենք փնտրի և միգուցե մահանանք այդ հիվանդությունից: Նույնը վերաբերում է հոգևորին: Եթե մտածում ենք, որ առողջ ենք, մենք երբեք չենք ընդունի Աստծո բուժումը, քանի որ, կարծում ենք, թե չունենք դրա կարիքը: Սակայն եթե մենք, Աստծո շնորհքով, տեղյակ լինենք մեր հիվանդությունից (այնինչ, իրականում, խոսքը շատ ավելի վատ բանի մասին է, քան հիվանդությունը. խոսքը հոգևոր մահվան մասին է, և մենք պետք է դառնանք Աստծուն հենց այս պատճառով), մենք

[1] Դոկտոր Մարտին Լլոյդ-Ջոնս, «*Եփեսացիների թուղթ*», հտ. 2, էջ 14:

> կկարողանանք հասկանալ այն աշխատանքի իմաստը, որը Քրիստոսը կատարեց մեր փոխարեն. ընդունել Նրան որպես Փրկչի և վերափոխվել Նրանով»[2]:
>
> «Չկա ավելի լավ միջոց, որով կարող ենք իմանալ, թե որքանով ենք հասկանում քրիստոնեական վարդապետությունը փրկության մասին, քան ստուգելը, թե որքանով ենք հասկանում մեղքի իրական բնույթը»[3]:

Ի վերջո, մենք հորդորում ենք ուսանողներին ուսումնասիրել այս գիրքը նախորդի հետ միասին, որը կոչվում է *«Բացահայտել փառավոր Ավետարանը»:* Ինչպես նշվեց վերևում, *«Հասկանալ մարդու իրական դրությունը»* գիրքը պարունակում է այնպիսի ճշմարտություններ, որոնց մեծ մասը ծանր է, և միայն մի փոքր մասը՝ մխիթարական: Հուսով ենք, որ այս գրքում ուսանողն իրապես կգիտակցի իր հուսահատ դրությունը, որի պատճառը թե՛ իր անօրինությունը և բարոյական ապականությունն են, թե՛ Աստծո արդարությունը և դատաստանը: *«Բացահայտել փառավոր Ավետարանը»* գրքում ուսանողը սովորում է, որ արդարադատության և զայրույթի Աստված նույնպես սիրո Աստված է, Ով արել է անըմբռնելին՝ ուղարկելով Իր Որդուն, որպեսզի հաշտեցնի Իր հետ անկում ապրած մարդուն և վերափոխի նրան՝ դարձնելով Աստծո զավակ: Ուսանողը կարող է հայտնվել խիստ հուսահատ վիճակում, եթե նա ուսումնասիրի միայն այս ձեռնարկում գտնվող աստվածաշնչյան ճշմարտությունները՝ առանց քաջ ծանոթ լինելու Ավետարանի փառավոր հույսին:

---

[2] Ջեյմս Մոնտգոմերի Բոյս, «*Քրիստոնեական հավատքի հիմքերը*», էջ 198:
[3] Դոկտոր Մարտին Լլոյդ-Ջոնս, «*Հռոմեացիների թուղթ*», հտ. 6, էջ 119:

ՄԱՍ ՄԵԿ

ՄԱՐԴՈՒ ԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

Գլուխ 1. Մարդու արարումը

Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ մարդը ո՛չ պատահականություն է, ո՛չ էլ որևէ անբնական գործընթացի արդյունք. մարդը հավիտենական Աստծո ստեղծագործությունն է: Մնացած բոլոր արարածներին ստեղծելուց հետո Աստված հողի փոշուց կազմեց առաջին մարդուն՝ Ադամին: Աստված փչեց կյանքի շունչն Ադամի ռունգերի մեջ, և նա կենդանի էակ դարձավ: Ադամից Աստված կազմեց կնոջը՝ Եվային՝ նրա ընկերը և օգնականը լինելու համար: Նա պատվիրեց նրանց շատանալ և լցնել երկիրը, որը հանձնվեց նրանց իշխանությանը: Ամբողջ մարդկությունն առաջացել է Ադամի և Եվայի միությունից:

Աստվածաշունչը պարզորեն ցույց է տալիս, որ թե՛ տղամարդը, թե՛ կինը ստեղծվեցին Աստծո ***կողմից*** և Աստծո ***համար***, և նրանց գոյությունն իմաստավորվում է միայն Աստծուն սիրելու, Նրան փառավորելու և Նրա կամքը կատարելու դեպքում: Նրանք առանձնանում էին բոլոր արարածներից այն բանով, որ ստեղծվել էին ***«իմագո դեի»***-ով՝ Աստծո պատկերով, և արտոնություն էին ստացել վայելելու անձնական և անխաթար շփում Նրա հետ:

Այս ճշմարտություններն անչափ կարևոր են մեզ համար, քանի որ ցույց են տալիս մեր ինքնությունը և արարման նպատակը: Մենք մեր գոյության հեղինակները չենք. մեր գոյության պատճառն Աստծո ողորմած կամքը և զորությունն են: Մենք չենք պատկանում ինքներս մեզ, այլ՝ Աստծուն, Ով ստեղծեց մեզ Իր նպատակների և հաճության համար: Աստծուց հեռանալու ձգտումը համարժեք է այս կյանքի հետ կապերը խզելու փորձին: Նրա Անձից և կամքից անկախ ապրելը նշանակում է ժխտել մեր ստեղծման նպատակը:

1. Ծննդոց գրքի երկրորդ գլխում Սուրբ գիրքը պատմում է մարդու ստեղծման մասին: Ամփոփե՛ք այս պատմությունը՝ համաձայն Ծննդոց 2.7-ի: Ի՞նչ է հայտնում այս խոսքը մարդու ծագման և Աստծո հետ ունեցած հարաբերության մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում հայտնվում է թե՛ մարդու փառքը, թե՛ նրա ունայնությունը: Մարդու փառքը հայտնվում է այն բանով, որ Աստված անձամբ և հատուկ ստեղծեց նրան: Մարդու ունայնությունը հայտնվում է այն բանով, որ նա ստեղծվեց հողի փոշուց. այդ իսկ պատճառով, նրա գոյությունը և փառքը լիովին կախված են Աստծուց: Աստծուց առանձին, մարդը գրեթե նույնքան անկյանք է, որքան փոշին:

2. Նույնպես, Ծննդոց գրքի երկրորդ գլխում գրված է առաջին կնոջ՝ Եվայի ստեղծման սուրբգրային պատմությունը: Ամփոփե՛ք այն՝ համաձայն Ծննդոց 2.21-23-ի: Ի՞նչ է այս հատվածը հայտնում մեզ կնոջ ծագման, նաև թե՛ Աստծո, թե՛ տղամարդու հետ ունեցած հարաբերության մասին:

ՆՇՈՒՄՆԵՐ. Ի տարբերություն տղամարդու, որը ստեղծվեց հողի փոշուց, կինը ստեղծվեց տղամարդուց: Այս փաստը հայտնում է մի շարք կարևոր ճշմարտություններ, որոնցից ամենաակնառուները հետևյալն են. (1) Աստված ստեղծեց կնոջն անձամբ և հատուկ կերպով, ինչպես և տղամարդուն, և այդ պատճառով կինը հավասար է տղամարդուն Աստծո առջև, և (2) չնայած որ կնոջը տրված դերը նույնը չէ, ինչ տղամարդունը (տե՛ս Ծնն. 2.20), նրանք փոխադարձ կախում ունեն իրարից: Պողոս առաքյալը գրում է. «Բայց դարձյալ ո՛չ կինն առանց մարդու, և ո՛չ մարդն առանց կնոջ՝ Տիրոջ մեջ: Որովհետև ինչպես որ կինը մարդուց եղավ, այնպես էլ մարդը կնոջ միջոցով է, բայց ամենը՝ Աստծուց» (Ա Կորնթացիների 11.11,12):

3. Մենք նշեցինք այն ճշմարտությունը, որ մարդն Աստծո ստեղծագործությունն է, և այժմ պետք է դիտարկենք նրա եզակի դիրքն արարչագործության մեջ: Համաձայն Ծննդոց 1.26-ում գտնվող հետևյալ արտահայտությունների, ի՞նչ կերպով է մարդը եզակի՝ ամբողջ արարչագործության համեմատ:

ա. *«...մարդ շինենք...»*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված չասաց. «...լինի...», ինչպես ամբողջ արարչագործության դեպքում (խոսքեր 3,6,14). փոխարենը, Նա ասաց. «...շինենք...»: Այս ձևակերպումը փոխանցում է գաղափար ավելի սերտ անձնական հարաբերության մասին: «Շինենք» և «Մեր պատկերով» արտահայտությունների հոգնակի ձևը մեծ շահարկումների առիթ է դարձել: Քանի որ դրա պատասխանը չի հայտնվում ո՛չ այս խոսքում, ո՛չ համատեքստում, մենք պետք է զգուշությամբ խոսենք այս մասին: Այնուամենայնիվ, կարող ենք անել հետևյալ պնդումները: ***Առաջինը***՝ հավանաբար, սա հղում չէ հրեշտակներին կամ որևէ հրեշտակային խմբի, քանի որ արարչագործության աշխատանքը միշտ վերագրվում է բացառապես Աստծուն: ***Երկրորդը***՝ սա կարող է հայտնել այն, ինչ կա Աստծո մտքում, և ամրապնդել ճշմարտությունն այն մասին, որ արարչագործությունը միմիայն Աստծո վճռի արդյունքն է: ***Երրորդը***՝ սա կարող է լինել Աստվածաշնչի առաջին հայտնությունը Երրորդության Անձերի հոգնակիության՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու մասին: Այս կետերը ոչ մի դեպքում չեն հակասում Սուրբ գրքի մնացած մասին, որը դիտարկում է արարչագործությունը որպես Հոր, Որդու (տե՛ս Հովհ. 1.1-36, Կողոս. 1.16) և Հոգու (տե՛ս Ծննդ. 1.2) աշխատանքը:

բ. *«...Մեր պատկերով...»*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված չասաց. «իրենց տեսակի պես», ինչպես ամբողջ արարչագործության դեպքում (խոսքեր 11,12,21,24,25). փոխարենը, Նա ասաց. «Մեր պատկերով»: Մարդկությունը եզակի է ամբողջ արարչագործության համեմատ այն բանով, որ այն միակն է, որը կրում է ***«իմագո դեի»***-ն կամ «Աստծո պատկերը»: «Աստծո պատկերը» կարող է մի շարք իմաստներ ունենալ: ***Անձնային հատկանիշներ***. Ադամը և Եվան անձնավորված և ինքնագիտակցում ունեցող արարածներ էին: Նրանք պարզապես բնազդներով տարվող կենդանիներ չէին, և ո՛չ էլ մեքենաներ, որոնք ծրագրված էին որոշակի ազդակների արձագանքելու համար: ***Հոգևոր բնույթ***. Աստվածաշունչը հայտարարում է, որ «Աստված Հոգի է» (Հովհաննես 4.24): Այնպես որ, տրամաբանական է ակնկալելը, որ նույն հատկանիշը կարելի է գտնել մարդու մեջ, քանի որ նա ստեղծված է Աստծո պատկերով: Ադամը և Եվան պարզապես կյանքի կոչված հող չէին. նրանք ավելին էին: Նրանք հոգևոր էակներ էին՝ օժտված էին Աստծուն ճանաչելու, Աստծո հետ շփվելու և Աստծուն հնազանդությամբ, երկրպագությամբ և գոհությամբ արձագանքելու իրական կարողությամբ: ***Գիտելիք***. Կողոսացիների 3.10-ում Սուրբ գիրքը հայտնում է, որ Աստծո պատկերով ստեղծված լինելու հատկանիշներից մեկը «գիտությունն» է կամ ճշմարիտ գիտելիքն Աստծո մասին: Սա չի նշանակում, որ Ադամն ու Եվան գիտեին այն ամենը, ինչ կարելի է իմանալ Աստծո մասին, քանի որ սահմանափակ արարածը երբեք չի կարող լիովին ընկալել անսահմանափակ Աստծուն: Փոխարենը, սա նշանակում է, որ նրանց գիտելիքը մաքուր և

անխառն էր: ***Ինքնորոշում կամ կամք***. Ադամն ու Եվան ստեղծված էին կամքով: Նրանք ունեին ինքնորոշում, և նրանց շնորհվել էր ազատորեն որոշում կայացնելու հնարավորություն: ***Անմահություն***. Ադամն ու Եվան ստեղծված էին (նշանակում է՝ նրանք ունեին սկիզբ), ու թեև նրանց գոյության ամեն մի վայրկյանը կախված էր իրենց Արարչի բարությունից, նրանք օժտված էին անմահ անձով, որը, ստեղծվելուց հետո, այլևս չէր կարող դադարել գոյությունը: Անձի անմահությունը պետք է դրդի բոլոր մարդկանց զգուշությամբ տնօրինել ինքնորոշման ահռելի պատասխանատվությունը: Քանի որ անձը հավիտենական է, այն որոշումները, որոնք մենք կայացնում ենք, կունենան հավիտենական հետևանքներ, որոնցից անկարելի կլինի խուսափել:

գ. *«...որ իշխեն...»*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Տղամարդը և կինը ստացան արտոնություն և պատասխանատվություն՝ տնօրինելու ամբողջ արարչագործությունը որպես Աստծո տեղակալներ: Նրանց իշխանությունը չպետք է անկախ լիներ Աստծո իշխանությունից, այլ պետք է կատարելապես համապատասխաներ Նրա կամքին: Նրանք պետք է իշխեին ի օգուտ և ի բարօրություն արարչագործության և հանուն Աստծո փառքի:

4. Ծննդոց 1.26-ում իմացանք, որ մարդն առանձնանում է ամբողջ արարչագործությունից, և որ միայն նա է ստեղծված Աստծո պատկերով: Հետևյալ հատվածներում կբացահայտենք, որ թեև մարդը եզակի է, նրա նպատակը նույնն է, ինչ և ամբողջ արարչագործությանը. նա չի ստեղծվել իր համար, այլ՝ Աստծո փառքի և հաճության: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները արարչագործության գլխավոր նպատակի մասին:

ա. *Սաղմոս 104.31-35*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդու մեծագույն նպատակն այն չէ, որ նա, Աստծուց անկախ, ձգտի իր երջանկությանը: Մարդը ստեղծված է Աստծո բարեհաճության և ուրախության համար: Մարդու մեծագույն նպատակն է փնտրել այն, ինչ հաճելի է Աստծուն, և դրանով իսկ գտնել լիարժեք բերկրանք և իր գոյության իմաստը:

բ. *Հռոմեացիների 11.36*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում Պողոս առաքյալը կատարյալ շրջան է գծում: Մարդու կյանքը ծագում է Աստծուց, այն շարունակվում է Աստծով, և այն հասնում է իր վերջնական նպատակին՝ Աստծուն փառք, պատիվ և գովաբանություն բերելով:

գ. *Կողոսացիների 1.16*

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է հասկանալ, որ այս խոսքը հատկապես վերաբերում է Աստծո Որդուն: Հորը հաճելի էր ստեղծել այս աշխարհն Իր Որդու միջոցով և Իր Որդու համար: Այս փոքրիկ «համար» կապի մեջ է գտնվում մեր գոյության իմաստը: Մարդը, ամբողջ արարչագործության հետ, ստեղծվել է Աստծո, Նրա փառքի և Նրա հաճության համար:

5. Սուրբ գիրքը սովորեցնում է, որ տղամարդը և կինը ստեղծված են Աստծո ***կողմից*** և Աստծո ***համար***, և նրանց գոյությունն իմաստավորվում է միայն Աստծուն սիրելու, Նրան փառավորելու և Նրա կամքը կատարելու դեպքում: Մենք մեր գոյության հեղինակները չենք. մենք ստեղծվել ենք Աստծո ողորմած կամքով և զորությամբ: Մենք չենք պատկանում ինքներս մեզ, այլ՝ Աստծուն, Ով ստեղծեց մեզ Իր նպատակների և հաճության համար: Այս մեծ ճշմարտությունների լույսի ներքո, ինչպե՞ս մարդկությունը պետք է արձագանքի Աստծուն: Գրի առեք ձեր մտքերը ստորև թվարկված պատշաճ արձագանքների և դրանք մատնանշող աստվածաշնչյան հատվածների վերաբերյալ:

ա. *Երկյուղածություն (Սաղմոս 33.6-9)*

_____

_____

_____

_____

_____

_____

բ. *Երկրպագություն (Սաղմոս 95.6)*

_____

_____

_____

_____

_____

_____

գ. *Ծառայություն (Սաղմոս 100.2-4)*

_____

_____

_____

_____

_____

_____

դ. *Սեր (Մարկոս 12.30)*

ե. *Փառք և պատիվ (Ա Կորնթացիների 10.31)*

Գլուխ 2. Ադամի անկումը

Աստված ստեղծեց Ադամին և Եվային՝ համաձայն Իր նպատակի և բարեհաճության, և պատվիրեց նրանց չուտել բարու և չարի գիտության ծառից: Այս պատվիրանին հնազանդվելու դեպքում նրանք կվայելեին ուրախալի հաղորդակցություն Աստծո հետ և մշտապես կտիրեին արարչագործության վրա: Այս պատվիրանին չհնազանդվելը կհանգեցներ հոգևոր և ֆիզիկական մահվան և դրան ուղեկցող բոլոր ախտերին:

Համաձայն Աստվածաշնչի, Ադամն ու Եվան գայթակղվեցին և անհնազանդ եղան այդ պատվիրանին: Նրանց անհնազանդության պատճառով նրանց հաղորդակցությունն Աստծո հետ խաթարվեց, և նրանք ընկան իրենց արդարության ու սրբության սկզբնական դիրքից: Ադամի անհնազանդության կործանարար հետևանքները չսահմանափակվեցին միայն իրենով, այլ հանգեցրին ամբողջ մարդկային ցեղի անկմանը: Թեև Աստվածաշունչը չի բացահայտում այս ճշմարտությունը պարուրող բոլոր առեղծվածները, այն հաստատում է, որ Ադամի մեղքը և հանցանքը համարվեցին կամ վերագրվեցին նրա բոլոր ժառանգներին, ինչը նշանակում է, որ բոլոր մարդիկ՝ առանց բացառության, ծնվում են Ադամի անկում ապրած բնությամբ և ցուցաբերում են նրա թշնամանքն Աստծո հանդեպ:

1. Ծննդոց 2.16,17-ում կարդում ենք Ադամին տրված պատվիրանի և զգուշացման մասին: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք բովանդակությանը, իսկ հետո պատասխանեք հետևյալ հարցերին.

   ա. *Համաձայն 16-րդ խոսքի, ի՞նչ արտոնություն Աստված տվեց Ադամին: Ինչպե՞ս է դա ապացուցում, որ Աստված հոգում էր Ադամի մասին և չէր անտեսում նրա կարիքները:*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Համաձայն 17-րդ խոսքի, Աստված ի՞նչ արգելեց Ադամին: Ի՞նչ չպետք է աներ Ադամը:*

   _____

   _____

   _____

   _____

գ. *Համաձայն 17-րդ խոսքի, ո՞րն էր լինելու Աստծո պատվիրանին չհնազանդվելու պատիժը:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ադամի անհնազանդության պատիժը լինելու էր մահը: Եվ մահը լինելու էր ոչ միայն ֆիզիկական, այլև՝ հոգևոր: Նա ընկալունակ էր դառնալու ամեն տեսակի չար ազդակների հանդեպ՝ թե՛ մարդկային, թե՛ դիվային, և անընկալունակ էր դառնալու Աստծո Անձի և կամքի հանդեպ: Մենք ավելի խորը կանդրադառնանք այս ճշմարտություններին 6-9-րդ գլուխներում:

2. Ծննդոց 3.1-6-ում գրված է աստվածաշնչյան պատմությունն այն մասին, որ Ադամն ու Եվան գայթակղվեցին և անհնազանդ եղան Աստծո պատվիրանին:

ա. *Առաջին խոսքում Սուրբ գիրքը հայտարարում է, որ Եվան գայթակղվեց իսկական օձի կողմից: Համաձայն Հայտնություն 12.9-ի և 20.2-ի, ո՞վ էր գործում այդ օձի միջոցով:*

_____

_____

_____

_____

_____

բ. *Համաձայն 4,5-րդ խոսքերի, սատանան ի՞նչ խոստացավ Եվային:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Օգտակար է մատնացույց անել այն խորամանկությունը և նրբանկատությունը, որոնցով սատանան ներկայացրեց իր փաստարկը: Առաջինը, նա խեղաթյուրեց Աստծո Խոսքը՝ Աստծո բարությունը ժխտելու համար. «Իրա՞վ Աստված ասաց, որ Պարտեզի ***ոչ մի*** ծառից չուտեք» (խս. 1): Իսկ դրանից հետո նա ժխտեց Աստծո Խոսքն անթաքույց կերպով. «Բնավ չեք մեռնի» (խս. 4): Վերջապես, նա խոստացավ Եվային, որ նա կդառնա Աստծո նման և կիմանա բարին և չարը (խս. 5):

գ. *Համաձայն 6-րդ խոսքի, ինչպե՞ս Եվան և նրա ամուսին Ադամն արձագանքեցին օձի միջոցով եկած սատանայի գայթակղությանը:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Նրանց արձագանքն ազդեցիկ կերպով պատկերում է հետևյալ զգուշացումները Սուրբ գրքից. (1) «Եթե մեկն աշխարհը սիրի, Հոր սերը նրանում չէ, որովհետև ամեն ինչ, որ աշխարհում է՝ մարմնի ցանկությունը, աչքերի ցանկությունը և այս կյանքի ամբարտավանությունը, Հորից չէ, այլ աշխարհից է» (Ա Հովհաննես 2.16) և (2) «Բայց ամեն մեկը փորձվում է բուն իր ցանկությունից հրապուրված և խաբված: Այնուհետև, որ ցանկությունը հղացած է, ծնվում է մեղք, և մեղքն էլ, երբ որ կատարվում է, մահ կծնի» (Հակոբոս 1.14,15):

3. Ադամի և Եվայի անհնազանդության անմիջական հետևանքները նկարագրված են Ծննդոց 3.7-10-ում: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք բովանդակությանը, իսկ հետո գրի առեք ձեր մտքերն ըստ հետևյալ խոսքերի: Որո՞նք էին նրանց անհնազանդության անմիջական հետևանքները:

ա. *Խոսք 7*

_____

_____

_____

_____

_____

_____

բ. *Խոսքեր 8-10*

ՆՇՈՒՄՆԵՐ. Անհնազանդության մեկ արարքի արդյունքում Ադամն ու Եվան ընկան իրենց սկզբնական արդարությունից բարոյական ապականության մեջ: Նրանց սրտերը և մտքերն այլևս մաքուր չէին. դրանք լցվեցին պղծությամբ և ամոթով: Թզենու տերևներից պատրաստված ծածկոցն իրենց մեղքը և ապականությունը թաքցնելու անհաջող փորձ էր: Մեղքը մշտապես բերում է մահ և բաժանություն Աստծուց: Մեղավոր մարդը փախչում է Աստծո սուրբ ներկայությունից և վախենում է Նրա արդար դատաստանից:

4. Մենք դիտարկեցինք Ադամի անհնազանդության անմիջական հետևանքները և այժմ կդիտարկենք աստվածային դատաստանները, որոնք եկան օձի, Եվայի և Ադամի վրա: Կարդացե՛ք Ծննդոց 3.14-24-ը, իսկ հետո նկարագրե՛ք այս դատաստանները, որոնք ազդել են մեզնից յուրաքանչյուրի վրա:

ա. *Օձի աստվածային դատաստանը (խոսքեր 14,15)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածային դատաստանը, որը եկավ օձի վրա, առաջացրեց շարունակական նվաստացում, ամոթ և անարգանք: Այս դատաստանը չի սահմանափակվում իսկական օձով, այլ հասնում է անկում ապրած հոգևոր էակին՝ սատանային, որը գործեց դրա միջոցով:

բ. *Կնոջ աստվածային դատաստանը (խս. 16)*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Դեպի քո մարդը լինի քո փափագը» արտահայտությունը կարող է նշանակել հետևյալը. (1) կնոջ հարաբերությունն իր ամուսնու հետ կբնութագրվի բուռն ձգտմամբ և բավականության պակասով, (2) կինը, որը ձգտում էր անկախ լինել Աստծուց, այժմ կունենա չափազանց ուժգին ցանկություն կամ փափագ տղամարդու հանդեպ, և (3) տղամարդու և կնոջ հարաբերությունները կոնֆլիկտային կլինեն: Կինը «ցանկանալու» է իշխել իր ամուսնուն, իսկ նրա ամուսինն իր հերթին չարաշահելու է իր իշխանությունը նրա կյանքում:

գ. *Տղամարդու աստվածային դատաստանը (խս. 16)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն դատաստանը, որը եկավ տղամարդու վրա, կարելի է ամփոփել երեք բառով. տանջանք, ունայնություն և մահ: Այդ ժամանակվանից բոլոր սերունդներում տղամարդը գտնվում է այս ծանր դրության մեջ: Նույնիսկ ամենից ազդեցիկ և հարուստ տղամարդիկ չեն կարողացել խուսափել այս դատաստանից: Անկախ նրանց սխրանքներից, բոլորն էլ ցած են դրել իրենց գլուխները մահվան պատճառով և կորցրել են այն ամենը, ինչ ձեռք են բերել:

5. Թեև Ադամի ու Եվայի պատմությունն ավելի քան ողբերգական է, այն չի ավարտվում անհուսությամբ: Ծննդոց 3.15-ում՝ օձի աստվածային դատաստանի նկարագրության մեջ, գտնվում է փրկության մեծագույն խոստումներից մեկը ամբողջ Աստվածաշնչում: Շատ աստվածաբաններ անվանում են այն ***«պրոտոեվանգելիում»*** (լատիներեն ***«պրոտո»*** = առաջին + ***«եվանգելիում»*** = Ավետարան): Մտորե՛ք այս խոսքի շուրջ, իսկ հետո բնութագրե՛ք և բացատրե՛ք դատաստանի նկարագրության մեջ գտնվող այս խոստումը:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուս Քրիստոսը կնոջ՝ Մարիամի սերունդը կամ «սերմն» է: Խաչի վրա սատանան խայթեց Քրիստոսի կրունկը (այսինքն, Քրիստոսը խոցվեց, բայց ոչ՝ մահացու կերպով. Նա հարություն առավ մեռելներից): Այնուամենայնիվ, նույն խաչի միջոցով Քրիստոսը ջախջախեց սատանայի գլուխը (այսինքն, սատանան մահացու կերպով վիրավորվեց. նա հավիտյան պարտվեց): Կարդացե՛ք նաև Մատթեոս 12.29, Մարկոս 1.24, Ղուկաս 10.18, Հովհաննես 12.31, 16.11, Ա Կորնթացիների 15.24, Կողոսացիների 2.15, Եբրայեցիների 2.14, Ա Հովհաննես 3.8:

Գլուխ 3. Կարևոր հարցեր անկման մասին

Աստվածաշնչյան պատմությունն Ադամի անկման մասին՝ մարդու ներկա անկում ապրած վիճակի և մեզ շրջապատող չարիքի միակ պատշաճ բացատրությունն է: Բացի այդ, այս խավար ետին պլանի վրա է, որ հայտնվում են Աստծո փառավոր ողորմությունը և շնորհքը: Միայն այն չափով, որով մենք հասկանում ենք Ադամի ողբերգությունը և նրա դատապարտությունը, կարող ենք պատկերացում կազմել Քրիստոսի փառավոր Անձի և Ավետարանի մասին:

Ուսումնասիրելով մարդու անկումը՝ մենք հանդիպում ենք Աստվածաշնչում գտնվող անչափ կարևոր և բարդ աստվածաբանական հասկացությունների. չարի ծագումը, մարդու ազատության բնույթը, Աստծո գերիշխանությունը և Նրա հավիտենական նպատակը: Թեև մեր գիտելիքն այս հարցերի մասին երբեք լիարժեք չի լինի և մշտապես ծածկված կլինի գաղտնիքի շղարշով, անհրաժեշտ է, որ մենք ջանանք իմանալ այն, ինչ կարող ենք: Ստորև կանդրադառնանք հետևյալ հարցերին: ***Առաջինը***՝ ինչպե՞ս Ադամը, որն արդար և սուրբ էակ էր, կարող էր ընկնել: ***Երկրորդը***՝ արդյո՞ք Աստված էր սահմանել անկումը: ***Երրորդը***՝ ո՞րն է Աստծո հավիտենական նպատակն անկման մեջ:

ԻՆՉՊԵ՞Ս ԱԴԱՄԸ ԿԱՐՈՂ ԷՐ ԸՆԿՆԵԼ

Սուրբ գիրքը հաստատում է, որ անկումը տեղի չունեցավ Արարչի մեղավորությամբ: Աստծո բոլոր գործերը կատարյալ են (տե՛ս Երկր. Օր. 32.4): Նա չի կարող գայթակղվել մեղքով, և Նա չի գայթակղեցնում մեղքով ոչ ոքի (տե՛ս Հակոբ. 1.13): Անկման մեղավորությունը միմիայն Ադամինն է: Ինչպես գրված է Ժողովող 7.29-ում. «Սակայն ահա սա գտել եմ, որ Աստված մարդուն ուղիղ է ստեղծել, բայց նրանք շատ հնարներ են որոնել»:

Այս ճշմարտությունից բխում է Սուրբ գրքի մեծագույն աստվածաբանական խնդիրներից մեկը. ինչպե՞ս է հնարավոր, որ Աստծո պատկերով ստեղծված էակն ընտրի չարիքը և մեղքը: Ադամն ու Եվան ճշմարիտ հակվածություն ունեին դեպի բարին, և նրանցում չկար որևէ արատավոր կամ չար բան, ինչի համար գայթակղությունը գրավիչ կթվար: Ինչպե՞ս նման արդար էակները կարող էին գերադասել չարը բարուց, և օձի խոսքերը՝ իրենց Արարչի պատվիրաններից: Սա վեր է մարդկային ըմբռնումից:

Պատմության ընթացքում եղել են Ադամի անկումը բացատրելու բազմաթիվ փորձեր, սակայն բոլորն էլ սահմանափակ են եղել: Այդ իսկ պատճառով, մենք պետք է բավարարվենք Աստվածաշնչի այն պարզ ճշմարտությամբ, որ թեև Աստված արդար և սուրբ ստեղծեց մարդուն, նա սահմանափակ և անհաստատ (այսինքն՝ փոփոխության ենթակա) էր և ի վիճակի էր որոշում կայացնել հակառակ Աստծո կամքին:

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾ ԷՐ ՍԱՀՄԱՆԵԼ ԱՆԿՈՒՄԸ

«Սահմանել» բառը նշանակում է «որոշել, կազմակերպել կամ կարգել»: Այսպիսով, հարցնելով, թե արդյո՞ք Աստված էր սահմանել անկումը, մենք նկատի ունենք, թե արդյո՞ք Նա էր որոշել, կազմակերպել և կարգել այն: Նման իմաստ ունեցող այլ բառերի թվում են «վճռել», «կանխորոշել», «նախասահմանել»: Արդյո՞ք Աստված նախապես վճռել էր, որ անկումը պետք է տեղի ունենար: Այս հարցի պատասխանն է՝ «այո», բայց մենք պետք է շատ ուշադիր լինենք, որպեսզի հասկանանք, թե ինչ է դա նշանակում և ինչ դա չի նշանակում:

Այն, որ Աստված է սահմանել անկումը, չի նշանակում, որ Նա հարկադրեց սատանային գայթակղեցնել մեր նախածնողներին, կամ որ Նա դրդեց Ադամին և Եվային անտեսել Իր պատվիրանը: Աստծո արարած-

ները հոժարակամ արեցին այն, ինչ արեցին: Աստված սուրբ, արդար և բարի է: Նա մեղքի հեղինակը չէ, և Նա չի մեղանչում. Նա չի կարող գայթակղվել մեղքով, և Նա չի գայթակղեցնում մեղքով ոչ ոքի:

Այն, որ Աստված է սահմանել անկումը, ***նշանակում է***, որ այն անպայման տեղի էր ունենալու: Աստծո կամքն էր, որ Ադամը փորձվեր, և Աստծո կամքն էր թույլ տալ Ադամին թե՛ կանգուն մնալ, թե՛ անկում ապրել ինքնուրույն՝ առանց աստվածային օգնության, որը կարող էր կանխել նրա անկումը: Աստված կարող էր թույլ չտալ սատանային գայթակղեցնել Եվային, կամ կարող էր հատուկ շնորհք տալ Ադամին, որը կպահպաներ նրան՝ նման գայթակղությանը դիմանալու և այն հաղթահարելու համար: Այնուամենայնիվ, մենք հասկանում ենք աստվածաշնչյան պատումից, որ Նա այդպես չվարվեց:

Ի վերջո, այն, որ Աստված է սահմանել անկումը, ***նշանակում է***, որ այն Իր հավիտենական ծրագրի մասն էր: Մինչև այս աշխարհի հիմնադրումը, մինչև որ արարվեցին Ադամը, Եվան և օձը, որը գայթակղեցրեց նրանց, մինչև ցանկացած պարտեզի և ցանկացած ծառի գոյությունը, Աստված սահմանեց անկումն Իր փառքի և Իր արարչագործության մեծագույն բարիքի համար: Այնպես չէր, որ Նա թույլ տվեց մեր նախածնողներին գայթակղվել, իսկ հետո արձագանքեց նրանց կատարած ընտրությանը: Այնպես չէր, որ Նա բարձրացրեց ժամանակի քողը և տեսավ անկումը: Փոխարենը, անկումը մշտապես Աստծո հավիտենական ծրագրի մասն էր, և Նա կանխորոշել կամ նախասահմանել էր, որ այն պետք է տեղի ունենար և տեղի էր ունենալու: Նման պնդումից անմիջապես առաջանում է հետևյալ հարցը.

«Արդյո՞ք Աստված մեղքի հեղինակն է»:

Այս հարցին կարելի է և պետք է խիստ ***բացասական*** պատասխան տալ: Աստված մեղքի հեղինակը չէ, և Նա չի դրդում մարդկանց մեղանչել Իր դեմ: Թեև Նա կանխորոշեց, որ անկումը պետք է տեղի ունենար և տեղի էր ունենալու, Նա նույնպես կանխորոշեց, որ այն տեղի էր ունենալու սատանայի, Ադամի և Եվայի գիտակցաբար արված գործողությունների արդյունքում: Մեր սահմանափակ մտքերը չեն կարող լիովին ընկալել, թե ինչպես Աստված կարող է լիակատար գերիշխանություն ունենալ ամեն մի պատմական իրադարձության վրա և յուրաքանչյուր մարդու ամեն մի գործողության վրա՝ առանց սահմանափակելու մարդկային ազատությունը: Այնուամենայնիվ, Աստվածաշնչում կան բազմաթիվ օրինակներ, որոնք վկայում են այս մասին: Հովսեփը ստրկության վաճառվեց իր եղբայրների դիտավորյալ գործած մեղքի արդյունքում, սակայն այս պատմության վերջում նա հայտարարեց. «Եվ թեպետ դուք ինձ դեմ չարություն խորհեցիք, ***բայց Աստված այն լավի դարձնել խորհեց***, որ աներ այսօրվա եղածի պես, այսինքն, որ շատ ժողովուրդ ապրեցներ» (Ծննդոց 50.20): Աստծո Որդին խաչվեց մարդկանց դիտավորյալ գործած մեղքի արդյունքում, սակայն Աստված որոշել էր Քրիստոսի մահը աշխարհի սկզբից առաջ:

> *«Նրան, որ Աստծո սահմանված խորհրդով և կանխագիտությամբ մատնված էր, առաք, անօրենների ձեռքով փայտի վրա բևեռած՝ սպանեցիք» (Գործք 2.23):*

> *«Որովհետև արդարև հավաքվեցին Քո սուրբ Որդի Հիսուսի վրա, Որին օծեցիր, Հերովդեսը և Պոնտացի Պիղատոսը՝ հեթանոսների հետ և Իսրայելի ժողովուրդների հետ, որ անեն, ինչ որ Քո ձեռքը և կամքն առաջուց սահմանեց լինելու» (Գործք 4.27,28):*

Մենք տեսնում ենք Աստվածաշնչում, որ Աստված սահմանում է որոշ իրադարձություններ, իսկ հետո ի կատար է ածում դրանք մարդկանց դիտավորյալ գործած մեղքի միջոցով, թեև Ինքն այդ մեղքի հեղինակը չէ, և ո՛չ էլ դրդել է մարդկանց գործել այն՝ իրենց կամքին հակառակ: Անաստված մարդիկ դիտավորյալ խաչին գամեցին Հիսուս Քրիստոսին և պատասխանատու էին իրենց արարքների համար, սակայն ամբողջ այդ իրադարձությունը տեղի ունեցավ համաձայն Աստծո կանխորոշված ծրագրի: Սատանայի անկումը և հետագայում մարդկային ցեղի անկումն այդ արարածների մեղքի հետևանքն էին, որի համար պա-

տասխանատու էին միմիայն իրենք, սակայն այդ իրադարձությունները տեղի ունեցան համաձայն Աստծո վճռված, կանխորոշված և նախասահմանված կամքի: Աստված ունի մեծ, հավիտենական նպատակ Իր արարչագործության համար, և Նա որոշել է ամեն մի իրադարձությունը պատմության մեջ, որի միջոցով այդ նպատակն իրագործվելու է: Ոչինչ, նույնիսկ մարդու անկումը և Աստծո Որդու մահը տեղի չի ունենում առանց Աստծո գերագույն վճռի:

> *«Ո՜վ Աստծո մեծության և իմաստության և գիտության խորությունը. ինչպե՜ս անքննելի են Նրա դատաստանները, և անհասկանալի են Նրա ճանապարհները: Որովհետև ո՞վ իմացավ Տիրոջ միտքը, կամ ո՞վ եղավ Նրա խորհրդակից: Կամ ո՞վ Նրան առաջուց մի բան տվեց, որ Նրա հատուցումն առնի Նրանից: Որովհետև Նրանից և Նրանով և դեպի Նա է ամեն բան. Նրան փա՜ռք հավիտյան, ամեն» (Հռոմեացիների 11.33-36):*

Ո՞ՐՆ Է ԱՍՏԾՈ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ԱՆԿՄԱՆ ՄԵՋ

Մենք ցույց տվեցինք, որ անկումը տեղի ունեցավ ստեղծվածների դիտավորյալ անհնազանդության արդյունքում, բայց այն նույնպես համապատասխանում էր Աստծո հավիտենական նպատակին: Այժմ անհրաժեշտ է իմանալ, թե որն է այդ նպատակը: Հաշվի առնելով անկումից բխող չարիքը և տառապանքները, միգուցե դժվար լինի ընդունել, որ այն կարող էր որևէ բարի նպատակ ունենալ: Այնուամենայնիվ, Աստծո վճիռը հավաստիացնում է մեզ, որ այդպիսի նպատակ կա:

Մենք գիտենք Սուրբ գրքից, որ տիեզերքի արարումը, մարդու անկումը, Իսրայելի ժողովուրդը, Քրիստոսի խաչը, Եկեղեցին և ազգերի դատաստանն ունեն մեկ մեծ և համընդհանուր նպատակ՝ այն, որ Աստծո հատկանիշներն ամբողջովին հայտնվեն Իր ստեղծագործությանը, որպեսզի նրանք ճանաչեն Նրան, փառավորեն Նրան և լիովին վայելեն Նրան՝ որպես Աստված:

Աստծո Հատկանիշների Ամբողջական Հայտնությունը

Աստված ստեղծեց տիեզերքը՝ որպես թատրոն, որում Նա ցուցադրելու էր Իր Անձի և հատկանիշների անսահման փառքը, որպեսզի Իր ստեղծագործությունը լիովին ճանաչեր, երկրպագեր և վայելեր Իրեն: Շատերն են ասել, որ մարդու անկումն այն խավար երկինքն է, որում Աստծո հատկանիշների աստղերը շողում են փառքի մեծագույն լույսով: Աստծո բնավորության լիությունը կարելի է ճշմարտապես ճանաչել միայն մարդու անկման և չարի երևան գալու միջոցով:

Երբ քրիստոնյան երկրպագում է Աստծուն, որո՞նք են այն հատկանիշները, որ ամենից թանկ են նրա համար: Միանշանակ՝ Աստծո ողորմությունը, շնորհքը և անպայմանական սերը: Մի՞թե այս աստվածային հատկանիշները չեն ամենից շատ մեծարվում Եկեղեցու բոլոր հայտնի հիմներում: Այնուամենայնիվ, ինչպե՞ս այս հատկանիշները կարող էին ճանաչվել, եթե չլիներ մարդու անկումը: Անպայմանական սերը կարող է ցուցաբերվել միայն այնպիսի մարդկանց, որոնք չեն համապատասխանում սիրված լինելու չափանիշներին: Ողորմությունը կարող է տեղալ Աստծո գահից միայն այնպիսի մարդկանց վրա, որոնք արժանի են դատապարտության: Շնորհքը կարող է տրվել միայն այնպիսի մարդկանց, որոնք ոչինչ չեն արել՝ այն վաստակելու համար: Մեր անկում ապրած վիճակը մեր իսկ արարքների հետևանքն է, և մենք պարտավոր ենք լիարժեք պատասխանատվություն ստանձնել դրա համար: Այնուամենայնիվ, մեր անկում ապրած վիճակի խավար թատրոնի միջոցով է, որ Աստծո շնորհքը և ողորմությունը կանգնում են գլխավոր բեմի վրա և շողում են և՛ մարդկանցից, և՛ հրեշտակներից բաղկացած հանդիսատեսի առջև: Անկում ապրած մարդու փրկությամբ է հայտնվում Աստծո իմաստությունը, շնորհքը և ողորմությունը, ոչ միայն մարդկանց, այլև մյուս բոլոր արարված էակներին երկնքում, երկրի վրա և դժոխքում (տե՛ս Եփես. 2.7, 3.10):

Քրիստոսի Աքանչելիքների Ամբողջական Հայտնությունը

Աստծո մեծագույն աշխատանքն Աստծո Որդու մահն է և հարությունը՝ Աստծո ժողովրդի փրկության համար: Այնուամենայնիվ, եթե չլիներ մարդու անկումը, չէր լինի Գողգոթան և չէր լինի Փրկիչը: Այն, ինչն այժմ ամենից պարզորեն է ներկայացնում, թե ինչպիսին է Աստված (տե՛ս Ա Հովհ. 4.10,19), անհայտ կլիներ մեզ: Ի՞նչը կզբաղեցներ դրա տեղը: Ուրիշ ի՞նչ միջոց կարող էր օգտագործվել՝ ցույց տալու համար Աստծո անսահման ողորմությունը: Խաչված Քրիստոսը ամեն մի արժեքավոր քրիստոնեական հիմնի, քարոզի, զրույցի և մտքի մեծագույն թեման է: Առանց անկման, փրկագնումն անհայտ կլիներ մեզ համար: Մենք կլինեինք նման հրեշտակների, այսինքն՝ կցանկանայինք թափանցել այն բանի մեջ, ինչը երբեք չէինք կարողանա վերապրել և երբեք չէինք վերապրի (տե՛ս Ա Պետր. 1.12):

Սխալ է և գրեթե հայհոյություն է նույնիսկ ակնարկելը, որ Քրիստոսի խաչն ընդամենը պահուստային ծրագիր էր, որը գործադրվեց միայն, որովհետև Ադամը սխալ որոշում կայացրեց պարտեզում: Խաչն այն գլխավոր իրադարձությունն է, որին մատնացույց է անում Աստծո նախախնամության յուրաքանչյուր գործ: Ամեն ինչ գտնվում է դրա շուքի ներքո: Ինչ-որ իմաստով, խաչն անհրաժեշտ էր անկման պատճառով. այնուամենայնիվ, այլ իմաստով, անհրաժեշտ էր անկումը, որպեսզի Աստծո սքանչելիքները լիովին հայտնվեին Քրիստոսի խաչի միջոցով:

Արարչագործության Կախվածության Ամբողջական Հայտնությունը

Ամենից երկյուղածություն ներշնչող և խոնարհեցնող ճշմարտություններից մեկն Աստծո մասին այն է, որ Նա ընդհանրապես չունի ոչ մի կարիք և կախված չէ ոչ ոքից: Նրա գոյությունը, Նրա կամքի կատարումը և Նրա բարեհաճությունը կախված չեն ոչ ոքից և ոչ մի բանից՝ Իրենից դուրս: Նա միակ Էակն է, որը ճշմարտապես ինքնագո, ինքնապահպան, ինքնաբավ, անկախ և ազատ է: Մնացած բոլոր էակները ստանում են իրենց կյանքը և օրհնություններն Աստծուց, իսկ այն ամենը, ինչ անհրաժեշտ է Աստծո գոյության և կատարյալ երջանկության համար, գտնվում է Իրենում:

Որպեսզի տիեզերքը գոյություն ունենա, անհրաժեշտ է ոչ միայն արարչագործության սկզբնական աշխատանքը, այլև Աստծո շարունակական զորությունը՝ այն պահպանելու համար: Եթե մենք թեկուզ մեկ ակնթարթ հեռացնեինք Նրա զորությունը, ամեն ինչ կվերածվեր խառնաշփոթի և կործանման: Նույն այս ճշմարտությունը կարող է վերաբերել բարոյական էակների հատկանիշներին՝ թե՛ հրեշտակների, թե՛ մարդկանց: Թեև Ադամը Եդեմում և սատանան Երկնքում արդար և սուրբ էին ստեղծված, նրանք չկարողացան դիմանալ՝ առանց Ամենակարող Աստծո պահպանող շնորհքի: Որքա՞ն ավելի քիչ է մեր կանգուն լինելու կարողությունը, և որքա՞ն ավելի արագ մենք կընկնենք՝ առանց Նրա պահպանող շնորհքի: Այդ իսկ պատճառով, անկումը մեծագույն օրինակն է այն մասին, որ Աստված մշտապես պետք է մեզ: Եթե մենք անկարող ենք գոյատևել մինչև մեր հաջորդ շունչը՝ առանց Աստծո պահպանության, ապա առավել ևս անկարող ենք պահպանել մեր արդար դիրքը Նրա առջև՝ առանց Նրա շնորհքի:

Գլուխ 4. Մարդկության անկումը

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Աստվածաշունչը հաստատում է, որ գոյություն ունի երեք կարևոր ճշմարտություն Ադամի անկման և ամբողջ մարդկային ցեղի վրա դրա կործանարար ազդեցության մասին: Առանց այս ճշմարտությունների անկարելի է բացատրել մարդկության բարոյական ապականությունը և չարի համընդհանուր գոյությունը այս աշխարհում, որը բարի է ստեղծվել: Այս հիմնարար ճշմարտությունները ներկայացված են ստորև:

1. **Աստված դարձրեց Ադամին ամբողջ մարդկային ցեղի ներկայացուցիչը (գլուխը)**: Որպես գլուխ՝ Ադամը վարվում էր ամբողջ մարդկության անունից, և նրա գործողությունների հետևանքներն ազդեցին բոլորիս վրա:

2. **Աստված վերագրեց Ադամի մեղքը բոլոր մարդկանց**: «Վերագրել» կամ «վերագրում» բառերը լատիներենում «իմպուտարե» բայն է, որը նշանակում է «համարել, հաշվի առնել, վերաբերել կամ գրել ինչ-որ մեկի հաշվին»: Անկման վերաբերյալ սա նշանակում է, որ Աստված համարեց կամ գրեց Ադամի մեղքը յուրաքանչյուր մարդու հաշվին: Մարդիկ իրենց ծնվելու պահից դիտվում են որպես մեղավորներ և համարվում են այդպիսիք՝ Ադամի մեղքի պատճառով: Մարդիկ կրում են Ադամի մեղքի հանցանքը և պատիժը:

3. **Աստված մատնեց մարդկանց բարոյական ապականության**: Ադամի մեղքի պատիժը ոչ միայն մահն էր, այլև բարոյական ապականությունը: Նա ընկավ արդարության սկզբնական դիրքից և բարոյապես ապականված արարած դարձավ: Քանի որ մարդիկ կրում են Ադամի մեղքի հանցանքը, նրանք նույնպես կրում են դրա պատիժը՝ մահը և բարոյական ապականությունը: Ադամի ժառանգներից յուրաքանչյուրը ծնվում է՝ ամբողջովին հակված դեպի չարը և թշնամացած Աստծո դեմ:

ԱՆԺԽՏԵԼԻ ՓԱՍՏ ԵՎ ԱՆԲԱՑԱՏՐԵԼԻ ԱՌԵՂԾՎԱԾ

Մարդկության անկումն Ադամի անկման մեջ մշտապես պարուրված կլինի խորհրդավորության շղարշով: Մարդկության անկումը քրիստոնեության մեծագույն և կարևորագույն վարդապետություններից մեկն է, որի ճշմարտացիությունը պարզորեն հաստատվում է Սուրբ գրքի կողմից, և որը տալիս է մարդկության համընդհանուր բարոյական ապականության միակ ողջամիտ բացատրությունը: Միևնույն ժամանակ, թեև հաստատելով այդ վարդապետությունը, Սուրբ գիրքը գրեթե չի բացատրում, թե ինչպես է դա հնարավոր, և որևէ կերպով չի պատասխանում հաճախակի մեղադրանքներին այն մասին, որ դա անազնիվ և անարդար է: Մի՞թե արդար է, որ Աստված վերագրի Ադամի մեղքը և հանցանքը ամբողջ մարդկությանը: Արժե մտածել հետևյալ կետերի մասին:

1. **Որևէ վարդապետության ճշմարտացիությունը չի վավերացվում այն մեր մտքում ընկալելու կամ համաձայնեցնելու կարողությամբ և չի ժխտվում, եթե մենք անկարող ենք անել դա:** Եթե այդպես լիներ, քրիստոնեական վարդապետություն որպես այդպիսին գոյություն չէր ունենա, քանի որ գոյություն չունի այնպիսի հայտնված սուրբգրային ճշմարտություն, որը խորհրդավորության տարր չի պարունակում: Երկրորդ Օրինաց 29.29-ում Սուրբ գիրքը հայտարարում է. «Ծածուկ բաները մեր Տեր Աստծո համար են, բայց հայտնված բաները՝ մեզ և մեր որդիների համար հավիտյան, որ այս Օրենքի բոլոր խոսքերը կատարենք»: Սա հրաշալի աստվածաշնչյան խոստում է այն մասին, որ ճշմարտությունը, որին մենք

հավատում ենք նույնիսկ լիովին չհասկանալով, մեկ օր կիմացվի մեր կողմից, և որ անորոշության ու կասկածի շուքը, որը դեռ մնում է, կանհայտանա Աստծո ամբողջական հայտնության լույսի ներքո: Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ՝ դեմ առ դեմ: Հիմա փոքրիշատե եմ տեղյակ, բայց այն ժամանակ այնպես կգիտենամ, ինչպես գիտեցված եմ» (Ա Կորնթացիների 13.12):

2. **Ամբողջ Սուրբ գրքում Աստված այնպես է ապացուցել Իր կատարյալ արդարադատությունը մարդկանց հետ վարվելիս, որ ցանկացած մեղադրանք հակառակի մեջ արժանանում է խիստ հանդիմանության**: «Որովհետև Աստված մարդուց մեծ է: Ինչո՞ւ համար ես վիճում Նրա հետ, որ Իր բոլոր գործերի համար պատասխան չի տա» (Հոբ 33.12բ,13): «Բայց դու ո՞վ ես, մարդ, որ Աստծո դեմ պատասխան ես տալիս» (Հռոմեացիների 9.20ա): Եթե ***Աստված*** ստեղծել է Ադամին՝ որպես մարդկային ցեղի գլուխ, և վերագրել է նրա մեղքը ամբողջ մարդկությանը, դա ***պետք է որ*** լինի և՛ արդար, և՛ ազնիվ: Աստված ունի որոշումներ կայացնելու և գործելու աստվածային իրավունք՝ ըստ Իր բարեհաճության:

3. **Այն, որ Աստված թույլ տվեց մեկ մարդու փորձվել բոլոր մարդկանց փոխարեն, շնորհքի մեծ արտահայտում էր**: Ադամն ամբողջ մարդկային ցեղի ամենից հարմար և ունակ ներկայացուցիչն էր, և նա ապրում էր մի վայրում, որն աղոտոտված չէր ներկայումս իշխող մեղքով և ապականությամբ: Աստված ընտրեց մեծագույն և ազնվագույն մարդուն՝ բոլորիս փոխարեն կանգնելու համար:

4. **Սուրբ գրքի, մարդկային պատմության և խղճի ներքին վկայությունները խոսում են այն մասին, որ Ադամի ցեղից ցանկացած այլ անձնավորություն ավելի լավ չէր վարվի Ադամի փոխարեն, քան ինքը Ադամը:**

5. **Յուրաքանչյուրը Ադամի ցեղից հնարավորության դեպքում հոժարակամ մասնակցում է Ադամի ապստամբությանը Աստծո դեմ և դրանով ապացուցում է, որ Աստված արդարացիորեն է դատապարտում իրեն**:

6. **Եթե սխալ և անարդար է, որ Աստված դատապարտում է ամբողջ մարդկային ցեղը մեկ մարդու՝ Ադամի անկման միջոցով, ապա հավասարապես սխալ է, որ Աստված փրկում է Իր ժողովրդին (այսինքն՝ փրկագնվածներին) մեկ Մարդու՝ Հիսուս Քրիստոսի հնազանդության միջոցով**: Եթե Աստված չի կարող արդարացիորեն վերագրել Ադամի մեղքը մարդկությանը, նշանակում է՝ Նա չի կարող արդարացիորեն վերագրել մարդկանց մեղքերը Քրիստոսին, և Քրիստոսի արդարությունը՝ մարդկանց:

ՄԵՐ ԱՆԿՈՒՄՆ ԱԴԱՄԻ ՄԵՋ

«Բոլոր մարդիկ ծնված են մեղքի մեջ» պնդումը նշանակում է, որ Աստված վերագրել է Ադամի մեղքը և հանցանքը նրա ժառանգներից յուրաքանչյուրին: Կարևոր է նշել, որ սա ինչ-որ աստվածաբանական ենթադրություն կամ փիլիսոփայական տեսություն չէ: Սա պարզ սուրբգրային ուսմունք է, որը վավերացվում է մարդկային պատմության ամեն մի էջի և յուրաքանչյուր մարդու կողմից:

Հռոմեացիների 5.12-19-ում գտնում ենք Սուրբ գրքի ամենակարևոր քննախոսությունը Ադամի անկման և նրա մեղքը ամբողջ մարդկային ցեղին վերագրելու մասին: Այդ իսկ պատճառով, արժե որոշ ժամանակ տրամադրել այն ուսումնասիրելու համար: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո կատարե՛ք ստորև նշված առաջադրանքները:

1. Կրկին կարդացե՛ք Հռոմեացիների 5.12-ը: Ցո՛ւյց տվեք այս խոսքում հայտնված ճշմարտությունները:

   ա. *Մեկ Մ_____ միջոցով մեղքը Մ_____ այս աշխարհ:* Աստվածաշունչը հաստատում է, որ Աստված ամեն ինչ «բարի» ստեղծեց (տե՛ս Ծննդ. 1.31): Աստվածաշնչյան բացատրությունն այն մա-

սին, որ Աստծո բարի աշխարհում մեղք կա, այն է, որ այն մտավ կամ ներխուժեց մեկ մարդու՝ Ադամի անհնազանդության միջոցով:

բ. *Եվ մեղքով էլ Մ_____:* Մեղքը մտավ այս աշխարհ Ադամի առաջին անհնազանդ արարքի միջոցով, իսկ մահը մտավ այս աշխարհ մեղքի միջոցով՝ որպես իրադարձությունների կործանարար շղթա: Անչափ կարևոր է նշել, որ մահը մուտք չգործեց այս աշխարհ որպես մեղքի «բնական հետևանք», այլ՝ որպես մեղքի աստվածային պատիժ: Մահը մեղքի պատիժը կամ վարձատրությունն է (տե՛ս Ծննդ. 2.17, Եզեկ. 18.4, Հռոմ. 6.23):

գ. *Եվ այսպես մահը բոլոր մարդկանց վրա Տ_____:* Պողոսը բացատրում է, թե ինչպես մեղքը մուտք գործեց Աստծո կողմից արարված աշխարհը, և շարունակում է՝ հաստատելով այն, ինչ հայտնի է բոլորիս. մահը տարածվեց բոլոր մարդկանց վրա: Կյանքն այս աշխարհում անխուսափելիորեն ավարտվում է մահով:

դ. *Քանի որ ամենը Մ_____:* Պողոսի բացատրությունն այն մասին, թե ինչպես մեղքը տարածվեց բոլոր մարդկանց վրա, հակիրճ է, բայց ազդեցիկ է: Մահը մեղքի պատիժը կամ վարձատրությունն է (տե՛ս Հռոմ. 6.23), և մահը տարածվեց բոլոր մարդկանց վրա, քանի որ «ամենը մեղանչեցին»: «Մեղանչել» բառը գրված է հունարեն աորիստ ժամանակաձևով, որն ամենից հաճախ օգտագործվում է՝ նկարագրելու համար ակնթարթային գործողություն անցյալում կամ եզակի իրադարձություն պատմության մեջ: Այս դեպքում այն պատմական իրադարձությունը, որի մասին Պողոսը խոսում է, Ադամի մեղքը և անկումն է: Հաշվի առնելով քերականությունը և համատեքստը (այսինքն՝ հաջորդ խոսքերը), այս արտահայտությունը չի նշանակում, որ մեղքը տարածվեց բոլոր մարդկանց վրա այն պատճառով, որ մարդիկ անձամբ «մեղանչում են» կամ «մեղանչել են». փոխարենը այն նշանակում է, որ մեղքը տարածվել է բոլոր մարդկանց վրա, քանի որ «ամենը մեղանչեցին» այն պատմական պահին պարտեզում, երբ մեղանչեց Ադամը: Ադամի մեղքի միջոցով բոլորը «մեղավոր եղան» (խս. 19): Այս պատճառով, մեղքի պատիժը տարածվեց բոլոր մարդկանց վրա, նույնիսկ՝ նորածինների, նաև նրանց, ովքեր մահանում են՝ առանց անձամբ մեղանչելու:

ե. *Բացատրե՛ք այս խոսքի իմաստը ձեր բառերով:*

_____

_____

_____

_____

_____

_____

2. Կրկին կարդացե՛ք Հռոմեացիների 5.13,14-ը: Ամփոփե՛ք այս հատվածի իմաստը ձեր բառերով:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը գրված է որպես այն փաստի ապացույց, որ Ադամի մեջ բոլորը «մեղավորներ եղան»: Այս հատվածի տրամաբանությունը շատ պարզ է: (1) Համաձայն Սուրբ գրքի (տե՛ս Հռոմ. 6.23), մահը մեղքի վարձատրությունն է կամ Աստծո օրենքը խախտելու պատիժը. մահանում են միայն մեղավորները կամ օրինազանցները: (2) Այնուամենայնիվ, անթիվ մարդիկ մահացան մինչև Մովսեսի օրենքը տրվելը, և անթիվ նորածիններ մահացել են որովայնում, թեև նրանք երբեք անձամբ չէին մեղանչել կամ խախտել Աստծո օրենքը: (3) Այն մարդկանց մահը, ովքեր անձամբ երբեք չէին մեղանչել «Ադամի մեղքի նման», կարող է միայն բացատրվել այն փաստով, որ նրանց վերագրվել է Ադամի մեղքը, և այդ պատճառով նրանք «մեղավորներ» են համարվում Ադամի մեջ:

3. Կրկին կարդացե՛ք Հռոմեացիների 5.15-17-ը: Ցո՛ւյց տվեք այս հատվածում հայտնված ճշմարտությունները:

   ա. *Մեկի Հ_____ շատերը մահացան (խս. 15):* «Շատերը» Ադամից ծնված մարդկության հոծ զանգվածն է: Կրկին, Պողոսը ցույց է տալիս, որ մահը, որը ճաշակեցին բոլորը, մեկ մարդու՝ Ադամի մեղքի արդյունքն է: Նրա հանցանքով շատերը «մեղանչեցին» (5.12), և այդ պատճառով «շատերը» մահացան:

   բ. *Դատաստանն այն մեկ մեղքից դեպի Դ_____ Տ_____ (խս. 16):* «Դատաստան» բառը վերաբերում է դատական պատժին, որոշմանը կամ վճռին: «Դատապարտություն» բառը վերաբերում է հանցավոր ճանաչելուն կամ մեղադրական դատավճռին: Ադամի անօրինությունը հանգեցրեց նրա դատաստանին, իսկ նրա դատաստանը հանգեցրեց նրա դատապարտությանը: Նրա հանցանքի պատիժը մահն էր: Այս դատապարտությունը և դրա պատիժը վերագրվել են բոլոր մարդկանց, քանի որ Ադամի մեջ «ամենը մեղանչեցին»:

   գ. *Մեկի մեղքով Մ_____ թագավորեց այն մեկի ձեռքով (խս. 17):* Ադամի գործած մեկ մեղքի միջոցով մահը բացարձակ իշխանություն ստացավ բոլոր մարդկանց վրա (այսինքն՝ բոլոր մարդիկ մահանում են): Ադամի մեղքը վերագրվեց բոլոր մարդկանց, և այդ պատճառով բոլորը «մեղավորներ» են համարվում: Որպես մեղավորներ՝ բոլոր մարդիկ ենթակա են աստվածային դատաստանի, որը մահն է:

   դ. *Բացատրե՛ք այս երեք աստվածաշնչյան պնդումների իմաստը ձեր բառերով:*

   _____

   _____

   _____

   _____

_____

_____

_____

_____

4. Կրկին կարդացե՛ք Հռոմեացիների 5.18,19-ը: Ցո՛ւյց տվեք այս հատվածում հայտնված ճշմարտությունները:

ա. *Մեկի հանցանքով բոլոր մարդկանց վրա Դ_____ եկավ (խս. 18):* Այս պնդումը պարզապես ամփոփում է այն, ինչ արդեն ասվեց 12-17-րդ խոսքերում: Ադամի հանցանքով բոլոր մարդիկ մեղավորներ եղան (խոսքեր 12,19), դատապարտվեցին (խս. 16) և մահվան ենթակա դարձան (խոսքեր 12,14,15,17):

բ. *Մեկ մարդու Ա_____ շատերը մեղավորներ եղան (խս. 19):* «Եղան» բառը թարգմանված է հունարեն ***«կաթիստե՛մի»*** բառից, որը նշանակում է «սահմանվել, հայտարարվել կամ նշանակվել»: Ադամի անհնազանդության արդյունքում այժմ բոլոր մարդիկ մեղավոր են համարվում: Կարևոր է նշել այն, ինչ Պողոս առաքյալը ***չի*** ասում: Նա չի ասում, որ Ադամի մեղքի արդյունքում շատերը դարձան մեղանչական (այսինքն՝ ծնված մեղավոր բնությամբ), ինչն իր հերթին դրդելու էր նրանց ապրել մեղքի մեջ և կրել մահվան դատապարտությունը: Փոխարենը, Պողոսը պնդում է, որ շատերը ***մեղավորներ*** եղան և հայտնվեցին մահվան պատժի ներքո նույնիսկ մինչև անձամբ մեղանչելու հնարավորություն ունենալը:

գ. *Բացատրե՛ք այս երկու աստվածաշնչյան պնդումների իմաստը ձեր բառերով:*

_____

_____

_____

_____

_____

_____

ՄԱՍ ԵՐԿՈՒ

ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 5. Բացարձակ արատավորություն և բարոյական ապականություն

Ադամի մեղքի պատիժը ոչ միայն մահն էր, այլև բարոյական ապականությունը. նա զրկվեց իր սկզբնական արդարությունից և բարոյապես ապականված էակ դարձավ: Քանի որ բոլոր մարդիկ կրում են Ադամի մեղքի հանցանքը, նրանք նույնպես կրում են դրա պատիժը՝ մահը և բարոյական ապականությունը: Ադամի ժառանգներից յուրաքանչյուրը ծնվում է բարոյապես ապականված, ամբողջովին հակված չարությանը և ենթակա մահապատժի:

Յուրաքանչյուր անհատի կյանքից և ամբողջ մարդկության հավաքական փորձառությունից ակնհայտ է, որ մարդու բարոյական ապականությունը սովորած կամ նմանակած վարքագիծ չէ, այլ ի ծնե ունեցած հատկանիշ, որը խորապես արմատավորված է մարդու սրտում: Մարդկության պատմությունը, աշխարհիկ և սրբազան գրականությունը, փիլիսոփայությունը և կրոնն անթիվ անգամներ պատկերում են մարդու պայքարն իր բարոյական ապականության և չարության հակման դեմ: Պողոս առաքյալի ոգեշնչված խոսքերը Հռոմեացիների 7.15-ում եղել են յուրաքանչյուրի հառաչանքը, ով գիտակցում է իր բարոյական ապականությունը. «Որովհետև ինչ որ գործում եմ, չգիտեմ, որովհետև ոչ թե ինչ որ կամենում եմ, այն եմ գործում, այլ ինչ որ ատում եմ, այն եմ գործում»:

«ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամենակարևոր արտահայտություններից մեկը, որ աստվածաբաններն օգտագործում են՝ նկարագրելու համար մարդու ներհատուկ բարոյական ապականությունը, «բացարձակ արատավորություն» արտահայտությունն է: «Արատավորություն» բառի լատիներեն համարժեքը (*«դեպրավուս»*) կազմված է *«դե»* նախածանցից, որն ուժգնացման իմաստ ունի, և *«պրավուս»* արմատից, որը նշանակում է «ծռված» կամ «աղավաղված»: Ինչ-որ բան արատավոր անվանելը նշանակում է, որ դրա սկզբնական վիճակը կամ ձևը հիմնովին աղավաղված կամ խեղաթյուրված է: Մարդուն արատավոր անվանելը նշանակում է, որ նա զրկվել է իր սկզբնական արդարությունից, և որ նրա էությունն իսկ ապականվել է: Երբ աստվածաբաններն օգտագործում են «բացարձակ», «համատարած», «համընդհանուր» կամ «արմատական» ածականները՝ նկարագրելով մարդու արատավորությունը, կարևոր է իմանալ, թե ինչ նրանք նկատի ունեն, և ինչ նկատի չունեն:

Ի՞ՆՉ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»

1. **Այն, որ անկման պատճառով Աստծո պատկերը մարդու մեջ լիովին կորսվեց**: Ծննդոց 9.6-ում, Ա Կորնթացիների 11.7-ում և Հակոբոս 3.9-ում Սուրբ գիրքը դեռ նշում է, որ մարդը ստեղծվել է Աստծո «պատկերով» կամ «նմանությամբ»: Այդ իսկ պատճառով, Աստծո պատկերն իրապես մնում է յուրաքանչյուր մարդու մեջ:

2. **Այն, որ մարդը չունի գիտելիք Աստծո Անձի և կամքի մասին**: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ մարդիկ ունեն բավականաչափ գիտելիք Աստծո մասին, որպեսզի ատեն Նրան, և բավականաչափ գիտեն Նրա ճշմարտությունը, որպեսզի մերժեն և փորձեն ճնշել այն (տե՛ս Հռոմ. 1.18,30):

3. **Այն, որ մարդը չունի խիղճ, կամ որ նա լիովին անզգա է բարու և չարի հանդեպ**: Հռոմեացիների 2.15-ը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ խիղճ ունեն: Եթե այն վառված չէ (տե՛ս Ա Տիմոթ. 4.2), կարող է դրդել մարդուն հիանալ առաքինի հատկանիշներով և գործերով:

4. **Այն, որ մարդն անկարող է առաքինի վարք ցուցաբերել**: Կան մարդիկ, որոնք սիրում են իրենց ընտանիքը, զոհաբերում են իրենց կյանքը ուրիշներին փրկելու համար և կատարում են մեծահոգի մարդասիրական արարքներ: Հայտնի է, որ մարդիկ կարող են սիրել այլ մարդկանց՝ դրդված քաղաքացիական պարտավորությունից կամ, նույնիսկ, ելնելով արտաքին կրոնական բարեպաշտությունից:

5. **Այն, որ բոլոր մարդիկ ծայրաստիճան արատավորված են, որ բոլոր մարդիկ հավասարապես անբարո են, կամ որ բոլոր մարդիկ անձնատուր են լինում այս աշխարհում գոյություն ունեցող ամեն տեսակի չարիքի**: Բոլոր մարդիկ չէ, որ օրինազանց, շնացող կամ մարդասպան են, սակայն բոլորը կարող են այդպիսին լինել: Միակ բանը, որը զսպում է նրանց, Աստծո շնորհքն է:

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

1. **Այն, որ Աստծո պատկերը մարդու մեջ լրջորեն աղավաղվել է, և բարոյական ապականությունն ամբողջովին պղծել է նրան**: Մարդու էության յուրաքանչյուր կողմ պարզորեն արտահայտում է այս ճշմարտությունը. մարմինը (տե՛ս Հռոմ. 6.6,12, 7.24, 8.10,13), միտքը (տե՛ս Հռոմ. 1.21, Բ Կորնթ. 3.14,15, 4.4, Եփես. 4.17-19), զգացմունքները (տե՛ս Հռոմ. 1.26,27, Գաղատ. 5.24, Բ Տիմոթ. 3.2-4) և կամքը (տե՛ս Հռոմ. 6.17, 7.14,15):

2. **Այն, որ մարդը ծնվում է մեղքի հանդեպ մեծ հակվածությամբ**: Բոլոր մարդիկ ընդունակ են մեծագույն չարիքի, նույնիսկ ամենից անասելի հանցանքների և ամենից ամոթալի այլասերությունների:

3. **Այն, որ մարդու գործերը պիղծ են՝ իր բարոյական ապականության պատճառով**: Մարդու բարոյական ապականությունը և մեղքը տարածվում են նույնիսկ նրա ամենագովելի գործերի վրա (տե՛ս Եսայի 64.6):

4. **Այն, որ մարդու գործերը դրդված չեն Աստծո հանդեպ սիրուց կամ Նրա պատվիրաններին հնազանդվելու ցանկությունից**: Ոչ ոք չի սիրում Աստծուն արժանի կերպով կամ այնպես, ինչպես պատվիրում է օրենքը (տե՛ս Երկր. Օր. 6.4,5, Մատթ. 22.37), և ոչ ոք չի պատվում Աստծուն իր ամբողջ մտքով, խոսքով և արարքով (տե՛ս Ա Կորնթ. 10.31, Հռոմ. 1.21): Բոլոր մարդիկ գերադասում են իրենց անձն Աստծուց (տե՛ս Բ Տիմոթ. 3.2-4): Մարդու ամբողջ անձնազոհության, հերոսական արարքների, քաղաքացիական գործունեության և արտաքին կրոնական բարեպաշտության հիմքում ընկած է սերը սեփական անձի հանդեպ, ոչ թե Աստծո հանդեպ:

5. **Այն, որ մարդու միտքը թշնամաբար է տրամադրված Աստծո հանդեպ, չի կարող հնազանդեցնել իրեն Աստծո կամքին և չի կարող հաճելի լինել Աստծուն (տե՛ս Հռոմ. 8.7,8)**:

6. **Այն, որ մարդկությունն ընդունակ է ավելի խորը բարոյական ապականության**: Այս բարոյական կործանումն անհամեմատ ավելի արագ տեղի կունենար, եթե չլիներ Աստծո շնորհքը, որը զսպում է մարդկանց չարությունը:

7. **Այն, որ մարդը չի կարող ազատել իրեն մեղավոր կամ արատավորված վիճակից**: Նա հոգևորապես մահացած է (տե՛ս Եփես. 2.1-3), բարոյապես ապականված է (տե՛ս Սաղմ. 51.5) և անկարող է փոխել իրեն (տե՛ս Երեմիա 12.23):

ՄԱՐԴԸ ԾՆՎԱԾ Է ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Մենք ամփոփեցինք բացարձակ կամ արմատական արատավորությունը: Այժմ ավելի մանրամասն կդիտարկենք Աստվածաշնչի ուսուցումներն այս թեմայով և կգտնենք բազմաթիվ վկայություններ այն մասին, ինչ սովորեցինք: Քանի որ բոլոր մարդիկ կրում են Ադամի մեղքի հանցանքը, նրանք նույնպես կրում

են դրա պատիժը՝ մահը և բարոյական ապականությունը: Ադամի ժառանգներից յուրաքանչյուրը ծնվում է բարոյապես ապականված և հակված չարությանը:

1. Ծննդոց 5.1-3-ը պարզորեն ցույց է տալիս անկման կործանարար հետևանքները և բարոյական ապականության տարածումը ամբողջ մարդկային ցեղի մեջ: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

   ա. *Համաձայն Ծննդոց 5.1-ի, ո՞ւմ պատկերով ստեղծվեց Ադամը:*

   _____

   _____

   _____

   բ. *Համաձայն Ծննդոց 5.3-ի, ո՞ւմ նմանությունն ունեին Ադամի ժառանգները: Բացատրե՛ք, թե ինչու է այս ճշմարտությունը կարևոր:*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ադամը ստեղծվեց «Աստծո պատկերով», սակայն Ադամի ժառանգները ծնվեցին Ադամի անկման և արատավորության նմանությամբ: Կարևոր է նշել, որ մարդիկ չեն ժառանգում Ադամի բարոյական ապականությունը նույն կերպով, որով որդին կարող է ժառանգել որևէ ֆիզիկական հատկանիշ կամ թերություն իր հորից: Ադամի ժառանգների բարոյական ապականությունն Աստծո դատաստանի արդյունքն է: Ադամը մեղանչեց՝ հայտնվելով մահվան և բարոյական ապականության պատժի ներքո: Ադամի մեղքը վերագրվեց իր բոլոր ժառանգներին. այդ պատճառով, բոլորը ենթակա են նույն պատժին՝ մահվան և ապականության:

2. Ադամի անկումից ի վեր բոլոր մարդիկ ծնվում են բարոյապես ապականված բնությամբ, որը զուրկ է բարությունից, թշնամաբար է տրամադրված Աստծո հանդեպ և հակված է չարության: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը այս ճշմարտության մասին: Ինչպե՞ս են դրանք ցույց տալիս, որ մարդու բարոյական ապականությունը ձեռքբերովի վարքագիծ չէ, այլ նրա բնության արտացոլքն է:

   ա. *Սաղմոս 51.5*

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա չի նշանակում, որ Դավիթը ծնվել էր իր ծնողների կյանքում տեղի ունեցած սեռական մեղքի արդյունքում: Աստված պատվիրեց մարդկանց աճել և շատանալ (տե՛ս Ծնն. 1.28): Դավիթը պարզապես մատնանշում է մի ճշմարտություն, որը հաստատվում է ամբողջ Սուրբ գրքում և ապացուցվում է մարդկության ամբողջ պատմության ընթացքում՝ այն, որ մարդու բարոյական ապականությունը և հակվածությունը չարին՝ պարզապես ձեռքբերովի վարքագիծ չէ, այլ նրա էության կամ բնության մասն է:

բ. *Սաղմոս 58.3*

գ. *Ծննդոց 8.21*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մանկություն» բառը վերաբերում է մարդու կյանքի առաջին տարիներին: Կարիք չկա սովորեցնել երեխային լինել եսասեր կամ եսակենտրոն, ստել կամ շահարկել: Նման մեղսալի դիրքորոշումը և արարքները բխում են նրա բնությունից:

3. Մենք ցույց տվեցինք ճշմարտությունն այն մասին, որ բոլոր մարդիկ ծնվում են՝ կրելով Ադամի բարոյական ապականությունը: Այժմ կդիտարկենք այն սուրբգրային հատվածները, որոնք նկարագրում են այս բարոյական ապականության սաստկությունը կամ խորությունը: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները մարդու ապականության խորության կամ չափի մասին:

ա. *Ծննդոց 6.5*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս ճշմարտությունը նկարագրելու համար, պատկերացրեք, որ հնարավոր լիներ մի տեսանյութ պատրաստել որևէ մարդու բոլոր մտքերից՝ իր վաղ մանկությունից մինչև ներկա պահը, և ցույց տալ այն իր ամենամոտ ընկերներին և ընտանիքին՝ նրանց, ում հետ նա կիսվել է իր ծածուկ մտքերով և պատմել է իր տկարությունների մասին: Չափազանցություն չի լինի ասելը, որ նա այն աստիճան կհամակվեր ամոթով, որ այլևս չէր կարողանա շփվել նրանց հետ:

բ. *Հոբ 15.14-16, 25.4-6*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս երկու հատվածներում էլ օգտագործվում են խիստ և վիրավորական բառեր: Այնուամենայնիվ, իրենց պատշաճ համատեքստում դրանք ճշտորեն նկարագրում են մարդուն՝ առանց Աստծո զսպող շնորհքի: Մենք անկում ապրած ցեղ ենք, որի ախտը կարող է բուժվել միայն Քրիստոսի փրկության և Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով:

գ. *Ժողովող 9.3*

դ. *Եսայի 64.6*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդկանց մեծագույն և ամենից գովելի արարքներն ընդամենը կեղտոտ լաթեր են Աստծո առջև: Կարելի է հագցնել բորոտին լավագույն և ամենասպիտակ մետաքսը՝ նրա վերքերը ծածկելու համար, բայց նրա մարմնի ապականությունն անմիջապես կթափանցի նրա հագուստից՝ դարձնելով այն նույնքան պիղծ, որքան մարդը, որին այն փորձում է ծածկել: Նմանապես, մարդկանց լավագույն գործերը պատված են իրենց անկում ապրած սրտերի ապականությամբ:

4. Խոսելով մարդու բարոյական ապականության մասին, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մարդու սրտին: Աստվածաշնչում սիրտը կամքի և զգացմունքների գտնվելու վայրն է. այն խորհրդանշում է մեր էության կորիզը: Համաձայն Սուրբ գրքի, ապականված է հենց մարդու սիրտը, և սրտից է բխում ամեն տեսակի մեղք, ապստամբություն և այլասերություն:

ա. *Ինչպե՞ս է նկարագրվում մարդու սիրտը Երեմիա 17.9-ում:*

բ. *Համաձայն Մատթեոս 15.19,20-ի և Մարկոս 7.20-23-ի, ինչպե՞ս է մարդու ապականված սիրտն ազդում նրա անձի և գործերի վրա:*

_____

_____

_____

5. Ամփոփելով մարդու ապականության մասին ուսումնասիրության այս մասը՝ կդիտարկենք հակիրճ, բայց ազդեցիկ մի պնդում, որն արեց Տեր Հիսուս Քրիստոսը Մատթեոս 7.11-ում: Ո՞րն է այդ պնդումը, և ինչպե՞ս է այն ներկայացնում Քրիստոսի հաստատ համոզմունքը մարդու բարոյական արատավորության մեջ:

   ա. *«Արդ եթե դուք, Չ_____ լինելով...»*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն, որ մարդիկ կարող են ջերմ զգացմունքներ տածել յուրայինների հանդեպ, ինչպես նաև ունենալ և դրսևորել որոշ առաքինություններ, չի հերքում այն փաստը, որ մարդկությունն ընդհանուր առմամբ անկում ապրած ցեղ է, և որ բարոյական ապականությունը թափանցում է բոլորի սրտերը: Այս ապականությունն այնքան գերակշռող է, որ Քրիստոսը կարող էր ասել, որ մարդիկ չար են, նույնիսկ այն դեպքում, որ նրանք բարի գործեր են կատարում՝ բարի պարգևներ են տալիս իրենց երեխաներին:

Գլուխ 6. Հոգևոր մահ

Աստվածաբանների կողմից օգտագործվում է մի կարևոր արտահայտություն՝ նկարագրելու համար մարդու բարոյական ապականության խորությունը. «հոգևոր մահ»: Համաձայն Սուրբ գրքի, Ադամի վրա եկած աստվածային դատաստանի արդյունքը ոչ միայն ֆիզիկական մահն էր, այլև հոգևոր մահը: Ադամը դարձավ օտարացած Աստծուց և անընկալունակ Նրա կամքի հանդեպ: Դրա հետ մեկտեղ, նա նույնպես ընկալունակ դարձավ ամեն տեսակի չար ազդակների հանդեպ՝ թե՛ մարդկային, թե՛ դիվային:

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Ադամի կյանքում աստվածային դատաստանի այս կողմը չսահմանափակվեց միայն իրենով, այլ ընդգրկեց ամբողջ մարդկությունը: Յուրաքանչյուրը, ով ծնվում է այս աշխարհում, օտարացած է Աստծուց, որպես հոգևոր մեռելածին՝ զուրկ ճշմարիտ հոգևոր կյանքից Աստծո մեջ և անընկալունակ Աստծո Անձի և կամքի հանդեպ: Որպեսզի անկում ապրած մարդը սիրով և հնազանդությամբ արձագանքի Աստծուն, անհրաժեշտ է հոգևոր հարություն՝ Աստծո շնորհքի և զորության գերբնական աշխատանքի միջոցով:

1. Ծննդոց 2.17-ում Ադամը զգուշացում ստացավ Աստծուց անհնազանդության սոսկալի հետևանքի մասին: Ըստ այս հատվածի, ի՞նչ տեղի կունենար այն օրը, երբ Ադամը խախտեր Աստծո պատվերը: Ի՞նչ է այս հատվածը սովորեցնում մեզ այն հոգևոր մահվան մասին, որն Ադամը կրեց իր մեղքի արդյունքում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ադամի մեղքի պատիժը մահն էր (տե՛ս Հռոմ. 6.23), որը ոչ միայն նյութական էր, այլև հոգևոր: Աստծո զգուշացումը դատարկ չէր: Նույն օրը, երբ Ադամը կերավ բարու և չարի գիտության ծառից, նա հոգևորապես մահացավ, այսինքն՝ դարձավ օտարացած Աստծուց, անընկալունակ Նրա կամքի հանդեպ և բաց ամեն տեսակի չար ազդակների համար՝ թե՛ մարդկային, թե՛ դիվային:

2. Եփեսացիների 2.1-3-ում գտնվում է Աստվածաշնչի ամենապատկերավոր նկարագրություններից մեկն անկում ապրած մարդու հոգևոր մահվան մասին: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո բացատրե՛ք ձեր բառերով հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի իմաստը:

ա. *«Դուք... մեռած էիք հանցանքներում և մեղքերում» (խս. 1):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչև դարձը յուրաքանչյուր մարդ հոգևորապես մահացած էր: Աստվածաշունչը համարում է հոգևոր մահը մեր մեղքի արդյունքը, այսինքն՝ թե՛ այն մեղքի, որը վերագրվեց մեզ Ադամի մեջ (տե՛ս Հռոմ. 5.12), թե՛ այն մեղքի, որը ինքներս ենք գործում (տե՛ս Եփես. 2.2):

բ. «*Որոնցում մի ժամանակ գնում էիք այս աշխարհի սովորության պես» (խս. 2):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Հոգևոր մահը դրսևորվում է կամ ակնհայտորեն երևում է մարդու կյանքի ընթացքով և գործերով: Մինչև դարձը, յուրաքանչյուրը «գնում է» մեղքի մեջ կամ մեղք է գործում՝ որպես կենսաոճ: Իր բնությամբ մարդը չի վարվում համաձայն Աստծո կամքի, այլ՝ համաձայն այս անկում ապրած աշխարհի՝ թշնամությամբ և անհնազանդությամբ Աստծո հանդեպ:

գ. *«Օդի իշխանության իշխանի պես, այն հոգու պես, որ հիմա ներգործում է ապստամբության որդիների մեջ» (խս. 2):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչև դարձը մարդիկ ոչ միայն վարվում են անկում ապրած և անհնազանդ մարդկության սովորության պես, այլև ապրում են համաձայն սատանայի կամքի և գործերի: Թեև մարդկանց մեծամասնությունը ժխտում է այն փաստը, որ ինքը թեկուզ ինչ-որ չափով նվիրված է սատանային և վիրավորվում է նման մեղադրանքից, Աստվածաշունչը հայտարարում է, որ նրանք, ովքեր չեն հաշտվել Աստծո հետ Քրիստոսի միջոցով և չեն վերածնվել Սուրբ Հոգով, կատարում են սատանայի կամքը:

դ. *«Որոնց մեջ մենք ամենքս էլ մի ժամանակ ման էինք գալիս մեր մարմնի ցանկություններում՝ մարմնի և մտքի կամքը կատարելով» (խս. 3):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչև դարձը՝ բոլորը, առանց բացառության, վարվում են կամ առաջնորդվում են իրենց մարմնի կրքերով (այսինքն՝ իրենց անկում ապրած չար ցանկություններով, որոնք ապստամբում են և թշնամաբար են տրամադրված Աստծո դեմ): Մարդիկ անձնատուր են լինում իրենց չար ցանկություններին և մտքերին:

ե. *«Եվ բնությամբ բարկության որդիներ էինք, ինչպես ուրիշներն էլ» (խս. 3):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչև դարձը Աստծո բարկությունը մնում է յուրաքանչյուրի վրա (տե՛ս Հովհ. 3.36): Կարևոր է հասկանալ, որ Աստծո բարկությունն ուղղված է մարդու դեմ ոչ միայն իր գործերի պատճառով, այլև իր բնության: Մարդու անկում ապրած և չար բնությունն առաջացնում է Աստծո զայրույթը:

3. Եփեսացիների 4.17-19-ում գտնվում է ևս մեկ նկարագրություն հոգևոր մահվան մասին, որը բնակվում է յուրաքանչյուրի սրտում մինչև դարձը: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո ձեր բառերով բացատրե՛ք հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի իմաստը:

ա. *«(Անկում ապրած մարդիկ) գնում (են) իրենց մտքի ունայնությամբ... խավարած... մտքով» (խոսքեր 17,18):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հոգևորապես մահացած մարդկանց «միտքը» կարող է մեծ ձեռքբերումներ ունենալ գիտության, ճարտարապետության և գրականության մեջ. այնուամենայնիվ, Աստծո վերաբերյալ այն զուրկ է ճշմարտությունից և լի է ամեն տեսակի ունայնությամբ, հերձվածություններով և տրամաբանորեն հակասական գաղափարներով: Երբ անկում ապրած մարդիկ փորձում են «հոգևոր» կամ «կրոնական» լինել, արդյունքներն աղետալի և նույնիսկ անհեթեթ են:

բ. *«Օտար՝ Աստծո կյանքից» (խս. 18):*

_____

_____

_____

_____

_____

գ. *«Այն տգիտության պատճառով, որ նրանցում է, իրենց սրտերի կուրության համար» (խս. 18):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է հասկանալ, որ մարդը զոհ չէ, որը բաժանված է Աստծուց անխուսափելի անտեղյակության պատճառով, որը վեր է իր ուժերից: Մարդու անտեղյակությունն ինքնակամ է: Նա թշնամաբար է վերաբերվում Աստծուն և չի ցանկանում ճանաչել ո՛չ Նրան, ո՛չ Նրա կամքը: Մարդն անտեղյակ է հոգևոր իրողություններից, քանի որ նա փակում է իր աչքերը՝ հրաժարվելով նայել Աստծուն, և փակում է իր ականջները՝ հրաժարվելով լսել Նրան:

դ. *«Որ անզգայացած, իրենց անձերը մատնեցին անառակության՝ ամեն պղծության գործերի մեջ, ագահությամբ» (խս. 19):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խստացնելով սիրտն Աստծո դեմ՝ անկում ապրած մարդն անզգա է դառնում ցանկացած հոգևոր ճշմարտության և առաքինության հանդեպ: Դրանից հետո նա տրվում է չարիքին, որը հակառակ է Աստծո կամքին և անհամատեղելի է Նրա Անձի հետ:

4. Աստվածաշնչում կան մի քանի խոսքեր, որոնք նկարագրում և պատկերում են «հոգևորապես մահացած» արտահայտության իմաստը: Ավարտե՛ք ամեն մի պնդումը՝ լրացնելով բաց թողնված բառերը, իսկ հետո գրե՛ք ձեր կարծիքը:

ա. *Անկում ապրած մարդիկ Կ_____ Մ_____ են (Ա Տիմոթեոս 5.6):*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչև դարձը մարդը հոգևոր դիակ է. ֆիզիկապես նա կենդանի է, բայց հոգևորապես մահացած է: Նա մահացած է Աստծո և Նրա կամքի իրողության համար:

բ. *Անկում ապրած մարդիկ անուն ունեն, թե Կ_____ են, բայց Մ_____ են (Հայտնություն 3.1):*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մինչև դարձը մարդը կարող է չափազանց հոգևոր և նույնիսկ աստվածավախ թվալ, բայց նրա բոլոր գործերն արտաքին են և դրդված են սիրով սեփական անձի հանդեպ: Իր սրտում նա չի սիրում Աստծուն, ո՛չ էլ ձգտում է Նրա փառքին:

գ. *Անկում ապրած մարդիկ Ք_____ սրտեր ունեն (Եզեկիել 11.19):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քարե արձանն անկյանք է և անընկալունակ է ցանկացած տեսակի ազդակների հանդեպ: Կարելի է սեղմել, հրել կամ ծակել արձանը, բայց այն չի արձագանքի: Նույն կերպով, անկում ապրած մարդու սիրտը չի արձագանքում աստվածային ազդակներին: Այն նույնքան մահացած է Աստծո համար, որքան քարը:

դ. *Անկում ապրած մարդիկ նման են Պ_____ ծառերի, Ե_____ Ա_____ մահացած, Ա_____ եղած (Հուդա 12):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Դժվար թե կարելի լինի գտնել ավելի պատկերավոր նկարագրություն մարդու հոգևոր մահացության մասին: Մինչև դարձը մարդը լիովին զուրկ է հոգևոր կյանքից:

ե. *Անկում ապրած մարդիկ կատարում են կրոնական պարտականություններ և ծեսեր, որոնք Աստված Մ_____ գործեր է համարում (Եբրայեցիների 6.1, 9.14):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կրկին, մինչև դարձը մարդը կարող է շատ կրոնական թվալ, բայց նրա բոլոր գործերը մակերեսային են և դրդված են սիրով սեփական անձի հանդեպ: Թեև նրա կրոնական գործունեությունը կարող է ընդունելության կամ գովեստի արժանանալ մարդկանց կողմից, Աստծո առջև նա չորացած ծառի պես անպտուղ է:

Գլուխ 7. Բարոյական անկարողություն

Մաս մեկ. Մարդու կամքի գերությունը

«ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ» ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Բարոյական անկարողությունը» մի տերմին է, որն օգտագործվում է աստվածաբանների կողմից՝ նկարագրելու համար մարդու բարոյական ապականության կամ բացարձակ արատավորության աստիճանը: Այս վարդապետությունը սովորեցնում է մեզ, որ անկում ապրած մարդն ***անկարող*** է սիրել, հնազանդվել և հաճեցնել Աստծուն:

Լսելով այս վարդապետության մասին՝ ինչ-որ մեկը կարող է հարցնել. «Ինչո՞ւ է մարդը պատասխանատու Աստծո առջև, եթե նա անկարող է անել այն, ինչ Աստված պատվիրում է»: Այս հարցի պատասխանը շատ կարևոր է: Եթե մարդը չսիրեր կամ չհնազանդվեր Աստծուն՝ համապատասխան մտավոր կամ ֆիզիկական կարողություններ չունենալու պատճառով, Աստծո կողմից նրան հաշվետու դարձնելն իսկապես որ անարդար կլիներ: Այդ դեպքում մարդը զոհ կլիներ: Այնուամենայնիվ, ամեն ինչ այլ է: Մարդու անկարողությունը ***բարոյական*** է և այն բխում է Աստծո հանդեպ ունեցած թշնամությունից: Մարդն անկարող է սիրել Աստծուն, քանի որ ***ատում*** է Աստծուն: Նա ***անկարող*** է հնազանդվել Աստծուն, քանի որ ***խորշում*** է Նրա պատվիրաններից: Նա ***անկարող*** է հաճեցնել Աստծուն, քանի որ ***չի համարում, որ Աստծո փառքը և բարեհաճությունը արժանի նպատակներ են իր համար:*** Մարդը ոչ թե զոհ է, այլ՝ հանցագործ: Նա *չի կարողանում*, քանի որ *չի կամենում:* Նրա ապականությունը և Աստծո հանդեպ թշնամանքն այնքա՜ն մեծ են, որ նա գերադասում է հավիտենական պատիժ կրել, քան ընդունել Աստծուն և հնազանդվել Նրա գերիշխանությանը: Ահա թե ինչու ***բարոյական անկարողությունը*** կարելի է նաև անվանել ***հոժարակամ թշնամություն:*** Ծննդոց 37.4-ում գրված է մի հրաշալի պարզ օրինակ այս մասին.

> «Եվ նրա (Հովսեփի) եղբայրները տեսան, որ իրենց հայրը սիրում էր նրան իր բոլոր եղբայրներից ավելի, ատեցին նրան և չէին կարողանում խաղաղությամբ խոսել նրա հետ»:

Հովսեփի եղբայրները «չէին կարողանում խաղաղությամբ խոսել նրա հետ»: Պատճառն այն չէր, որ նրանք չունեին խոսելու ֆիզիկական կարողություն. նրանք համր չէին: Նրանց ատելությունը Հովսեփի հանդեպ այնքա՜ն մեծ էր, որ չէին կամենում ընկերաբար շփվել նրա հետ: Նույն կերպով, անկում ապրած մարդու թշնամանքն Աստծո հանդեպ այնքա՜ն մեծ է, որ նա չի կարողանում հնազանդեցնել իրեն Աստծուն:

ՄԱՐԴՈՒ ԿԱՄՔԻ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու կամքը նրա բնության արտացոլքն է: Եթե մարդը բարոյապես մաքուր բնություն ունենար, նրա կամքը հակված կլիներ բարոյապես մաքուր արարքների: Եթե մարդը սուրբ և արդար լիներ, նա կսիրեր սուրբ և արդար Աստծուն, կարժևորեր Նրա պատվիրանները և կհնազանդվեր դրանց: Այնուամենայնիվ, անկում ապրած մարդը բարոյապես ապականված բնություն ունի. այնպես որ, նրա կամքը հակված է բարոյապես ապականված արարքների: Անկում ապրած մարդն անսուրբ և անարդար է. այդ պատճառով, նա ատում է սուրբ և արդար Աստծուն, պայքարում է Նրա ճշմարտության դեմ և հրաժարվում է հնազանդվել Նրա պատվիրաններին: Ահա և հետևյալ՝ հաճախ քննարկվող հարցի պատասխանը.

ՀԱՍԿԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

«Արդյո՞ք մարդն ազատ կամք ունի»:

Սուրբգրային պատասխանն այն է, որ մարդն ազատ է՝ ընտրելու այն, ինչ ցանկանում է, բայց քանի որ նրա բնությունը բարոյապես արատավորված է, նա ցանկանում է հեռանալ բարուց և ընտրել չարը, ատել ճշմարտությունը և հավատալ ստի, մերժել Աստծուն և պայքարել Նրա կամքի դեմ: Ինչ-որ իմաստով, անկում ապրած մարդն ունի «ազատ կամք», բայց նա չունի «բարի կամք»: Այդ իսկ պատճառով, նա մշտապես հոժարաբար ընտրում է այն, ինչը հակառակ է Աստծո Անձին և կամքին: Մարդը չի կարող փախչել իրենից. նա բնությամբ չար է և հոժարաբար ու ազատորեն չար գործեր է անում:

1. Մենք նշեցինք, որ մարդու կամքն իր բնության արտացոլքն է: Մատթեոս 7.16-20-ում գտնվում է այս ճշմարտությունը պատկերող փայլուն օրինակ: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո ձեր բառերով բացատրե՛ք հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի իմաստը:

   ա. *«Իրենց պտուղներից նրանց ճանաչեք. մի՞թե փշերից խաղող են քաղում, կամ տատասկից՝ թուզ» (խս. 16):*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք որոշում ենք ծառի բնությունը դրա տված պտղով: Նույն կերպով, մարդու իրական բնությունը կամ բնավորությունը երևում է ոչ թե նրա դավանությամբ, այլ՝ գործերով:

   բ. *«Այսպես, ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար ծառը չար պտուղ է բերում» (խս. 17):*

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կա անմիջական կապ ծառի բնության և իր բերած պտղի միջև: Նույնը վերաբերում է մարդու բնությանը և նրա գործերին: Ապականված բնությունը կարող է միայն ապականված գործեր անել:

գ *«Չի կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը՝ բարի պտուղ բերել» (խս. 18):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը Սուրբ գրքի մեծագույն օրինակներից մեկն է մարդու բնության և կամքի միջև անմիջական կապի մասին: Ծառը չի կարող պտուղ բերել ***հակառակ*** իր բնությանը. այն պտուղ է բերում ***համաձայն*** իր բնությանը: Նմանապես, մարդու զգացմունքները, կամքը և գործերը մշտապես համապատասխանելու են նրա բնությանը:

դ. *«Ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրվում է և կրակի մեջ գցվում» (խս. 19):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը չի սովորեցնում փրկություն՝ գործերի միջոցով: Նա ցույց է տալիս անմիջական կապը մարդու և նրա գործերի միջև: Այն մարդը, ով փրկվել է Քրիստոսի հանդեպ հավատքով և վերածնվել է Սուրբ Հոգու կողմից, նոր ստեղծված է (տե՛ս Բ Կորնթ. 5.17)՝ նոր զգացմունքներով Աստծո և Նրա կամքի հանդեպ: Նա դարձել է բարի ծառ, որը բարի պտուղ է բերում: Նրա գործերը նախատեսված չեն իրեն փրկելու համար (և ոչ էլ կարող են անել դա). փոխարենը, նրա գործերը իր կյանքում Աստծո փրկարար աշխատանքի ***ապացույցն*** են:

ե. *«Ուրեմն իրենց պտուղներից ճանաչեք նրանց» (խս. 20):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը սկսվում է (խս. 16) և ավարտվում է (խս. 20) նույն արտահայտությամբ. «Իրենց պտուղներից ճանաչեք նրանց»: Այս կրկնությունը շեշտադրում է երկու կարևոր ճշմարտություն. (1) գոյություն ունի անժխտելի և անմիջական կապ մարդու բնության և կամքի միջև, և (2) մեր դավանությունը բավարար ապացույց չէ ճշմարիտ դարձի մասին՝ առանց մեր կյանքում առկա բարի գործերի:

2. Մատթեոս 12.34,35-ում գտնվում է անկում ապրած մարդու բարոյական անկարողության ևս մեկ փայլուն օրինակ: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը: Դրանից հետո ձեր բառերով բացատրե՛ք հետևյալ արտահայտություններից ամեն մեկի իմաստը:

ա. *«Իժերի զավակնե՛ր, դուք ինչպե՞ս կարող եք բարի խոսել, որ չար եք» (խս. 34):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մեզ համար շատ դժվար կլինի գտնել բարոյական անկարողության ավելի դիպուկ օրինակ, քան այս հատվածում գտնվող Հիսուսի հանդիմանությունը՝ ուղղված փարիսեցիներին: Նրանք ***չէին կարող*** բարի խոսել, քանի որ չար ***էին:*** Նրանք չար պտուղ էին բերում, քանի որ չար ծառեր էին (տե՛ս Մատթ. 7.17):

բ. *«Որովհետև սրտի ավելացածից կխոսի բերանը» (խս. 34):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշնչում մշտապես կա անմիջական կապ մարդու սրտի և նրա զգացմունքների, մտքերի, խոսքերի և գործերի միջև: Մարդը կամենում է, խոսում է և գործում է համաձայն իր բնության:

գ. *«Բարի մարդն իր սրտի բարի գանձից բարիքներ կհանի, և չար մարդը չար գանձից չար բաներ կհանի» (խս. 35):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքն ազդեցիկ զուգահեռ է Մատթեոս 7.17,18-ին. «Այսպես, ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար ծառը չար պտուղ է բերում: Չի կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը՝ բարի պտուղ բերել»:

Գլուխ 8. Բարոյական անկարողություն

Մաս Երկու. Մարդու մտքի և սրտի անկարողությունը

Նախորդ գլխում դիտարկեցինք կապը մարդու բնության և կամքի միջև: Մենք բացահայտեցինք, որ քանի որ մարդը ծնված է բարոյապես ապականված բնությամբ, նա չի կարող (քանի որ չի ցանկանում) դրականորեն արձագանքել Աստծո Անձին և գործերին: Այս և հաջորդ գլուխներում կդիտարկենք Սուրբ գրքում գտնվող ամենակարևոր հատվածները, որոնցում շեշտադրվում է այս անկարողությունը՝ այն հատվածները, որոնք պարզորեն ցույց են տալիս անկում ապրած մարդու բացարձակ բարոյական անկարողությունը:

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՃԱՆԱՉԵԼ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աստծո ողորմած նախախնամության շնորհիվ մարդկային ցեղը մեծ մտավոր ձեռքբերումներ ունեցավ գիտության, տեխնոլոգիայի, բժշկության և շատ այլ բնագավառներում: Այնուամենայնիվ, անկում ապրած մարդու գիտելիքն Աստծո մասին ընդամենը հերձվածության խեղաթյուրված լաբիրինթոս և ունայն մտածողություն է: Այս անտեղյակության պատճառը ոչ թե «թաքնված Աստված» է, այլ «թաքնվող մարդը»: Աստված մշտապես պարզորեն հայտնել է Իրեն մարդկությանը արարչագործության միջոցով, պատմության մեջ Իր գերիշխան գործերով, Սուրբ գրքով և, ի վերջո, Իր մարմնավորված Որդու միջոցով: Հոգևորապես մահացած և բարոյապես ապականված մարդն արձագանքել է այս հայտնությանը՝ փակելով իր աչքերը և ականջները: Նա ***անկարող է*** ճանաչել ճշմարտությունը, քանի որ ատում է այն և ձգտում է ճնշել: Նա ատում է ճշմարտությունը, քանի որ այն Աստծո ճշմարտությունն է, և այն խոսում է իր դեմ: Այդ իսկ պատճառով, այն անտանելի է նրա համար:

1. Համաձայն Ա Կորնթացիների 2.14-ի, կարո՞ղ է անկում ապրած մարդը հասկանալ աստվածային իրողությունները, որոնք սովորեցնում է Սուրբ Հոգին: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Անկում ապրած մարդը չի կարող հասկանալ աստվածային իրողությունները: Դրանք ընկալվում են հոգևորապես, իսկ անկում ապրած մարդը հոգևորապես մահացած է: Սա է պատճառը, որ

նա մերժում է գիտելիքն Աստծո մասին՝ այն հիմարություն համարելով: Որպեսզի մարդը հասկանա, գնահատի և ընդունի գիտելիքն Աստծո մասին, նա պետք է վերածնվի Սուրբ Հոգու կողմից: Հիսուսն ասաց Նիկոդեմոսին Հովհաննես 3.3-ում. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո արքայությունը տեսնել»:

2. Բարոյական անկարողության ուսումնասիրության առաջին մասում մենք իմացանք, որ մարդը չի կարող սիրել Աստծուն Նրա հանդեպ ունեցած թշնամանքի պատճառով: Այժմ կտեսնենք, որ մարդու թշնամանքն Աստծո հանդեպ նաև արտացոլվում է Նրա ճշմարտությանը հակառակվելով: Կարևոր է հասկանալ, որ մարդիկ անօգնական զոհեր չեն, որոնք սրտանց ցանկանում են ճանաչել հոգևոր ճշմարտությունը, սակայն չեն կարողանում գտնել այն: Ընդհակառակը՝ նրանք ատում են ճշմարտությունը և անում են այն ամենը, ինչ իրենց ուժերի մեջ է՝ այն հերքելու և ճնշելու համար: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը այս ճշմարտության մասին:

ա. *Հոբ 21.14,15*

_____

_____

_____

_____

_____

_____

բ. *Հռոմեացիների 1.18*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բռնել» բառը թարգմանված է հունարեն ***«կատեխո»*** բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «զսպել, խոչընդոտել, արգելք դառնալ կամ ետ պահել»:

3. Հռոմեացիների 1.21-32-ը կարևոր հատված է, որը նկարագրում է մարդու թշնամանքն Աստծո և Նրա ճշմարտության հանդեպ: Այն ցույց է տալիս, որ անկում ապրած մարդը զոհ չէ, որը ցանկանում է ճանաչել Աստծո ճշմարտությունը, սակայն անկարող է: Փոխարենը, նա ատում է ճշմարտությունը և չի ցանկանում ճանաչել այն: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ՝ հատկապես կենտրոնանալով 21-25-րդ խոսքերի վրա: Դրանից հետո ձեր բառերով բացատրե՛ք հետևյալ պնդումների իմաստը:

ա. *«Որովհետև Աստծուն ճանաչելով, Նրան Աստծո պես չփառավորեցին կամ շնորհակալ չեղան» (խս. 21):*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծուն չհավատալը ոչ թե մտավոր խնդիր է, այլ՝ բարոյական: Համաձայն Աստծո խոսքի, չկան աթեիստներ: Աստված պարզորեն հայտնել է Իրեն բոլոր մարդկանց, սակայն մարդիկ ճնշում են այս գիտելիքը, որպեսզի ապրեն անարդարության մեջ և հպարտորեն վերահսկեն իրենց կյանքը:

բ. *«Այլ իրենց մտածմունքներում ունայնացան, և նրանց անմիտ սրտերը խավարեցին» (խս. 21):*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մերժելով գիտելիքն Աստծո մասին՝ անհավատ մարդկությունն աստիճանաբար հայտնվում է մտավոր և բարոյական խավարի մեջ:

գ. *«Ասելով, թե իմաստուն են, հիմարացան» (խս. 22):*

դ. *«Եվ անեղծ Աստծո փառքը փոխեցին եղծանելի մարդու և թռչունների և չորքոտանիների և սողուններ-ի պատկերի նմանության հետ» (խս. 23):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Անհավատ մարդկանց խելագարությունն ամենից առավել հայտնվում է իրենց երկրպագության առարկաների մեջ: Ամբողջ պատմության ընթացքում տեսնում ենք, թե ինչպես են մարդիկ մերժում իրենց Արարչին, Ով իրենցից բարձր է, և երկրպագում են արարված էակների, որոնք իրենցից ցածր են: Երկրպագելով իրենց՝ նրանք էլ ավելի են աստիճանազրկվում՝ սկսելով երկրպագել նույնիսկ ամենացածր արարածներին:

ե. *«Որոնք Աստծո ճշմարտությունը ստության հետ փոխեցին» (խս. 25):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդու գլխավոր խնդիրը նրա արատավոր բնությունն է, որը թշնամաբար է տրամադրված արդար և սուրբ Աստծո հանդեպ: Այս թշնամանքը դրդում է մարդուն ճնշել Աստծո ճշմարտությունը՝ փոխարինելով այն իրականության լիովին աղավաղված ընկալմամբ: Աստծո ճշմարտության միակ այլընտրանքը սուտն է (կարդացե՛ք 18-րդ խոսքը):

զ. *«Եվ երկրպագեցին և պաշտեցին ստեղծվածներին, քան թե Ստեղծողին, որ օրհնյալ է հավիտյան» (խս. 25):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդը ստեղծվեց, որպեսզի երկրպագի և ծառայի այն Աստծուն, Ով ստեղծեց իրեն՝ բոլոր կատարելությունների Աստծուն, Ով անսահմանորեն արժանի է նրա սիրուն և նվիրմանը: Մեղանչելով՝ մարդը փոխարինում է այս արտոնությունը եղծանելի էակների պաշտամունքով, ինչպիսիք են մարդը, թռչունները, չորքոտանիները և սողունները (խս. 23):

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՍԻՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Մարդկանց մեծամասնությունը, նույնիսկ ոչ կրոնական մարդիկ պնդում են, որ ինչ-որ չափով սեր են զգում Աստծո հանդեպ: Մենք հազվադեպ կարող ենք հանդիպել մարդու, որը կհամարձակվի խոստովանել իր «ատելությունն» Աստծո հանդեպ: Այնուամենայնիվ, Սուրբ գիրքը վկայում է, որ անկում ապրած մարդը ***չի կարող*** սիրել Աստծուն: Իրականում, ամբողջ ադամական ցեղն ատում է Աստծուն և պատերազմում է Նրա դեմ: Շատերը, որ պնդում են, թե անկեղծորեն սիրում են Աստծուն, գրեթե ոչինչ չգիտեն Նրա հատկանիշների և գործերի մասին՝ համաձայն Սուրբ գրքի. այնպես որ, այն «աստված», որին նրանք սիրում են, ընդամենը իրենց մտքի արգասիքն է: Նրանք ստեղծել են «աստծո»՝ իրենց պատկերով, և նրանք սիրում են այն, ինչ ստեղծել են: Աստված հայտարարում է Սաղմոս 50.21-ում. «Դու... կարծեցիր, թե Ես էլ քեզ նման եմ. բայց կհանդիմանեմ քեզ»:

Եթե անկում ապրած մարդը, որը, իր խոսքերով, սիրում է Աստծուն, քններ Սուրբ գիրքը, անկասկած, կհայտնաբերեր այնպիսի Աստծո, որը շատ է տարբերվում իր սիրո առարկայից: Եթե նա սկսեր ուսումնասիրել Աստծո հատկանիշները (սրբությունը, արդարադատությունը, գերիշխանությունը և զայրույթը), ամենայն հավանականությամբ, կպատասխաներ հակակրանքով և կասեր (ինչպես որ շատերն են ասում).

«Իմ Աստված այսպիսին չէ՛», կամ «Ես չե՛մ կարող սիրել նման Աստծո»: Մենք անմիջապես կտեսնեինք, որ երբ անկում ապրած մարդը հանդիպում է Սուրբ գրքի ճշմարիտ Աստծուն, նրա միակ պատասխանը թշնամանքն ու ատելությունն է: Ո՞րն է այս բացասական արձագանքի պատճառը: Կրկին՝ այն, թե ով է մարդն իր էության խորքում: Եթե մարդն իր բնությամբ արդար և սուրբ լիներ, նա հեշտորեն կկարողանար սիրել սուրբ և արդար Աստծուն և ուրախությամբ կինազանդվեր Նրա օրենքներին: Սակայն մարդու բնությունն արատավորված և ապականված է, և այդ պատճառով նա չի կարող անել դա:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, և այն որոշակի տեղեկություն է հաղորդում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ են վերագրվում անկում ապրած մարդուն հետևյալ աստվածաշնչյան խոսքերում:

   ա. *«Ա_____» (Հռոմեացիների 1.30):*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս բառը թարգմանված է հունարեն ***«թեոստուգե՛ս»*** բառից (***«թեո՛ս»*** = «Աստված» + ***«ստո՛ւգո»*** = «ատել»): Այն նշանակում է Աստծուն ատող և անարգող մարդ:

   բ. *«Թ_____» (Հռոմեացիների 5.10):*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս բառը թարգմանված է հունարեն ***«էխտրո՛ս»*** բառից: Այն նշանակում է հակառակորդ, որն անհաշտ է ինչ-որ մեկի հետ, թշնամաբար է տրամադրված նրա հանդեպ կամ ընդդիմանում է նրան:

2. Ի՞նչն է պատճառը, որ բանական արարածն ատում է այն Աստծուն, Ով գոյություն է տվել իրեն և անձնազոհաբար պահպանել է այն: Ինչո՞ւ է անկում ապրած մարդն ատում Աստծուն, և ինչո՞ւ է նա թշնամացած Աստծո հանդեպ: Համապատասխանեցրե՛ք ամեն մի ճշմարտությունը ճիշտ աստվածաշնչյան հատվածի հետ:

___ Հռոմեացիների 8.7

___ Հովհաննես 3.19,20, Կողոսացիների 1.21

___ Բ Տիմոթեոս 3.4

ա. Անկում ապրած մարդն ատում է Աստծուն, քանի որ նա սիրում է չարը և չարիք է գործում: Նա չի գալիս Աստծո մոտ, քանի որ վախենում է, որ իր չար գործերը կբացահայտվեն:

բ. Անկում ապրած մարդն ատում է Աստծուն, քանի որ նա սիրում է մեղավոր հաճույքներն ավելի, քան Աստծուն:

գ. Անկում ապրած մարդն ատում է Աստծուն, քանի որ նրա միտքն արատավորված և մարմնավոր է (այսինքն՝ այն բարոյապես ապականված է և սաստիկ ցանկանում է այն բաները, որոնց սուրբ և արդար Աստված դեմ է):

Գլուխ 9. Բարոյական անկարողություն

Մաս երեք. Մարդկային ուժի անկարողությունը

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՓՆՏՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Մենք ապրում ենք մի աշխարհում, որը լի է Ինքնահռչակ «Աստծուն փնտրող» մարդկանցով, սակայն Սուրբ գիրքն անվավեր է դարձնում նման պարծանքը մի պարզ հայտարարությամբ. «Չկա Աստծուն խնդրող (կամ՝ փնտրող)» (Հռոմեացիների 3.11)։ Շատ հաճախ մենք լսում ենք, թե ինչպես են նորադարձները սկսում իրենց վկայությունը հետևյալ բառերով. «Տարիներ շարունակ ես փնտրում էի Աստծուն»։ Բայց Սուրբ գիրքը կրկին պատասխանում է. «Ոչ ոք չի փնտրում Աստծուն»։ Մարդը լիովին անկում ապրած էակ է, որի բնությունն արատավորված և այլասերված է։ Նա ատում է Աստծուն և հակառակվում է Նրա ճշմարտությանը, քանի որ այն հանդիմանում է իրեն արատավորության և ապստամբության մեջ։ Նա չի ցանկանում գալ Աստծուն. իրականում, նա փորձում է անել այն ամենը, ինչ իր ուժերի մեջ է, որպեսզի փախչի Աստծուց և մոռանա Նրա մասին։ Աստված արդար է. մարդն օրինազանց է։ Այսպիսով, մարդը նույնքան հակված է փնտրելու Աստծուն, որքան հանցագործը հակված է փնտրելու դատական կատարածուի։ Եթե ինչ-որ մեկն անկեղծորեն փնտրում է Աստծուն, կա միայն մեկ պատճառ. Աստված գործում է նրա կյանքում՝ գրավելով նրան դեպի Իրեն։

1. Մարդիկ հաճախ են պնդում, որ իրենք փնտրում են ճշմարտությունը կամ փնտրում են Աստծուն։ Ինչպե՞ս են հետևյալ աստվածաշնչյան խոսքերը պատասխանում նման պնդումներին։

   ա. *Համաձայն Հռոմեացիների 1.18-ի, արդյո՞ք անկում ապրած մարդն անկեղծորեն փնտրում է Աստծուն։*

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բռնել» (կամ՝ «ճնշել») բառը թարգմանված է հունարեն ***«կատեխո»*** բառից, որը նշանակում է «բռնել կամ ետ պահել, զսպել, սահմանափակել կամ արգելել»։

   բ. *Համաձայն Հռոմեացիների 3.11-ի՝ արդյո՞ք անկում ապրած մարդն անկեղծորեն փնտրում է Աստծուն։*

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Փնտրել» բառը թարգմանված է հունարեն ***«էկզետե՛ո»*** բառից (***«էկ»*** կամ ***«էքս»*** = «ինչ-որ բանից» + ***«զետե՛ո»*** = «փնտրել»): Այս բառը նույնպես կարելի է թարգմանել որպես «փնտրել, հարցնել կամ ջանասիրաբար որոնել»:

2. Մենք սովորեցինք, որ անկում ապրած մարդը չի ցանկանում փնտրել Աստծուն: Որտեղի՞ց մարդուն նման հակակրանք Աստծո հանդեպ: Ինչո՞ւ անկում ապրած մարդը չի ցանկանում փնտրել Նրան: Ի՞նչ է Հովհաննես 3.19,20-ը սովորեցնում մեզ:

3. Սուրբ գիրքը սովորեցնում է, որ անկում ապրած մարդը չի ցանկանում (և այդ պատճառով չի կարող) փնտրել Աստծուն: Համաձայն Հիսուսի ուսուցումների՝ Հովհաննես 6.44 և Հովհաննես 6.66 խոսքերում, ի՞նչ պետք է տեղի ունենա, որպեսզի մարդը կարողանա փնտրել Աստծուն և Նրա փրկությունը:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քաշել» բառը 44-րդ խոսքում թարգմանված է հունարեն ***«հելկո»*** բառից, որը նշանակում է. «քարշ տալ, քաշել, ձիգ տալ»: Հունարենի աստվածաբաններ Լուվը և Նայդան սահմանում են այս բառը հետևյալ կերպով. «Քաշել կամ հրել՝ ուժ գործադրելով, ինչը հաճախ ենթադրում է հակառակություն. հարկադրաբար ձգել, տանել»[4]: Որպեսզի պարզ լինի, Աստված չի քաշում մարդկանց Իր մոտ՝ քարշ տալով իրենց կամքին հակառակ. փոխարենը, սկզբում Նա վերածնում է մարդկանց սրտերը՝ տալով նոր բնություն: Այս նոր բնությունը, որը վերածնված է Աստծո պատկերով, ունի նոր և արդար զգացմունքներ, որոնք անդիմադրելի կերպով գրավում են այդ մարդկանց Քրիստոսի մոտ:

[4] «Նոր կտակարանի Հունարեն-անգլերեն բառարան», 15.178:

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՀՆԱԶԱՆԴՎԵԼ ԵՎ ՀԱՃԵՑՆԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Բոլոր կրոնները՝ բացի քրիստոնեությունից, ունեն մեկ ընդհանուր հայտարար. նրանք հավատում են, որ արդար դիրքն Աստծո առջև հիմնված է հնազանդության, անձնական արժանիքների և Աստծուն հաճեցնելու կարողության վրա: Քրիստոնեությունն առանձնանում է նրանցից՝ հայտարարելով, որ մարդն ինքնին անհուսորեն կորսված և անօգնական է: Նա չի կարող բարելավել իր դիրքն Աստծո առջև, նա չի կարող հնազանդվել Աստծուն, և նա չի կարող հաճեցնել Աստծուն: Երբ խոսքը փրկության մասին է, միայն Աստված կարող է փրկել նրան: Անկում ապրած մարդն ամենից շատ ատում է հենց այս ճշմարտությունը, քանի որ այն պահանջում է, որ ինքը խոնարհվի Աստծո առջև, խոստովանի իր մեղքը և ողորմություն խնդրի:

1. Հռոմեացիների 8.7,8-ը Սուրբ գրքում մարդու բարոյական անկարողության ամենակարևոր նկարագրություններից է: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք բովանդակությանը, իսկ հետո բացատրե՛ք իմաստը: Ի՞նչ է հետևյալ արտահայտություններից յուրաքանչյուրը սովորեցնում մեզ այն մասին, որ մարդն անկարող է հնազանդվել և հաճեցնել Աստծուն:

ա. *«Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ՝ թշնամություն է» (խս. 7):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մարմնի խորհուրդը» կամ «մարմնավոր միտքը» վերաբերում է յուրաքանչյուր մարդու մտքին, որը դեռ գտնվում է դարձի չեկած վիճակում, վերածնված չէ և առանց Քրիստոսի է:

բ. *«Որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և կարող էլ չէ» (խս. 7):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն, որ անկում ապրած մարդն անկարող է հնազանդվել Աստծո օրենքին, ունի բարոյական պատճառ: Նա ունի անհրաժեշտ հայտնություն և հատկանիշներ՝ Աստծուն ճանաչելու և Նրան հնազանդվելու համար: Այնուամենայնիվ, նրա սերն անարդարության հանդեպ և անկախ լինելու ցանկությունն անհնարին են դարձնում հնազանդությունը:

գ. *«Եվ նրանք, որ մարմնով են, չեն կարող Աստծուն հաճո լինել» (խս. 8):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մարմնով» բառը վերաբերում է յուրաքանչյուրին, ով դեռ դարձի եկած չէ, վերստին ծնված չէ և առանց Քրիստոսի է: «Հաճո լինել» բառը թարգմանված է հունարեն ***«արեՀսկո»*** բառից, որը կարելի է նաև թարգմանել որպես «հավանություն ստանալ»: Անկում ապրած մարդը, ով առանց Քրիստոսի է, չի կարող ստանալ Աստծո հավանությունը:

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՓՈԽՎԵԼ ԿԱՄ ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ԻՐԵՆ

Քսաներորդ դարը սկսվեց մեծ լավատեսությամբ առ այն, որ մարդը կարող է զարգանալ՝ դառնալով ավելի վեհ և ազնիվ արարած: Այն պետք է լիներ բարեփոխումների դարաշրջան, սակայն ավարտվեց հուսահատությամբ և շփոթմունքով: Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է, որ մարդն ի ծնե հոգևորապես մահացած և բարոյապես արատավորված է: Բարեփոխման ցանկացած մարդկային փորձ անհույս է: Աստծուն հաճելի և Նրա համար ընդունելի դառնալու ցանկացած մարդկային փորձ կավարտվի բացարձակ ձախողմամբ: Մարդն ունի միայն մեկ հույս՝ Աստծո ողորմությունը և շնորհքը:

1. Մենք ցույց տվեցինք, որ մարդն անկարող է սիրել և փնտրել Աստծուն: Այժմ կդիտարկենք Սուրբ գրքի ուսուցումն այն մասին, որ մարդը չի կարող փոխվել, բարեկարգել իրեն և արդարացնել իրեն Աստծո առջև: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը այս ճշմարտության մասին:

ա. *Հոբ 9.29-31*

_____

_____

_____

_____

_____

բ. *Հոբ 14.4*

_____

_____

գ. *Երեմիա 2.22*

դ. *Երեմիա 13.23*

ԱՄՓՈՓՈՒՄ

Մարդը ծնված է մեղքի մեջ՝ ապականված բնությամբ, որը թշնամաբար է տրամադրված Աստծո և Նրա կամքի հանդեպ: Ավելին՝ նա չի կարող բարեփոխել իրեն կամ որևէ կերպով ընդունելի դառնալ Աստծո համար: Մարդու դրությունն իսկապես որ անհույս է՝ առանց Աստծո ողորմության: Միայն Աստված կարող է մարդուն հաշտեցնել Իր հետ Հիսուս Քրիստոսի քավչարար աշխատանքի միջոցով, և վերափոխել նրան՝ Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով: Մարդկությունը չի կարող փրկվել անկախությամբ, սեփական ուժերին հուսալով կամ սեփական անձը բարեկարգելով. փրկության ճանապարհը վերադարձն է միակ Աստծուն՝ Նրա Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով:

Գլուխ 10. Ստրկացում սատանային

Մինչև մեղքի հատկանիշները և համընդհանուր բնույթն ուսումնասիրելը կարևոր է դիտարկել անկում ապրած մարդու հարաբերությունը սատանայի հետ: Մենք կտեսնենք, որ անկում ապրած մարդը ոչ միայն օտարացած է Աստծուց, այլև միաբան է սատանայի թշնամանքին և ապստամբությանը Նրա դեմ:

Սկզբում Ադամն ազատ էր. նա կարող էր հնազանդվել Աստծուն և տիրել ամբողջ երկրին: Աստծո դեմ ապստամբելու արդյունքում և՛ նա, և՛ նրա ցեղն ընկան ապականության և ստրկության մեջ: Անկումից ի վեր, Ադամի որդիներից և դուստրերից յուրաքանչյուրը ծնվում է մեղքի գերության մեջ և ստրկացված սատանային: Թեև քչերն են սատանայի «հետևորդներ» համարում իրենց, Սուրբ գիրքը վկայում է, որ բոլոր մարդիկ ծնվել են սատանայի տիրապետության ներքո և ստրկացված են նրանից՝ նրա կամքը կատարելու համար: Թեև մենք կարող ենք օգտագործել «ստրկացում» բառը, մենք պետք է հասկանանք, որ մարդն իր կամքին հակառակ պահվող զոհ չէ: Անկում ապրած մարդը հանցագործ է, որը մերժել է Աստծո իշխանությունը և հանձնվել է սատանայի իշխանությանը:

ՍԱՏԱՆԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք պետք է շատ զգույշ լինենք, երբ խոսում ենք սատանայի իշխանության և զորության մասին: ***Այնպես չէ***, որ Աստված և սատանան հավասար ուժեր են, որոնք պայքարում են տիեզերքը գրավելու համար: Սատանան սահմանափակ արարած է, որին ստեղծել է Աստված, և որի հանդեպ Նա բացարձակ գերիշխանություն ունի: Թեև սատանայի ապստամբությունն Աստծո դեմ նրա իսկ որոշումն էր, այն սահմանված և թույլատրված էր Աստծո կողմից՝ Իր նպատակների և փառքի համար:

Առանց ժխտելու կամ փոքրացնելու ճշմարտությունն Աստծո բացարձակ գերիշխանության մասին, մենք կարող ենք ասել, որ այս անկում ապրած աշխարհը և դրա անկում ապրած բնակիչները գտնվում են չարի իշխանության ներքո՝ իրական իմաստով: Սուրբ գիրքը բազմիցս վկայում է այս ճշմարտության մասին:

1. Ղուկաս 4.5,6-ում սատանան մի հայտարարություն է անում իր կարգավիճակի և այս անկում ապրած աշխարհի հետ իր հարաբերության մասին: Ի՞նչ է նա հայտարարում, և ի՞նչ է դա նշանակում:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է նշել երկու բան: Առաջինը, Հիսուսը չի վիճում սատանայի պնդման հետ. սատանան իրականում իշխանություն ունի այս աշխարհում: Երկրորդը, սատանան պարծենում է՝ պնդելով, որ այն «տրվել» է իրեն: Սատանայի իշխանությունը և՛ թույլատրված է, և՛ սահմանափակված է Աստծո կողմից:

2. Կարևոր է հասկանալ, որ սատանայի պնդումը Ղուկաս 4.6-ում դատարկ պարծանք չէ: Ի՞նչ է սովորեցնում Ա Հովհաննես 5.19-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշունչը հայտարարում է, որ այս անկում ապրած աշխարհը և դրա անկում ապրած բնակիչները գտնվում են սատանայի ձեռքում: Անկում ապրած մարդը ձգտում է անկախ լինել Աստծուց, և դրանով նա անգիտակցաբար դարձնում է իրեն սատանայի ստրուկը: Սա վախ ներշնչող ճշմարտություն է:

3. Աստվածաշնչում անունը կարևոր է, և այն հաճախ որոշակի տեղեկություն է հաղորդում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ և տիտղոսներ են տրվում սատանային հետևյալ աստվածաշնչյան խոսքերում:

   ա. *Այս Ա_____ Ի_____ (Հովհաննես 12.31, 14.30, 16.11):* Աստված ունի բացարձակապես գերիշխան դիրք ամեն ինչում, բայց սատանային այս անկում ապրած աշխարհին տիրելու իշխանություն է տրվել՝ իրական իմաստով: Եթե աշխարհն այսպիսի իշխան ունի, մի՞թե արժե զարմանալ, որ այն լցված է չարիքով, իսկ անկում ապրած մարդը գտնվում է նման թշվառ վիճակում:

   բ. *Այս Ա_____ Ա_____ (Բ Կորնթացիների 4.4):* Սուրբ գիրքն անվերապահորեն վկայում է, որ կա միայն մեկ Աստված: Սատանան այստեղ անվանվում է «այս աշխարհի աստված» այն իմաստով, որ գործադրում է իր իշխանությունն այս աշխարհում: Անկում ապրած մարդիկ դարձրել են նրան իրենց «աստվածը» և ապրում են համաձայն նրա կամքի:

   գ. *Օ_____ Ի_____ Ի_____ (Եփեսացիների 2.2):* Սատանան հոգի է, և նա ենթակա չէ այն նյութական խոչընդոտներին, որոնք սահմանափակում են մարդուն: Իր զորությամբ և իշխանությամբ նա մեծապես գերազանցում է ցանկացած երկրային իշխանի:

ՍԱՏԱՆԱՆ ԵՎ ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ

Ե՛վ սատանան, և՛ մարդն անկում ապրած էակներ են, և նրանք շատ ընդհանրություններ ունեն: Նրանք նման են իրենց բարոյական ապականությամբ և Աստծո հանդեպ թշնամանքով: Թեև այս փաստն անընդունելի է շատերի համար, այն ճշմարիտ է: Անկում ապրած մարդը և սատանան բարոյապես այնքան նման են, որ նախքան դարձը բոլոր մարդիկ համարվում են ոչ միայն սատանայի ենթակաները, այլև նրա զավակները:

1. Մեր սուրբգրային ուսումնասիրությունից իմացանք, որ սատանան անկում ապրած ադամական ցեղի և՛ իշխանն է, և՛ աստված, և որ նա գործում է մարդկանց միջև: Ինչպե՞ս է Սուրբ գիրքը նկարագրում անկում ապրած մարդուն: Լրացրե՛ք բաց թողնված բառերը, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը:

ՀԱՍԿԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. *Անկում ապրած մարդը Ս_____ Ո_____ է (Ա Հովհաննես 3.8-10, կարդացեք նաև Հովհաննես 8.44):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշունչը մերժում է գաղափարն Աստծո համընդհանուր հայրության մասին (այսինքն, որ Աստված դարձրել է բոլոր մարդկանց Իր զավակները): Փոխարենը, Ադամի ցեղը բաժանված է երկու խմբի: Կան ***սատանայի որդիներ***, որոնք մերժում են Աստծո ողորմած առաջարկը և շարունակում են ապստամբել Նրա դեմ: Նրանք ցույց են տալիս, որ սատանայի որդիներ են՝ կատարելով իրենց հայր սատանայի մեղսալի գործերը: Եվ կան ***Աստծո որդիներ***, որոնք ընդունում են Աստծո ներումը և որդեգրությունը Հիսուս Քրիստոսի քավչարար մահվան միջոցով: Նրանք ցույց են տալիս, որ Աստծո որդիներ են՝ կատարելով իրենց երկնային Հոր արդար գործերը:

բ. *Անկում ապրած մարդն ապրում է Ս_____ Ի_____ ներքո (Գործք 26.18, կարդացեք նաև Կողոսացիների 1.13):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Իշխանություն» բառը վերաբերում է սատանայի տիրապետությանը, ազդեցությանը և իրավազորությանը: Սատանայի իշխանության ներքո ապրելը նշանակում է ապրել նրա կառավարման ներքո:

գ. *Անկում ապրած մարդն ապրում է օդի իշխանության իշխանի Ի_____ Պ_____ (Եփեսացիների 2.2):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պես» բառը թարգմանված է հունարեն ***«կատա՛»*** նախդիրից, որն այս համատեքստում նշանակում է համաձայնություն կամ համապատասխանություն: «Օդի իշխանության իշխան» տիտղոսը հայտնում է երկու կարևոր ճշմարտություն. (1) սատանան ունի որոշակի գերիշխանություն մարդկության վրա, և (2) սատանան հոգի է, և նա ենթակա չէ այն նյութական խոչընդոտներին, որոնք սահմանափակում են մարդուն: Իր զորությամբ և իշխանությամբ նա մեծապես գերազանցում է ցանկացած երկրային իշխանի:

դ. *Անկում ապրած մարդը որսացված է Ս_____ Ո_____ (Բ Տիմոթեոս 2.26):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Որոգայթը կամ օղաթոկը ծուղակի տեսակ է, որն օգտագործում էին հին ժամանակներում՝ թռչուններ և կենդանիներ որսալու համար: Այն թաքնված գործիք է, որը հանկարծակի և անսպասելի կապ է գցում կենդանուն, և սատանայի մահացու գործի գերազանց օրինակ է:

ե. *Անկում ապրած մարդը Ո_____ է սատանայի Կ_____ ծառայելու համար (Բ Տիմոթեոս 2.26):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սատանան որսում է մարդկանց, որպեսզի ստրկացնի և օգտագործի՝ իր կամքն այս անկում ապրած աշխարհում կատարելու համար: Կրկին, կարևոր է նշել, որ մարդը սատանայի դժկամ զոհը չէ. նա օրինազանց հանցագործ է, որն անհնազանդությամբ միացել է սատանային:

2. Մեր սուրբգրային ուսումնասիրությունից իմացանք, որ սատանան նկարագրվում է որպես անկում ապրած ադամական ցեղի իշխան և աստված: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան խոսքերի, ինչպե՞ս է նա գործում անկում ապրած մարդկանց միջև: Ինչպե՞ս է նա ենթարկում նրանց իրեն և ստրկացնում՝ իր կամքը կատարելու համար: Դիտարկե՛ք հետևյալ աստվածաշնչյան պնդումները և գրի առեք ձեր մտքերը թվարկված մեթոդների մասին:

ա. *Սատանան թաքցնում է իր ճշմարիտ ինքնությունը (Բ Կորնթացիների 11.14,15):*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդկության պատմության ամբողջ ընթացքում սկիզբ են առել անթիվ աստվածաբանական շեղումներ և հերձվածություններ: Դրանց հեղինակներն անտեսել են Աստծո Խոսքը և տարածել են ուսմունքներ, որոնք իրենք ենթադրաբար ընդունել են ձայների, տեսիլքների, երազների կամ հրեշտակային այցելությունների միջոցով:

բ. *Սատանան ստում է և խաբում է (Հովհաննես 8.44, Հայտնություն 12.9):*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը սովորեցնում է, որ ճշմարտությունը ճանաչելն ազատ է արձակում մարդուն (տե՛ս Հովհ. 8.32)։ Այնպես որ, զարմանալի չէ, որ ճշմարտությունը ստի վերածելը սատանայի ամենից հաճախակի գործածվող և ազդեցիկ զենքն է՝ մարդկանց ստրկության և մահվան տանելու համար։

գ. *Սատանան կուրացնում է մարդկանց ճշմարտության հանդեպ (Բ Կորնթացիների 4.4)։*

ՆՇՈՒՄՆԵՐ. Սատանայի իշխանությունը բաղկացած է խավարից, տգիտությունից, բարոյական ապականությունից և մահից։ Նա կուրացնում է Աստծո դեմ ապստամբող մարդկանց խաբեությամբ, շփոթությամբ, ունայնությամբ և հպարտությամբ։ Այս կուրությունը կարող է հեռացվել միայն Ավետարանի լույսով և Սուրբ Հոգու լուսավորող աշխատանքով։ Հիսուսը եկավ կույրերին տեսողություն տալու համար (տե՛ս Ղուկ. 4.18)։ Պողոս առաքյալի ծառայության նպատակն էր. «...[մարդկանց] աչքերը բանալու և խավարից դեպի լույսը դարձնելու և սատանայի իշխանությունից՝ դեպի Աստված, որ նրանք մեղքերի թողություն և սրբերի հետ ժառանգություն առնեն՝ [Քրիստոսին] հավատալով» (Գործք 26.18)։

դ. *Սատանան գայթակղեցնում է (Մատթեոս 4.3, Ա Թեսաղոնիկեցիների 3.5)։*

ՆՇՈՒՄՆԵՐ. Սատանան գայթակղեցնում է մարդկանց, և դրա համար էլ փորձիչ է կոչվում: «Փորձել» բառը թարգմանված է հունարեն ***«պեյրա՛զո»*** բառից, որը նշանակում է «գայթակղեցնել, փորձել, ստուգել»: Երբ այս բառը վերաբերում է Աստծո գործերին մարդկանց հետ, այն մշտապես ենթադրում է մարդկանց փորձելն ու ստուգելը՝ նրանց ավելի խորը սրբացման առաջնորդելու համար: Հակոբոսը գրում է. «Նա, ով փորձության մեջ է, չասի, թե «Աստծուց եմ փորձվում», որովհետև Աստված չար բաներով չի փորձվում, Ինքն էլ ոչ մեկին չի փորձում» (Հակոբոս 1.13): Երբ այս բառն օգտագործվում է սատանայի վերաբերյալ, այն նշանակում է գայթակղություն, որի նպատակը մարդկանց մեղքի դրդելն է: Կարևոր է նշել, որ երբ մարդը մեղանչում է գայթակղության պատճառով, նա չունի արդարացման ոչ մի հիմք և չի կարող բարդել մեղքը սատանայի վրա: Յուրաքանչյուրն ինքն է պատասխանատու և հաշվետու իր արարքների համար: Հակոբոսը շարունակում է 14-րդ խոսքում. «Բայց ամեն մեկը փորձվում (կամ՝ գայթակղվում) է բուն իր ցանկությունից հրապուրված և խաբված»:

Գլուխ 11. Մեղքի էությունը և համընդհանուր բնույթը

ՄԵՂՔԻ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Որպեսզի սկսենք ուսումնասիրել յուրաքանչյուր մարդու անձնական մասնակցությունն Ադամի ապստամբությանը, մենք պետք է ճիշտ պատկերացում կազմենք մեղքի բնույթի մասին: Դրա համար անհրաժեշտ է դիտարկել մեղքի բազմաթիվ հատկանիշները և դրսևորումները՝ այնպես, ինչպես որ դրանք նկարագրված են Աստվածաշնչում: Անելով դա՝ կբացահայտենք, որ մեղքը շատ ավելին է, քան սխալմունքը բարոյական դատողությունների մեջ կամ, նույնիսկ, անհնազանդությունը որևէ անանձնական օրենքի: Մեղքը հանցանք է Աստծո Անձի դեմ: Մեր ուսումնասիրության մեջ մենք չպետք է պարզապես հասկացությունների սահմանումներ տանք. մենք պետք է վերականգնենք աստվածաշնչյան պատկերացումը ***մեղքի մեղավորության*** մասին: Մենք ապրում ենք այնպիսի աշխարհում և երկրպագում ենք այնպիսի եկեղեցիներում, որտեղ մարդիկ մեծ մասամբ այլևս չեն հասկանում մեղքի զարհուրելի բնույթը. այդ իսկ պատճառով, մենք պետք է ջանք գործադրենք, որպեսզի կրկին բացահայտենք այն, ինչ կորսված է: Մեր պատկերացումն Աստծո մասին և այն մասին, թե որքան վեհ է մեր փրկությունը Քրիստոսում, կախված է սրանից:

Մեղքը մշտապես ուղղված է Աստծո դեմ

Նախևառաջ, ցանկացած մեղք դեմ է Աստծուն և անարգանք է Նրա Անձի հանդեպ: Աստվածային պատվիրանին անհնազանդ լինելը նշանակում է բռունցք թափահարել Նրա դեմ, Ով կյանք է տալիս և տիրում է բոլորին: Այսօր, եթե մարդիկ ընդհանրապես խոսում են մեղքի մասին, նրանք նկատի ունեն, որ մեղքն ուղղված է մարդու դեմ, հասարակության դեմ կամ նույնիսկ բնության դեմ, բայց մենք հազվադեպ ենք լսում այն մասին, որ մեղքն ուղղված է Աստծո դեմ: Մարդը բարի է համարվում, եթե նա ունի լավ հարաբերություններ մարդկանց հետ, նույնիսկ եթե իր կյանքում նա լիովին անտեսում է Աստծուն և Նրա կամքը: Հաճախ հարց է հնչում, թե ինչպես Աստված կարող է դատել որևէ աթեիստի, որը բարի մարդ է, բայց սա ցույց է տալիս կուրությունն այն փաստի հանդեպ, որ ցանկացած անձնավորություն, որն անտեսում է իր Ստեղծողին և ոչնչի պես է համարում Նրան, Ով տալիս է իրեն ամեն ինչ, չի կարող բարի համարվել: Սուրբ գրքում գրված է, որ Դավիթը ստեց իր հպատակներին, շնություն գործեց և նույնիսկ անմեղ մարդու սպանություն կազմակերպեց: Այնուամենայնիվ, հանդիմանվելով իր մեղքերի մեջ՝ նա աղաղակեց Աստծուն. «Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առջև գործեցի» (Սաղմոս 51.4): Դավիթը գիտեր, որ ցանկացած մեղք, նախևառաջ, ուղղված է Աստծո դեմ: Քանի դեռ մարդը չի հասկանում այս ճշմարտությունը, նա չի կարող հասկանալ մեղքի զարհուրելի բնույթը:

Մեղքը՝ Աստծուն չսիրելն է

Մեծագույն մեղքը մեծագույն պատվիրանի խախտումն է. «Եվ սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ սրտով և ամբողջ անձով և ամբողջ մտքով և ամբողջ զորությունով» (Մարկոս 12.30): Քրիստոսը հայտարարեց. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք» (Հովհաննես 14.15): Այնպես որ, ցանկացած անհնազանդություն Աստծո հանդեպ՝ սիրո բացակայության ցուցանիշ է: Սա է պատճառը, որ ցանկանալով

ապացուցել մարդկության արատավորությունը Հռոմեացիների թղթի առաջին երեք գլուխներում, Պողոս առաքյալն անվանեց Ադամի ցեղն «աստվածատողներ» (Հռոմեացիների 1.30)։ Անկարելի է ավելի մեծ մեղադրանք ներկայացնել անկում ապրած մարդուն։ Աստծո հանդեպ սիրո բացակայությունն ամեն տեսակի ապստամբության հիմքն է։ Մարդը կարող է խիստ կրոնական և բարեխիղճ լինել աստվածային օրենքի և պարտականությունների հարցում, սակայն, միևնույն է, սարսափելի մեղավոր համարվել Աստծո առջև, եթե նրա հնազանդությունը դրդված է ցանկացած բանով՝ Աստծո սիրուց բացի։

Մեղքն Աստծուն չփառավորելն է

Աստվածաշունչը հայտարարում է, որ մարդը ստեղծված է Աստծո փառքի համար, և որ այն ամենը, ինչ մարդն անում է, նույնիսկ ամենահասարակ բաները, ինչպիսիք են ուտելը և խմելը, պետք է արվեն Աստծո փառքի համար (տե՛ս Ա Կորնթ. 10.31)։ Աստծուն փառավորելը նշանակում է գնահատել Աստծո արժեքն ամեն ինչից առավել, բերկրանք զգալ Աստծո մեջ, բավականություն զգալ Նրանում, ապրել Աստծո առջև երկյուղածությամբ, գոհությամբ և երկրպագությամբ, որոնք վայելում են Նրան։ Մեղքն Աստծուն փառավորելու ուղիղ հակադրությունն է։ Երբ մարդը մեղանչում է, նա հակառակվում է իր ստեղծման նպատակին։ Մեղավոր մարդը՝ որպես ստեղծված, հեռացել է իր դիրքից և խեղաթյուրել է իր գոյության իսկ պատճառը։ Նա փոխարինել է Աստծուն իրենով, իսկ Աստծո կամքը՝ ինքնորոշմամբ։ Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև Աստծուն ճանաչելով՝ Նրան Աստծո պես չփառավորեցին» և «Որոնք Աստծո ճշմարտությունը ստության հետ փոխեցին և երկրպագեցին և պաշտեցին ստեղծվածներին, քան թե Ստեղծողին, որ օրհնյալ է հավիտյան» (Հռոմեացիների 1.21,25)։ Մեղքի արմատները շատ ավելի խորն են, քան կարող է թվալ առաջին հայացքից։ Մեղանչելով՝ մարդը հրաժարվում է ընդունել Աստծո՝ Աստված լինելու իրավունքը։ Մեղանչելով՝ մարդը որոշում է կայացնում դասել իրեն վեր իր Արարչից, զավթել Նրա գահը և գողանալ Նրա փառքը։ Մեղանչելով՝ մարդն ըստ էության հրաժարվում է փառավորել Աստծուն՝ որպես Աստված։ Մեղքը դրսևորվում է, երբ մարդը փնտրում է իր փառքն ավելի, քան Աստծունը։

Մեղքն անաստվածության և անբարեպաշտության է

«Անաստվածություն» բառը նշանակում է, որ մարդը հրաժարվում է ընդունել Աստծուն՝ որպես Աստված, և ցանկանում է ապրել «անաստված» կերպով՝ ազատ Նրա գերիշխանությունից և օրենքից։ «Անբարեպաշտություն» բառը նշանակում է, որ մարդը հրաժարվում է կերպարանվել Աստծո բնավորության և կամքի համեմատ և ձգտում է բարոյական արատավորության՝ Աստծուն նմանվելու փոխարեն։ Ասում են, որ մեծագույն հաճոյախոսությունը, որը կարելի է անել մարդուն, այն է, որ ցանկություն հայտնեք լինել ***նրա հետ*** և ***նմանվել նրան***։ Մեղքը ցույց է տալիս, որ մարդն իր ներսում ցանկանում է ապրել ***առանց Աստծո*** և ***տարբերվել Նրանից***։ Սա մեծ անարգանք է Աստծո հանդեպ։

Մեղքն ապստամբության և անհնազանդության է

Աստվածաշունչը հայտարարում է Ա Թագավորաց 15.23-ում. «Որովհետև ապստամբությունը կախարդության մեղքի պես, և անհնազանդությունը կռապաշտության պես է»։ «*Ապստամբություն*» բառը թարգմանված է եբրայերեն «***մերի***» բառից, որը նշանակում է «լինել ըմբոստ, ապստամբ և անհնազանդ»։ «*Անհնազանդություն*» բառը թարգմանված է եբրայերեն ***«պատսար»*** բառից, որը բառացիորեն նշանակում է «բոթել կամ հրել»։ Այն նկարագրում է համառ, անպատկառ, ամբարտավան, մեծամիտ և հանդուգն մարդու։ Գոյություն չունեն փոքր մեղքեր, քանի որ յուրաքանչյուր մեղք ապստամբություն և անհնազանդություն է։ Ցանկացած տեսակի ապստամբության մեջ լինելը նույնքան չարիք է, որքան հեթանոսական կամ դիվային ծեսի մասնակցելը։ Ցանկացած տեսակի անհնազանդության մեջ լինելը նույնքան չարիք է, որքան ծանր հանցանքի մասնակցելը կամ սուտ աստծո երկրպագելը։

Մեղքն անօրինություն է

Առաջին Հովհաննես 3.4-ում Սուրբ գիրքը հայտարարում է. «Նա, ով մեղք է գործում, անօրինություն էլ է անում, և մեղքն է անօրինությունը»: «Անօրինություն» բառը թարգմանված է հունարեն ***«անոմի՛ա»*** բառից («***ա***» = «առանց, ոչ» + «***նոմոս***» = «օրենք»): «Անօրինություն» գործելը նշանակում է ապրել «առանց օրենքի» կամ այնպես, ասես Աստված երբեք չի հայտնել Իր օրենքը մարդկությանը: Մարդը կարող է «անօրինություն գործել»՝ բացահայտ կերպով անարգելով Աստծո կանոնները և օրենքները, կամ պարզապես լինելով անհոգ և անիրազեկ՝ իր իսկ կամքով: Երկու դեպքում էլ մարդն անարգանք է ցուցաբերում Աստծո և Նրա օրենքի հանդեպ:

Մեղքն անհավատարմություն և ուխտադրժություն է

«Ուխտադրժություն» բառը նշանակում է խաբեություն կամ անհավատարմություն մեկ այլ անձի հանդեպ: Ուխտադրժությունն արտահայտվում է ամբողջ Աստվածաշնչում՝ ամեն տեսակի մեղքերով (տե՛ս Եզեկիել 18.24), ապստամբությամբ (տե՛ս Եսայի 48.8), ճշմարիտ Աստծուն հանուն կուռքերի թողնելով (տե՛ս Ա Մնաց. 5.25) և նահանջի կամ Աստծուց շրջվելու ցանկացած ձևով (տե՛ս Սաղմ. 78.57): Ցանկացած մեղք գործելով՝ մենք դավաճանում ենք Նրան, Ով ստեղծեց մեզ և սիրով պահպանում է մեր կյանքերը:

Մեղքը պղծություն է

Մեղքը, ավելի քան ցանկացած այլ բան, պղծություն է Աստծո համար: Պղծությունն այնպիսի բան է, ինչը զզվելի, խորշելի, վանող կամ ծայրաստիճան նողկալի է Աստծո համար և Նրա ատելության առարկան է (տե՛ս Առակ. 6.16): Աստվածաշնչում ամեն մեղք պղծություն է, և մեղանչելը նշանակում է պիղծ կերպով վարվել (տե՛ս Եզեկիել 16.52): Առակաց 28.9-ը հայտարարում է. «Ով որ մերժի իր ականջն օրենք լսելուց, նրա աղոթքն անգամ գարշելի (կամ՝ պիղծ) է»: Առակաց 15.8,9-ը հայտարարում է, որ անօրեն մարդկանց կենսաոճը և զոհերը զզվելի են Տիրոջ համար: Ամեն տեսակի կռապաշտություն (տե՛ս Երկր. Օր. 7.25) և անարդար արարք (տե՛ս Երկր. Օր. 25.16) գարշելի և պիղծ է Տիրոջ առջև, և նույնպես ցանկացած անձ, որը խոտորվում է (տե՛ս Առակ. 3.32, 15.26), ստախոս է (տե՛ս Առակ. 12.22), այլասերված է սրտով (տե՛ս Առակ. 11.20) կամ հպարտ է իր սրտում (տե՛ս Առակ. 16.5): Հայտնություն 21.8,27-ում Սուրբ գիրքն ամփոփում է սա զգուշացմամբ, որ պիղծ և պղծություն գործող մարդիկ հավիտենական պատիժ կկրեն:

Մեղքը՝ նշանակետից վրիպելն է

Հին ուխտում «մեղք» իմաստն ունեցող ամենահաճախ հանդիպող եբրայերեն բառը ***«խաթա»***-ն է, որը նշանակում է «վրիպել, շեղվել ճանապարհից կամ գնալ սխալ ճանապարհով»: Այն օգտագործվում է Դատավորաց 20.16-ում, որում գրված է, որ Բենիամինի մարդիկ պարսատիկով քար էին գցում մազի վրա՝ առանց «սխալվելու» (կամ՝ «վրիպելու»): Այն նույնպես օգտագործվում է Առակաց 19.2-ում՝ զգուշացնելու համար, որ իր ոտքերով շտապողը «կսահի» (կամ՝ «կմոլորվի», «կկորցնի ճանապարհը», ESV): Նոր կտակարանում «մեղք» իմաստն ունեցող ամենահաճախ հանդիպող հունարեն բառը ***«համարտանո»***-ն է, որը նույնպես կարելի է թարգմանել «վրիպել, շեղվել ճանապարհից կամ սխալվել»: Համաձայն Սուրբ գրքի, այն նշանակետը կամ նպատակը, որին մարդը պետք է դիպչի, Աստծո կամքն է: Ցանկացած միտք, խոսք կամ արարք, որը չի համապատասխանում Աստծո կամքին, մեղք է: Կարևոր է նշել, որ մեղքը («***խաթա***»-ն կամ «***համարտանո***»-ն) երբեք չի դիտարկվում որպես անմեղ սխալ կամ միամիտ ձախողում. փոխարենը, այն մշտապես դիտարկվում է որպես միտումնավոր անհնազանդություն, որը բխում է մարդու բարոյական ապականությունից և Աստծո դեմ ապստամբությունից:

Մեղքը՝ սահմանը խախտելն է

Հին կտակարանում «խախտել» (կամ՝ «զանց անել») բառը թարգմանված է եբրայերեն «***աբար***» բառից, որը նշանակում է «հատել, վրայով անցնել, միջով անցնել կամ շրջանցել»: Աստծո պատվիրանը խախտելը նշանակում է զանց անել այն, ինչը թույլատրված է Նրա պատվիրաններով, անտեսել Աստծո օրենքով որոշված սահմանափակումները և անցնել ցանկապատի մյուս կողմը: Նոր կտակարանում «խախտել» (կամ՝ «զանց անել») բառը թարգմանված է հունարեն «**պարաբաինո**» բառից, որը նշանակում է «կողքով անցնել, վրայով անցնել կամ վրայով քայլել»: Մատթեոս 15.2,3-ում գրված է «**պարաբաինո**»-ի իմաստն արտացոլող գերազանց օրինակ: Փարիսեցիները հարցրին Հիսուսին. «Ինչո՞ւ համար Քո աշակերտները ծերերի ավանդությունը զանց են անում (**պարաբաինո**), որովհետև իրենց ձեռքերը չեն լվանում, երբ որ հաց են ուտում»: Հիսուսը պատասխանեց. «Ապա դուք ինչո՞ւ եք Աստծո պատվիրանը զանց անում (**պարաբաինո**) ձեր ավանդության համար»:

ՄԵՂՔԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԸ

Այժմ, երբ որոշակի պատկերացում կազմեցինք մեղքի մեղավորության մասին, մենք պետք է ուղղենք մեր ուշադրությունը Սուրբ գրքի ամենակարևոր վարդապետություններից մեկին՝ ***մեղքի համընդհանուր բնույթին:*** Մեղքը հազվագյուտ կամ անսովոր երևույթ չէ, որը սահմանափակվում է մարդկային ցեղի որոշակի փոքրամասնությամբ. այն համընդհանուր է իր ազդեցության շրջանակով: Աստվածաշունչը պարզորեն հայտնում է, որ «ամենքը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են» (Հռոմեացիների 3.23): Չկա մեկը Ադամի ցեղից, ով չի միացել նրա սկսած ապստամբությանը: Այս ճշմարտությունը ժխտող մարդիկ պետք է ժխտեն Սուրբ գրքի, մարդկության պատմության և իրենց մեղավոր մտքերի, խոսքերի և արարքների վկայությունը:

1. Հռոմեացիների 3.23-ն Աստվածաշնչի ամենակարևոր խոսքերից մեկն է բոլոր մարդկանց մեղավորության և անհնազանդության մասին: Ի՞նչ է այս խոսքը սովորեցնում մեզ:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեղանչել» բառը թարգմանվում է հունարեն «***համարտանո***» բառից, որը նշանակում է «վրիպել, շեղվել ճանապարհից կամ սխալվել»: «Աստծո փառքից պակասված են» բայական կապակցությունը, հավանաբար, հղում է այն մասին, որ մարդն անկարող է մշտապես անել ամեն ինչ Աստծո փառքի, պատվի և հաճության համար: Մեկ այլ հատվածում Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև Աստծուն ճանաչելով՝ Նրան Աստծո պես չփառավորեցին» (Հռոմեացիների 1.21):

2. Սուրբ գիրքը լի է անթիվ հղումներով այն մասին, որ մարդը մեղավոր է և միտումնավոր անհնազանդ է Աստծուն և Նրա կամքին: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը մարդկանց համընդհանուր անհնազանդության մասին:

ա. *Գ Թագավորաց 8.46*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեղք» բառը թարգմանված է եբրայերեն «***խաթա***» բառից, որը նշանակում է «վրիպել, շեղվել ճանապարհից կամ գնալ սխալ ճանապարհով»:

բ. *Սաղմոս 143.2*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արդար» բառը թարգմանված է եբրայերեն «***ցադեկ***» բառից, որը նշանակում է «լինել ուղիղ կամ արդար»: Սուրբ գրքում Աստծո Անձը և կամքը ամեն արդարության չափանիշն են: Արդար լինելը նշանակում է կերպարանվել Աստծո բնավորությանը և կամքին:

գ. *Առակաց 20.9*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեղք» բառը թարգմանված է եբրայերեն «***խաթա***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում):

դ. *Ժողովող 7.20*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արդար» բառը թարգմանված է եբրայերեն «***ցադիկ***» բառից, որը մատնանշում է արդար, ուղիղ և անարատ մարդու: «Մեղանչել» բառը թարգմանված է եբրայերեն «***խաթա***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում):

ե. *Եսայի 53.6*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այստեղ մենք ոչ միայն լսում ենք աստվածային դատավճիռը մարդկային մեղավորության վերաբերյալ, այլև տեսնում ենք միակ հնարավոր փրկությունը՝ Մեսիային, Ով կրում է մարդկության մեղքը, Իր վրա է վերցնում Աստծո զայրույթը և մահանում է մարդու փոխարեն (խոսքեր 4,5,10):

3. Հռոմեացիների 3.9-12-ում գրված են մի շարք հինկտակարանյան մեջբերումներ, որոնք Պողոս առաքյալն օգտագործում է՝ ցույց տալու համար մարդկության համընդհանուր մեղավորությունն Աստծո առջև և միտումնավոր անհնազանդությունը Նրան: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը ստորև բերված ամեն մի հատվածի վերաբերյալ.

ա. *Եվ հիմա ի՞նչ: Ավելի՞ ենք: Ամենևին՝ ո՛չ: Որովհետև առաջ մեղադրեցինք հրեաներին և հեթանոսներին, թե ամենը մեղքի տակ են (խս. 9):*

բ. *Ինչպես որ գրված է, թե. «Արդար չկա, մեկն էլ չկա» (խս. 10):*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արդար» բառը թարգմանված է հունարեն «***դիկայիոս***» բառից, որը մատնանշում է այն, ինչն ուղիղ, արդար, անարատ և անմեղ է: Նման իր եբրայերեն համարժեքին («***ցադիկ***»), այն կրում է Աստծո բնությանը և կամքին կերպարանվելու գաղափարը:

գ. *Չկա իմացող, չկա Աստծուն խնդրող (խս. 11):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք պետք է հիշենք, որ գիտելիքի բացակայությունն անմիջական կապ ունի մարդու ապստամբության և անհնազանդության հետ: Մարդն անտեղյակ է Աստծո մասին իր իսկ կամքով, քանի որ նա ճնշում է ճշմարտությունը (տե՛ս Հռոմ. 1.18) և չի ցանկանում ճանաչել Նրա ճանապարհները (տե՛ս Հոբ 21.14,15): Հովհաննես 3.19,20-ում գրված է այն մասին, թե ինչու մարդը չի փնտրում Աստծուն՝ Նրա պայմաններով:

դ. *Ամենքը խոտորվեցին, միասին անպիտան եղան (խս. 12):*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Խոտորվել» բառը թարգմանված է հունարեն «***էկկլինո***» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «ծռել, շեղվել կամ խեղաթյուրել»: «Անպիտան» բառը թարգմանված է հունարեն «***ախրեիո՛ն***» բառից, որը մատնանշում է որևէ անձի կամ որևէ իր, որն անօգուտ կամ անպետք է դարձել:

ե. *Չկա բարություն անող, մինչև մեկն էլ չկա (խս. 12):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա ազդեցիկ մեղադրանք է՝ ուղղված յուրաքանչյուրին, ով հավատում է, որ հնարավոր է արդար դիրք ունենալ Աստծո առջև սեփական արժանիքներով:

4. Սուրբ գրքի վկայությունը մարդկանց դեմ հակառակ է՝ տարածված հումանիստական համոզմունքին այն մասին, որ մարդն ի ծնե բարի է: Այս պատճառով, շատերն այսօր ժխտում են աստվածաշնչյան տեսանկյունը մարդու վերաբերյալ՝ ընտրելով ավելի դրական կարծիք: Ի՞նչ զգուշացում է տրված Ա Հովհաննես 1.8-10-ում այն մարդկանց, որոնք հակառակվում են Սուրբ գրքի վկայությանը մարդու դեմ և պնդում են, որ իրենք մեղավոր չեն:

ՄԱՍ ԵՐԵՔ

ԱՍՏԾՈ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԵՂԱՎՈՐԻ ՀԱՆԴԵՊ

Գլուխ 12. Տրտմություն

ԱՍՏԾՈ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԵՂԱՎՈՐԻ ՀԱՆԴԵՊ

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Աստված Իր արարչագործության սուրբ և արդար Դատավորն է: Թեև Նա գթասիրտ ու ողորմած է, երկայնամիտ է և առատ է ողորմությամբ, Նա ոչ մի դեպքում անպատիժ չի թողնի հանցավորին (տե՛ս Ելից 34.6,7): Երբ մարդու արատավորությունը և բացահայտ ապստամբությունը մարտահրավեր են նետում Աստծո սրբությանը, արդարությանը և սիրուն, արդյունքն աստվածային դատաստանն է:

Սողոմոն թագավորը հայտարարեց Ժողովող 7.29-ում. «Սակայն ահա սա գտել եմ, որ Աստված մարդուն ուղիղ է ստեղծել, բայց նրանք շատ հնարներ են որոնել»: Այս փոփոխությունը մարդու մեջ պետք է որ անխուսափելիորեն հանգեցներ փոփոխության Աստծո վերաբերմունքի մեջ: Մարդն «ուղիղ» էր ստեղծվել և մեծ բավականություն էր պատճառում Աստծուն: Այս բավականությունը երևում է այն բանից, որ Աստված «բարի» անվանեց մարդու արարումը (տե՛ս Ծննդ. 1.31), և բազմաթիվ օրհնություններ շնորհեց նրան (տե՛ս Ծննդ. 1.26-30): Մեղքի ի հայտ գալով՝ Աստծո վերաբերմունքը փոխվեց. ուրախությունը վերածվեց տրտմության, բարեհաճությունը՝ զայրույթի, բավականությունը՝ խորշանքի, և խաղաղությունը՝ թշնամանքի:

Դարերի ընթացքում Աստված շարունակում է գթասիրտ ու ողորմած լինել ապստամբ մարդկության հանդեպ: «Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա, և անձրև է բերում արդարների և անիրավների վրա» (տե՛ս Մատթ. 5.45): Երբ լրացավ ժամանակը, Նա ուղարկեց Իր Որդուն՝ մահանալու այս աշխարհի մեղքերի համար, որպեսզի հաշտություն և խաղաղություն տա նրանց, ովքեր կհավատան (տե՛ս Հովհ. 1.29, Բ Կորնթ. 5.19): Եվ իհարկե Սուրբ գիրքը վկայում է, որ Աստված «ամբողջ օրը» տարածում է Իր ձեռքերը՝ առաջարկելով փրկություն «անհնազանդ և հակառակ ժողովրդին» (Եսայի 65.2, Հռոմեացիների 10.21): Թեև այս ամենը լիովին ճշմարիտ է, այնուամենայնիվ, մենք չպետք է ժխտենք կամ անտեսենք Սուրբ գրքի ուսմունքն այն մասին, թե ***ինչ վերաբերմունք ունի Աստված*** անօրենների հանդեպ: Մեր ուսումնասիրության այս մասում կդիտարկենք Աստծո բնավորության և գործերի այս կողմը:

ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆ

Կարո՞ղ է ինքնաբավ և ամենակարող Աստված վիշտ կամ տրտմություն զգալ: Թեև մենք պետք է հաստատենք այն փաստը, որ Սուրբ գրքի Աստված ինքնորոշվող է (այսինքն՝ Նրա վերաբերմունքը և գործողությունները չեն կառավարվում այլոց վերաբերմունքով և գործողություններով), և որ Նա անփոփոխ է (քանի որ Նա կատարյալ է), մենք պետք է հավասարապես ընդունենք ճշմարտությունն այն մասին, որ Նա անտարբեր և անզգա չէ Իր ստեղծագործության վերաբերմունքի հանդեպ: Նա ճշմարտապես զգում է, սիրում է, ատում է, տրտմում է և կարող է անձնական հարաբերություն կառուցել:

Սուրբ գրքում Աստծո տրտմության պատճառը մշտապես մարդու մեղքն է: Աստված տրտմում է Իր ստեղծածների մեղքի և ապստամբության պատճառով: Նա տրտմում է, քանի որ մեղքը վիրավորական է Իր սուրբ Անձի համար, և քանի որ այն կործանում, տառապանք և կորուստ է պատճառում Իր ստեղծագործությանը:

1. Ծննդոց 6.6-ում գտնում ենք Սուրբ գրքի մեծագույն ուսմունքն այն մասին, թե ինչպես է Աստված արձագանքում Իր ստեղծածների մեղավորությանը և ապստամբությանը: Գրի առեք ձեր մտքերն այս խոսքի մասին: Ինչ է այն սովորեցնում մեզ:

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Տրտմել» բառը թարգմանված է եբրայերեն «***ատսաբ***» բառից, որն ունի վշտի, ցավի կամ տրտմության իմաստ: «Իր սրտում» բառակապակցությունն այն է, ինչ աստվածաբաններն անվանում են «անտրոպոմորֆիզմ», այսինքն՝ Աստծուն մարդկային հատկանիշներ վերագրելը՝ Նրա մասին որոշակի ճշմարտություններ հայտնելու համար: Աստված հոգի է և չունի ֆիզիկական սիրտ: Այս արտահայտությունը պարզապես հայտնում է մեզ, որ Աստված ճշմարտապես և խորապես տրտմել էր: Կարևոր է նշել, որ այս հատվածը չի սովորեցնում, որ Աստված մտափոխվեց մարդուն ստեղծելու վերաբերյալ, կամ որ Նա ընդունեց, որ սխալ է թույլ տվել՝ անելով դա: Փոխարենը, այն պարզապես ցույց է տալիս, որ մարդու ապստամբությունը տրտմություն էր պատճառում Նրան: Այն, ինչ ուրախության աղբյուր էր, վերածվեց տրտմության աղբյուրի՝ մեղքի պատճառով:

2. Այժմ կդիտարկենք երեք անչափ կարևոր խոսք Հին ուխտից այն մասին, որ Աստված տրտմում է մարդկանց մեղքերի պատճառով: Ինչ են սովորեցնում այս խոսքերը մեզ: Գրի առեք ձեր մտքերը:

ա. *Սաղմոս 78.40*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածն անապատում Իսրայելի դեգերումների մասին է, որոնց պատճառն այն էր, որ Եգիպտոսի ստրկությունից ազատվելուց հետո ժողովուրդը հրաժարվեց Քանանի երկիր մտնել: «Տրտմել» բառը թարգմանված է եբրայերեն «***ատսաբ***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում):

բ. *Եսայի 63.10*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բարկացրին» (կամ՝ «տրտմեցրին») բառը թարգմանված է եբրայերեն «***ատսաբ***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում)։ Եսայի 63.30-ի զուգահեռը Նոր կտակարանում Եփեսացիների 4.30-ն է։

գ. *Եզեկիել 6.9*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կոտրել» («NASB» թարգմանության մեջ. «վշտանալ») բառը թարգմանված է եբրայերեն «***շաբար***» բառից, որը նշանակում է «ջարդել, կտոր-կտոր անել, փշուր-փշուր անել, քանդել»։ Այն պատկերավոր ցույց է տալիս, թե որքան էր Աստված տրտմում Իր ժողովրդի մեղքերի պատճառով («NASB» թարգմանության մեջ. «...թե ինչպես Ես վշտացա նրանց շնացող սրտերից, որոնք շրջվեցին Ինձնից...»)։

3. Նոր կտակարանում կա մի հետաքրքիր խոսք այն մասին, որ Աստված տրտմում է մարդու մեղավորության և Իր դեմ ապստամբելու պատճառով։ Գրի առեք ձեր մտքերը Եփեսացիների 4.30-ի մասին։ Ինչ է այն սովորեցնում մեզ։

ՆՇՈՒՄՆԵՐ. «Տրտմեցնել» բառը թարգմանված է հունարեն «***լուպե՛ո***» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «վշտացնել, տխրեցնել, ցավ կամ կսկիծ պատճառել»:

4. Կարևոր է, որ հասկանանք, որ համաձայն Սուրբ գրքի, մեղքը ոչ միայն տրտմեցնում է Աստծուն, այլև բեռ է դառնում Նրա համար: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը այս ճշմարտության մասին:

ա. *Եսայի 43.24*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Նեղացնել» (կամ «բեռնավորել») բառը թարգմանված է եբրայերեն «***աբադ***» բայից, որը նշանակում է «աշխատել կամ ծանր աշխատանք կատարել»: Այն, որպես կանոն, փոխանցում է ինչ-որ մեկին ստորաքարշ աշխատուժի պես օգտագործելու կամ ստրուկի վրա բեռ դնելու գաղափարը: «Վաստակեցնել» (կամ «հոգնեցնել») բառը թարգմանված է եբրայերեն «***յագա***» բառից, որը նշանակում է «տքնաջան աշխատանք կատարել», «հյուծվելու չափ հոգնել» կամ «մաշվել»: Կարևոր է հասկանալ, որ Աստված չի տկարանում մեր մեղքերից, և ո՛չ էլ Նրա զորությունը պակասում է: Այս խոսքում օգտագործվում է փոխաբերություն՝ պատկերելու համար, թե ինչպես են մարդու մեղքերը տրտմեցնում (կամ բեռնավորում) Աստծո սիրտը:

բ. *Ամովս 2.13*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վայր ճնշել» բառակապակցությունը թարգմանված է եբրայերեն «***ուք***» բառից, որը նշանակում է «ճնշել կամ երերացնել ինչ-որ մեկին՝ ասես ինչ-որ բանի ծանրության տակ»: Կրկին, այս խոսքում օգտագործվում է փոխաբերություն՝ պատկերելու համար, թե ինչպես են մարդու մեղքերը տրտմեցնում Աստծո սիրտը («NKJV» թարգմանության մեջ. «Ահա Ես ճնշված եմ ձեր կողմից, ինչպես խրձերով լի սայլն է ճնշվում...»):

Գլուխ 13. Զայրույթ

Մաս մեկ. Աստծո զայրույթի բնությունը

Երբ Աստծո սրբությունը, արդարադատությունը և սերը բախվում են մարդու արատավորությանը, անարդարությանը և սիրուց զուրկ կյանքին, դրա անխուսափելի հետևանքն աստվածային բարկությունը, վրդովմունքը և զայրույթն է: «Զայրույթ» բառը Հին կտակարանում թարգմանվում է երեք եբրայերեն բառերից. «***քետսեպ***» (զայրույթ, բարկություն և ցասում), «***հեմա***» (բարկություն, զայրույթ, զզվանք, դժգոհություն, կատաղություն, ցասում, շիկացում, թույն) և «***աֆ***» (որը բառացիորեն նշանակում է «ռունգ» կամ «քիթ»): Այս վերջին բառը ներկայացնում է բարկությունը՝ նման կատաղության պահին ուռչող ռունգերի: Նոր կտակարանում «զայրույթ» բառը թարգմանվում է երկու հունարեն բառերից. «**օրգե՛**» (զայրույթ, բարկություն) և «***թումո՛ս***» (բարկություն, վրդովմունք, կատաղություն, ցասում): Աստվածաշնչում սուրբ զայրույթը նշանակում է Աստծո սուրբ դժգոհությունը և արդար ցասումը՝ ուղղված մեղավորին և նրա մեղքին:

Խոսելով Աստծո զայրույթի մասին՝ կարևոր է հասկանալ, որ այն անվերահսկելի, անտրամաբանական կամ եսակենտրոն զգացում չէ: Ավելի շուտ այն բխում է Նրա սրբությունից, արդարությունից և սիրուց, և Նրա իշխանության անհրաժեշտ կողմերից մեկն է: Աստծո էության պատճառով, Նա պետք է թշնամաբար հակազդի մեղքին: ***Աստված սուրբ է***: այնպես որ, չարը վանում է Նրան, և Նա խզում է հարաբերություններն անօրենների հետ: ***Աստված սեր է***, և նախանձախնդրությամբ սիրում է այն ամենը, ինչ բարի է, և այդ սաստիկ սերն արդարության հանդեպ դրսևորվում է հավասարապես սաստիկ ատելությամբ ցանկացած չարիքի հանդեպ: ***Աստված արդար է***: այնպես որ, Նա պետք է դատի և դատապարտի անարդարությունը: Աստծո սրբությունը, սերը և արդարությունը դրդում են Նրան ատել մեղքը և հակառակվել դրան սարսափելի և հաճախ կատաղի բարկությամբ: Եթե մարդն Աստծո զայրույթի առարկան է, պատճառն այն է, որ նա որոշել է մարտահրավեր նետել Աստծո գերիշխանությանը, խախտել Նրա սուրբ կամքը և դատաստանի ենթակա դառնալ:

Այսօր շատերը մերժում են վարդապետությունը աստվածային զայրույթի մասին, ինչպես նաև ցանկացած նմանատիպ ուսմունք, որը նույնիսկ ենթադրում է, որ սիրող և ողորմած Աստված կարող է բարկացած լինել, կամ որ Նա կարող է հայտնել Իր բարկությունը՝ դատելով և դատապարտելով մեղավորներին: Նրանք վիճարկում են, որ նման գաղափարները պարզապես հին ժամանակներում ապրող մարդկանց սխալական եզրակացություններ էին, որոնց պատկերացմամբ Աստված թշնամական, վրիժառու և դաժան էր: Իհարկե, որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է մերժենք ցանկացած վարդապետություն, որը դաժան է համարում Աստծուն և անտեսում է Նրա գթասրտությունը: Այնուամենայնիվ, մենք չպետք է անտեսենք Աստվածաշնչի պարզ ուսմունքն աստվածային զայրույթի և պատժի մասին: Աստվածաշնչում կան ավելի շատ հղումներ Աստծո բարկության և զայրույթի մասին, քան Նրա սիրո, բարության և գթասրտության: Աստված ***իսկապես*** գթած և ողորմած է, երկայնամիտ է և առատ է ողորմությամբ, սակայն Նա ***անպայման*** կպատժի չապաշխարող մեղավորներին՝ Իր ստեղծվածների մեջ արդարադատություն հաստատելու և Իր սուրբ անունն արդարացնելու համար:

1. Մինչև շարունակելը մեր ուսումնասիրությունն Աստծո զայրույթի մասին, անչափ կարևոր է, որ հասկանանք Աստծո զայրույթի սուրբ և արդար բնությունը: Թեև մարդու զայրույթը հաճախ նրա մեղսալի կրքերի արդյունքն է, Աստծո զայրույթը Նրա արդարության և սրբության դրսևորումն է:

ա. *Համաձայն Հռոմեացիների 1.18-ի, ինչո՞ւ է Աստծո զայրույթը գալիս մարդկանց վրա:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բռնել» (կամ՝ «ձնշել») բառը թարգմանված է հունարեն «***կատեխո***» բառից, որը նշանակում է «բռնել, ետ պահել, զսպել կամ սահմանափակել»: Մենք հասկանում ենք այս խոսքից, որ Աստծո բարկության հայտնվելը քմահաճ արարք չէ, այլ սուրբ Աստծո արդար արձագանքը մարդու անարդարությանը:

բ. *Համաձայն Ելից 15.7-ի, Աստծո ո՞ր հատկանիշն է ի հայտ գալիս Նրա զայրույթի յուրաքանչյուր դրսևորման ժամանակ: Պատասխանե՛ք այս հարցին՝ լրացնելով բաց թողնված բառերը, իսկ հետո բացատրե՛ք այս խոսքը:*

(1) Նրա Փ_____ Մ_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեծություն» բառը թարգմանված է եբրայերեն «***գաոն***» բառից, որը նույնպես նշանակում է վեհություն, փառք, գերազանցություն և համբավ: Մարդու զայրույթը հաճախ նրա բնավորության թերության կամ տկարության արտահայտումն է: Ի հակադրություն սրան, Աստծո զայրույթը հայտնում է Նրա կատարելությունները՝ Նրա սրբությունը, արդարությունը և սերը:

2. Համաձայն Սուրբ գրքի, Աստծո զայրույթն այնքան ուժգին է, որ այն անկարելի է ըմբռնել, և դրան անկարելի է հակառակվել: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ խոսքերը այս ճշմարտության մասին:

ա. *Սաղմոս 90.11*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գիտենալ» բառը թարգմանվել է եբրայերեն «***յադա***» բառից, որը նշանակում է «իմանալ»: Գաղափարն այն է, որ ոչ ոք չգիտի Աստծո զայրույթի ամբողջական չափը մեղավորների հանդեպ: Նույնիսկ Նրա զայրույթի ամենազորավոր դրսևորումները (օրինակ՝ Սոդոմը և Գոմորը կամ համաշխարհային ջրհեղեղը) միայն սահմանափակ հայտնություններ և օրինակներ էին: «Քո վախի պես» արտահայտությունը ցույց է տալիս, որ մարդու երկյուղն Աստծուց պետք է լինի համապատասխան Աստծո զայրույթի մեծությանը: Այնուամենայնիվ, ոչ ոք իրապես չի ճանաչում Աստծո զայրույթը. նշանակում է՝ ոչ ոք չի վախենում Աստծուց այնպես, ինչպես որ պետք է վախենալ:

բ. *Երեմիա 10.10*

գ. *Երեմիա 23.19,20*

դ. *Նաում 1.6*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հարցը հռետորական է, իսկ պատասխանը՝ ակնհայտ: Ոչ ոք՝ անհատապես, և նույնիսկ ամբողջ ստեղծագործությունը՝ հավաքական առումով, չի կարող դիմանալ Աստծո զայրույթին:

3. Կարևոր է հասկանալ, որ Աստծո զայրույթը չի սահմանափակվում Հին կտակարանով. այն նույնպես պարզորեն ներկայացված է Նոր կտակարանի բազմաթիվ հատվածներում: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ նորկտակարանյան հատվածները Աստծո զայրույթի մասին:

ա. *Հռոմեացիների 2.5,6*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կիտել» բառը թարգմանվել է հունարեն «***թեսաուրի՛զո***» բառից, որը բառացիորեն նշանակում է «գանձ կուտակել»: Իրենց անհնազանդության միջոցով մարդիկ բարկություն են կուտակում՝ գանձի պես: «Բարկության և Աստծո արդար դատաստանի հայտնության օրը» վերաբերում է այս աշխարհի ավարտին և բոլոր մարդկանց համընդհանուր դատաստանին:

բ. *Եփեսացիների 5.3-6, Կողոսացիների 3.5,6*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս երկու հատվածներում առաջադրված գլխավոր գաղափարը բացարձակ համոզվածությունն է, որ մեկ օր Աստծո բարկությունը կգա անօրենների վրա: Մեղավորները հաճախ ժխտում են աստվածային դատաստանի իրականությունը, նաև ծաղրում են այս վարդապետությունները և դրանք քարոզողներին (կարդացե՛ք Բ Պետրոս 3.3,4):

4. Աստվածաշունչը պարզորեն հայտնում է, որ Աստված ոչ միայն սիրո և ողորմության Աստված է, այլև բարկության և վրիժառության: Աստծո սրբությունը, սերը և արդարությունը դրդում են Նրան ատել մեղքը և հակառակվել դրան սարսափելի և հաճախ կատաղի վրիժառությամբ: Եթե մարդը մարտահրավեր նետի Աստծո գերիշխանությանը և խախտի Նրա սուրբ կամքը, Նա Աստծո զայրույթի առարկան կդառնա: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան խոսքերի, ինչպե՞ս բոլոր մարդիկ պետք է արձագանքեն այս ճշմարտությանը:

   ա. *Սաղմոս 76.7*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Սաղմոս 90.11,12*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

5. Թեև Աստծո զայրույթի իրողությունն անժխտելի է, մենք պետք է նույնպես հասկանանք, որ Նա ողորմած է: Աստծուն հաճելի չէ անօրենի մահը. Փոխարենը, Նա հաճախ հետաձգում է Իր զայրույթը մեղավորի կյանքից և իր մեղքից շրջվելու անթիվ հնարավորություններ է տալիս նրան: Այնուամենայնիվ, նրանք,

ովքեր շարունակում են մնալ իրենց ապստամբության մեջ, անկասկած բախվելու են Աստծո զայրույթին: Ի՞նչ է սովորեցնում Ելից 34.6,7-ը այս ճշմարտության մասին:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում տեսնում ենք, որ Աստծո ողորմությունը հայտնվում է՝ ներելով ապաշխարողին և հավատացողին, և Նրա արդար դատաստանը հայտնվում է՝ պատժելով չապաշխարողին և անհավատին: Հղումը երեխաներին և թոռներին բացատրվում է Ելից 20.5-ում գտնվող «որ ատում են Ինձ» արտահայտությամբ: Աստծո դատաստանը գալիս է այն սերունդների վրա, որոնք մնում են իրենց նախահայրերի ատելության մեջ:

Գլուխ 14. Զայրույթ

Մաս երկու. Աստծո զայրույթի սուրբգրային նկարագրությունները

Նախորդ գլխում դիտարկեցինք մի շարք հատվածներ Հին և Նոր կտակարաններից, որպեսզի սուրբգրային պատկերացում կազմենք Աստծո զայրույթի բնության մասին: Այս գլխում մենք կշարունակենք ուսումնասիրել Աստծո զայրույթը՝ կենտրոնանալով այն բանի վրա, թե ինչպես է Աստվածաշունչը նկարագրում այն:

1. Ինչպե՞ս է Աստված պատկերվում Նաում 1.2-ում:

ա. *Տերը վրեժխնդիր է և Բ*_____ *Տ*_____*:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բարկության տեր» բառակապակցությունը թարգմանված է եբրայերեն «***բաալ խեմա***» բառակապակցությունից: «***Բաալ***» բառը նշանակում է տեր, սեփականատեր կամ տիրակալ: «***Խեմա***» բառը նշանակում է բորբոքում, բարկություն, զայրույթ և ցասում: Միասին այս բառերը բառացիորեն նշանակում են «շիկացած կամ վառվող բարկության տեր»:

բ. *Տերը Բ*_____ *է Պ*_____ *Իր Թ*_____ *դեմ:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բարկություն» բառը թարգմանված է եբրայերեն «***խեմա***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում)։ «Պահել» բառը թարգմանված է եբրայերեն «***նատար***» բայից, որը նույնպես կարող է թարգմանվել «հավաքել» բառով։ Պահվող կամ կուտակվող բարկության գաղափարը հայտնվում է մեզ նաև Նոր կտակարանում։ Հռոմեացիների 2.5,6-ում Պողոս առաքյալը հայտարարում է. «Բայց դու քո խստությունով և անզեղջ սրտով բարկություն ես կիտում քո անձի համար՝ բարկության և այն Աստծո արդար դատաստանի հայտնության օրում, որ Նա ամեն մեկին իր գործերի պես հատուցումը կտա»։

2. Կարևոր է հասկանալ, որ վրիժառու և բարկության տեր Աստծո նկարագրությունը չի սահմանափակվում Հին կտակարանով։ Ինչպե՞ս է Աստված նկարագրվում հետևյալ նորկտակարանյան խոսքերում։ Բացատրե՛ք այս նկարագրությունների իմաստը.

ա. *Աստված, որ Բ_____ Բ_____ է (Հռոմեացիների 3.5)։*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բերել» բառը թարգմանված է հունարեն «***էպիֆե՛րո***» բառից, որը նշանակում է «բերել ինչ-որ մեկի վրա կամ ինչ-որ մեկի դեմ»։ «Բարկություն» բառը թարգմանված է հունարեն «***օրգե՛***» բառից, որը նշանակում է բարկություն կամ զայրույթ։ Աստվածային զայրույթը պարզապես մեղսալի արարքների բնական հետևանքը չէ. Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Աստված ***գործում է՝*** բերելով Իր արդար զայրույթը չապաշխարող մեղավորի կյանքում։

բ. *Աստված, որ Փ_____ Կ_____ է (Եբրայեցիների 12.29)։*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կրակը հաճախ է օգտագործվում Սուրբ գրքում՝ նկարագրելու համար Աստծո զայրույթը։ Այն բնության ամենասարսափելի ուժերից մեկն է։ «Փչացնող» (կամ «սպառող») բառը թարգմանված է հունարեն «***կատանալի՛սկո***» բառից, որը նշանակում է «սպառել կամ վերջացնել»։ Աստծո զայրույթն այրում է այն, ինչ իր ճանապարհին է, մինչև որ ամեն ինչ լիովին սպառվում և վերջանում է։ Ելից 15.7-ում Մովսեսը հռչակում է. «Ուղարկում ես Քո բարկությունը, և ուտում է նրանց (այսինքն՝ անօրեններին) հարդի պես»։ Այս պնդումը պետք է զարհուրելի լինի չապաշխարող մեղավորի համար։

3. Ամբողջ Սուրբ գրքում օգտագործվում են տարբեր բառեր՝ Աստծո բարկությունը նկարագրելու համար: Անհրաժեշտ է դիտարկել դրանց իմաստը, որպեսզի ավելի լավ հասկանանք աստվածային զայրույթը:

ա. *Հետևյալ աստվածաշնչյան խոսքերում ցույց տվեք այն բառերը, որոնք օգտագործվում են՝ Աստծո զայրույթը նկարագրելու համար:*

(1) Բ_____ (Ելից 15.7): Եբրայերեն «***խարոն***» բառից, որը նշանակում է այրում, կատաղություն և մոլեգնություն:

(2) Ս_____ Բ_____ (Երկրորդ Օրինաց 9.19): Եբրայերեն «***խեմա***» բառից, որը նշանակում է բորբոքում, բարկություն, զայրույթ և ցասում:

(3) Բ_____ (Սաղմոս 7.11): Եբրայերեն «***զաամ***» բառից, որը նշանակում է սաստիկ զայրույթ:

(4) Ս_____ (Սաղմոս 90.11): Եբրայերեն «***եբրահ***» բառից, որը նշանակում է «ողողել կամ վարարել»: Աստծո զայրույթը նման է մոլեգնող գետի, որը վարարում է իր ափերից՝ քշելով ամեն ինչ իր ճանապարհին:

(5) Բ_____ Բ_____ (Երեմիա 30.24): Այս բառակապակցությունը թարգմանված է երկու եբրայերեն բառից: Առաջինը «***խարոն***»-ն է, որը նշանակում է այրում, կատաղություն և մոլեգնություն: Երկրորդը «***աֆ***» բառն է, որը բառացիորեն նշանակում է «ռունգ» կամ «քիթ»: Այս բառը ներկայացնում է բարկությունը՝ նման կատաղության պահին ուռչող ռունգերի:

բ. *Բացատրե՛ք ձեր բառերով, թե ինչ են այս բառերը հայտնում մեզ Աստծո զայրույթի մասին:*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

4. Ամբողջ Սուրբ գրքում մենք գտնում ենք բազմաթիվ փոխաբերություններ, որոնք օգտագործվում են՝ նկարագրելու համար Աստծո մոլեգնող զայրույթը մեղավորի և նրա մեղքի դեմ: Ստորև կդիտարկենք ամենակարևոր փոխաբերություններից մի քանիսը:

   ա. *Հետևյալ աստվածաշնչյան խոսքերում ցույց տվեք այն փոխաբերությունները, որոնք օգտագործվում են՝ Աստծո զայրույթը նկարագրելու համար:*

   (1) Կ_____, որը կուտի (Երկրորդ Օրինաց 32.22):

   (2) Սուր Թ_____ (Սաղմոս 7.12):

   (3) Բորբոքված Ն_____ (Սաղմոս 7.13):

   (4) Շ_____ Թ_____ (Երեմիա 30.23):

   (5) Հ_____ Հ_____ (Նաում 1.8):

   (6) Աստծո Բ_____ Հ_____ (Հայտնություն 14.19, նույնպես կարդացե՛ք Եսայի 63.2-6):

   բ. *Բացատրե՛ք ձեր բառերով, թե ինչ են այս փոխաբերությունները հայտնում մեզ Աստծո զայրույթի մասին:*

   _____

   _____

   _____

   _____

   _____

5. Սաղմոս 7.11-13-ը պատկերավոր նկարագրում է Աստծո զայրույթը մեղքի դեմ: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը: Ի՞նչ է սովորեցնում այս հատվածը Աստծո զայրույթի մասին:

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կան մի քանի կարևոր ճշմարտություններ, որոնք մենք իմանում ենք այս հատվածից: ***Առաջինը***, Աստծո վրդովմունքը բխում է Նրա արդարությունից, ոչ թե Նրա բնավորության որևէ թերությունից: ***Երկրորդը***, Աստծո վրդովմունքը մարդու շարունակական ապստամբության արդյունքն է: Աստված գթասիրտ ու ողորմած է, երկայնամիտ է և առատ է ողորմությամբ (տե՛ս Ելից 34.6,7): Նա կնեռի ապաշխարող մեղավորին, բայց չապաշխարող մեղավորն Աստծո զայրույթի առարկա է դարձնում իրեն: Եվ ***վերջինը***, Աստված նպատակաուղղված և գործուն կերպով հակառակվում է մեղավորին Իր բարկությամբ: Մեղավորի տառապանքը պարզապես մեղքի բնական հետևանքը չէ. այն Աստծո նպատակաուղղված դատաստանի արդյունքն է:

Գլուխ 15. Ատելություն կամ խորշանք

Աստծո բարկությանը կամ զայրույթին շատ մոտ է Նրա ատելությունը կամ խորշանքը թե՛ մեղքի, թե՛ մեղավորի հանդեպ: Մեղքի հանդեպ աստվածային վերաբերմունքի այս կողմը նկարագրելու համար կարելի է օգտագործել ևս երկու բառ. «զզվանք» և «նողկանք»:

Ժամանակակից քրիստոնեության մեջ հաճախ է օգտագործվում հետևյալ հայտնի պնդումը. «Աստված սիրում է մեղավորին, բայց ատում է մեղքը»: Թեև ինչ-որ իմաստով այս պնդումը ճշմարիտ է, այն նաև խիստ մոլորեցնող է, քանի որ միայն ցույց է տալիս մետաղադրամի մի կողմը կամ ազդարարում է ճշմարտության կեսը: Աստված ճշմարտապես սիրում է մեղավորին և բարեհաճություն է ցուցաբերում նրա հանդեպ: Սակայն մեղավորը հավասարապես Աստծո զայրույթի, սուրբ տհաճության, խորշանքի, զզվանքի, նողկանքի և ատելության առարկան է: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Աստված ատելությամբ և խորշանքով է վերաբերվում ոչ միայն մեղքին, այլև մեղք գործողներին: Մենք պետք է հասկանանք, որ անկարելի է առանձնացնել մեղքը մեղավորից: Աստված չի պատժում մեղքը. Նա պատժում է մեղավորներին: Մեղանչող մարդն է դատապարտվում Աստծո զայրույթին դժոխքում, ոչ թե մեղքը:

Այն, որ Սուրբ գիրքն օգտագործում է «խորշանք» և «ատելություն» բառերը՝ նկարագրելու համար Աստծո վերաբերմունքը չապաշխարող մեղավորների հանդեպ, անժխտելի փաստ է: Այնպես որ, անչափ կարևոր է, որպեսզի մենք ճիշտ հասկանանք այս ճշմարտությունը: Այժմ կդիտարկենք մի քանի օգտակար կետեր:

Առաջինը՝ մենք պետք է հասկանանք, որ Աստծո ատելությունն իրական է: «Վեբսթերի բառարանը» սահմանում է «ատելություն» բառը որպես «սաստիկ թշնամության զգացում որևէ մեկի հանդեպ», և «ատել» բառը որպես «սաստիկ թշնամանքով վերաբերվել ինչ-որ մեկին. խիստ հակակրանք զգալ ինչ-որ մեկի հանդեպ. զզվանք, գարշանք, նողկանք և խորշանք զգալ»: Թեև այս բառերը խիստ են, Աստվածաշունչն օգտագործում է դրանց մեծ մասը, եթե ոչ՝ բոլորը, նկարագրելու համար Աստծո վերաբերմունքը մեղքի և մեղավորի հանդեպ: ***Երկրորդը***՝ մենք պետք է հասկանանք, որ Աստծո ատելությունը կատարյալ ներդաշնակությամբ գոյակցում է Նրա մյուս հատկանիշների հետ: Ի տարբերություն մարդկային ատելության, Աստծո ատելությունը սուրբ և արդար է: Իրականում, Աստծո խորշանքը չարի և չարագործների հանդեպ բխում է Նրա սրբությունից, արդարությունից և սիրուց: Աստված անսահմանորեն սիրում է այն ամենը, ինչ արդար և բարի է, և նույնպես անսահմանորեն ատում է այն ամենը, ինչ պիղծ և չար է: Մտածե՛ք հետևյալ ճշմարտության մասին. մենք անկում ապրած արարածներ ենք, սակայն, կարդալով ֆաշիստական Գերմանիայի կողմից իրականացված Հոլոքոստի մասին, չենք կարողանում չեզոք մնալ. մենք բռնկվում ենք արդար ցասումով, խորշանքով և նողկանքով, ոչ միայն այդ հրեշավոր հանցանքների դեմ, այլև դրանք կատարողների դեմ: Որքա՜ն ավելի ամենաարդար և ամենասուրբ Աստված, Ով անսահմանորեն չար է համարում մեղքը, խորշում է և նույնիսկ զզվում է թե՛ մեղքից, թե՛ մեղավորից: ***Երրորդը***՝ մենք պետք է հասկանանք, որ ճշմարտությունը մեղավորի հանդեպ Աստծո զայրույթի և ատելության մասին չի նշանակում, որ Նա չի առաջարկում մեղավորին Իր սերը: Աստծո սրբության, արդարության և արդարադատության պատճառով, Նրա զայրույթը մնում է չապաշխարող մեղավորի վրա (տե՛ս Հովհ. 3.36): Նա բարկանում է անօրենների վրա ամեն օր (տե՛ս Սաղմ. 7.11) և ատում է բոլոր անօրինություն գործողներին (տե՛ս Սաղմ. 5.5): Այնուամենայնիվ, Նրա սերն այնպիսի բնույթի է, որ Նա կարող է բարեհաճ, ողորմած և գթած լինել նրանց հանդեպ, ովքեր Իր ատելության առարկաներն են, և գործել նրանց համար՝ հանուն նրանց փրկության: Աստծո սրբությունը և արդարությունը բորբոքված են մեղավորի դեմ: Այնուամենայնիվ, Նրա ողորմությունը զսպում է Իր զայրույթը, և Նա կոչ է անում մեղավորին հաշտվել Իր հետ՝ Ավետարանի միջոցով: ***Չորրորդը***՝ մենք պետք է հասկանանք, որ Աստծո ատելությունն ունենալու է վերջնական դրսևորում: Թեև Աստծո ողորմությունը զսպում է Նրա զայրույթը և պարզում է խաղաղության ձիթենու ճյուղը մեղավորին, կգա ժամանակ, երբ Նա ետ կվերց-

նի Իր առաջարկը, և հաշտությունն արդեն անհնար կլինի: Այդ ժամանակ չապաշխարող մեղավորի միակ բաժինը կլինի անօրենների հանդեպ Աստծո զայրույթի և սուրբ ատելության զարհուրելի դրսևորումը: Մեղավորները պետք է վախով ու դողով մտածեն այս ճշմարտության մասին:

1. Համաձայն Սաղմոս 5.4,5-ի, ինչպե՞ս է Աստված վերաբերվում մեղքին և չապաշխարող մեղավորին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծուն հաճելի չէ մեղքը, քանի որ Նա Իր էությամբ կատարելապես և անսահմանորեն սուրբ և արդար է: Նա չի կարող գայթակղվել մեղքով (տե՛ս Հակոբ. 1.13) և չի կարող հանդուրժել մեղքն Իր ներկայության մեջ, քանի որ այն զզվելի է Իր համար: Իր սրբության և արդարության պատճառով, Նրա ատելությունը դրսևորվում է բոլոր անօրինություն գործողների հանդեպ: «Ատելություն» բառն այս հատվածում թարգմանված է եբրայերեն «***սանե***» բառից: Այս բառի և իր ածանցյալների արմատական իմաստը «ատել»-ն է: Այն արտահայտում է զգացմունքային վերաբերմունք մարդկանց, առարկաների և երևույթների հանդեպ, որոնց մարդն ընդդիմանում և արհամարհում է, որոնցից խորշում է, և որոնց հետ չի ուզում որևէ կապ կամ հարաբերություն ունենալ: Այնպես որ, այն սիրո հականիշն է: Սերը գրավում է և միաբանում է, այնինչ ատելությունը բաժանում է և հեռու է պահում: Ատող և ատելի անձիք համարվում են թշնամիներ կամ ախոյաններ՝ հակակրելի և խիստ անցանկալի մեկը մյուսի համար[5]:

2. Հինգերորդ Սաղմոսը միակը չէ, որը վկայում է այն մասին, որ Աստված ատում է մեղքը և չապաշխարող մեղավորին: Սաղմոս 11.4-7-ը ևս մեկ կարևոր հատված է Աստծո ատելության մասին: Ի՞նչ է սովորեցնում այս հատվածը մեզ: Գրի առեք ձեր մտքերը հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի մասին:

   ա. *Տերն Իր սուրբ տաճարում է. Տիրոջ աթոռը (կամ՝ գահը) Երկնքում է (խս. 4):*

_____

_____

_____

_____

_____

[5] Ռ. Լեյրդ Հարիս, Գլիսոն Լ. Արչեր Կրտ. և Բրյուս Կ. Ուոլտկե. «Հին կտակարանի աստվածաբանական աշխատագիրք» հտ. 2, էջ 227:

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը հայտնում է մեզ երկու մեծ ճշմարտություն Աստծո մասին. (1) Նա սուրբ է, և (2) Նա ունի բացարձակ գերիշխանություն ամբողջ արարչագործության վրա:

բ. *Նրա աչքերը տեսնում են, Նրա արտևանունքները քննում են մարդկանց որդիներին: Տերը քննում է արդարին, բայց (կամ՝ «և») ամբարշտին... (խոսքեր 4,5):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը հայտնում է մեզ ևս երկու մեծ ճշմարտություն Աստծո մասին: (1) Նա ամենագետ է. ոչինչ թաքնված չէ Նրա աչքերից, և ոչինչ չի գերազանցում Նրա գիտելիքը, և (2) Նա քննում է մարդկանց մտքերը, խոսքերը և գործերը, որպեսզի հատուցի նրանց իրենց գործերի համեմատ:

գ. *Եվ անիրավություն սիրողին ատում է Նրա Անձը (խս. 5):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս Սաղմոսում մեղավորները կոչվում են «ամբարիշտ» (խոսքեր 5,6) և «անիրավություն սիրող» (խս. 5) և հակադրվում են «ուղիղներին» (խս. 7): Աստծո ատելությունը չի սահմանափակվում միայն նրանցով, ովքեր բռնություն են գործադրում. այն վերաբերում է յուրաքանչյուրին, ով մեղանչում է և հակառակ է Աստծո արդարությանը: «Ատելություն» բառը թարգմանված է եբրայերեն «***սանե***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում՝ Գլխավոր կետ 1-ի ներքո): Հղումն Աստծո Անձին անտրոպոմորֆիզմ է՝ Աստծուն մարդկային հատկանիշներ վերագրելը՝ Նրա մասին որևէ ճշմարտություն հայտնելու համար: Երբ մարդն ինչ-որ բան է անում իր ամբողջ սրտով կամ անձով, նշանակում է՝ նա անում է դա մեծագույն դիտավորությամբ և եռանդով: Այնպես որ, այս հատվածը հայտնում է ճշմարտությունն այն մասին, որ Աստված ատում է մեղքը կամ խորշում է դրանից մեծագույն դիտավորությամբ և եռանդով:

դ. *Նա ամբարիշտների վրա որոգայթներ՝ կրակ և ծծումբ կտեղա, և նրանց բաժակի բաժինը այրող մրրիկ կլինի (խս. 6):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա մեղավորների դեմ Աստծո զայրույթի պարզ և ճշգրիտ նկարագրություն է: Նույնիսկ աղետներ և կործանում նշանակող ամենից ազդեցիկ փոխաբերույթները չեն կարող մասնակիորեն նկարագրել Աստծո դատաստանը, որը կգա անօրենների վրա: Նույնիսկ Սոդոմի և Գոմորի կործանումը կրակով ընդամենը Աստծո զայրույթի մասնակի պատկերում է (տե՛ս Ծննդ. 19.24,25):

ե. *Որովհետև Տերն արդար է և արդարություն է սիրում. ուղիղները կտեսնեն Նրա երեսը (խս. 7):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը ցույց է տալիս, թե ինչու է Աստծո սաստիկ ատելությունը հայտնվում անօրենների դեմ. Նա արդար է և արդարություն է սիրում: Եթե ճիշտ է, որ Աստված անսահմանորեն սիրում է արդարությունը, նշանակում է՝ Նա նույնպես անսահմանորեն խորշում է չար գործերից և չար մարդկանցից:

3. Այժմ կդիտարկենք վեց խոսք Աստվածաշնչից, որոնք օգտագործում են «գարշելի», «նողկալի», «զզվելի» և «պիղծ» բառերը (կամ դրանց ածանցյալները): Մեր նպատակն է՝ ավելի խորը հասկանալ Աստծո սուրբ ատելությունը մեղքի և մեղավորի հանդեպ: Ուշադրությամբ կարդացե՛ք յուրաքանչյուր խոսքը և գրի առեք ձեր մտքերը: Ի՞նչ են սովորեցնում այս խոսքերը մեզ:

ա. *Ղևտացիների 20.23*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Զզվել» բառը թարգմանված է եբրայերեն «***քուց***» բառից, որն ունի հակակրանքի, խորշանքի, նողկանքի, զզվանքի և հիվանդագին վախի իմաստ: Այս սաստիկ վերաբերմունքի պատճառը կռապաշտ ազգերի մեղսալի գործերն էին:

բ. *Երկրորդ Օրինաց 18.12*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գարշելի» բառը թարգմանված է եբրայերեն «***թոեբա***» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «զզվելի» և «խորշելի»: Չապաշխարող մեղավորը գարշելի է Տիրոջ համար, քանի որ Տիրոջ համար գարշելի են նրա գործերը:

գ. *Երկրորդ Օրինաց 25.16*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պիղծ» բառը թարգմանված է նույն եբրայերեն բառից, ինչ վերևի կետում՝ «***թոեբա***»-ից: Չապաշխարող մեղավորը պիղծ է Տիրոջ համար, քանի որ նա անիրավությամբ է վարվում:

դ. *Սաղմոս 95.10*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Զզվել» բառը թարգմանված է եբրայերեն «***քուց***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում)։ Աստծո զզվանքի առարկաներն այս խոսքում այն իսրայելցիներն են, որոնք մահացան անապատում իրենց անհավատության և ապստամբության պատճառով (խս. 11)։

ե. *Տիտոս 1.16*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պիղծ» բառը թարգմանված է հունարեն «***բդելուկտո՛ս***» բառից, որը «***բդե՛ո***» բառի ածանցյալն է և նշանակում է «գարշահոտություն արձակել»։ Այն նշանակում է պիղծ, վանող, սրտխառնոց առաջացնող և զզվելի մի բան։ Կրկին, մեղավորի բարոյական ապականությունը և անհնազանդությունն են, որ պիղծ են դարձնում նրան։

զ. *Հայտնություն 21.8*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պիղծ» բառը թարգմանված է հունարեն «***բդելուկտո՛ս***» բառից, որը «***բդե՛ո***» բառի ածանցյալն է (կարդացե՛ք սահմանումը վերևում)։ Այստեղ մենք տեսնում ենք չապաշխարող մեղավորների վերջնական կործանումը՝ այն մարդկանց, որոնք դարձնում են իրենց Աստծո ատելության առարկան։ Նրանց բաժինը կրակի լիճն է, որը երկրորդ մահն է։

Գլուխ 16. Թշնամություն և վրիժառություն

Մենք կավարտենք մեր ուսումնասիրությունը մեղավորի հանդեպ Աստծո վերաբերմունքի մասին՝ դիտարկելով ևս երկու կարևոր բառ: Այս բառերը հաճախ չեն հիշատակվում ժամանակակից քրիստոնյաների կողմից, սակայն գործածվում են Աստվածաշնչում՝ նկարագրելու համար Աստծո արձագանքը մարդու բարոյական ապականությանը և անհնազանդությանը: Դրանք են թշնամությունը և վրիժառությունը:

ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ

Մենք հաճախ ենք լսում, որ մեղավորը շարունակ պատերազմում է Աստծո դեմ, բայց կան շատ քիչ ուսմունքներ այն մասին, որ Աստված է շարունակ պատերազմում անօրենների դեմ: Թշնամությունն Աստծո և մեղավորի միջև միակողմանի չէ. այն փոխադարձ է: Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է, որ Աստված համարում է մեղավորին Իր թշնամին, և որ Աստված պատերազմ է հայտարարել անօրենների դեմ: Մեղավորի միակ հույսն է՝ վայր դնել զենքը, սպիտակ դրոշ բարձրացնել և հանձնվել մինչև հավիտենությանը հասնելը, երբ արդեն շատ ուշ կլինի:

1. Նաում 1.2-ը խոսում է մեղավորի հանդեպ Աստծո թշնամության և դրան ուղեկցող դատաստանի մասին: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է մեղավորը պատկերվում այս հատվածում, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը:

   ա. *Տերը վրեժ է առնում Իր Ո*_____*:*

   _____

   _____

   _____

   _____

   ՆՇՈՒՄՆԵՐ. Այս բառը թարգմանված է եբրայերեն «***ցար***» բառից, որը նույնպես կարող է թարգմանվել «թշնամի» կամ «ախոյան»:

   բ. *Նա բարկություն է պահում Իր Թ*_____ *դեմ:*

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս բառը թարգմանված է եբրայերեն «***այաբ***» բառից, որը նշանակում է թշնամաբար տրամադրված լինել ինչ-որ մեկի հանդեպ՝ ինչպես հակառակորդի կամ ոսոխի:

2. Եսայի 63.10-ում գտնվում է ևս մեկ կարևոր հինկտակարանյան հղում մեղավորի դեմ Աստծո թշնամության մասին: Այս խոսքը ոչ միայն ցույց է տալիս Աստծո թշնամությունը մեղավորի հանդեպ, այլև բացահայտում է դրա պատճառը: Կարդացե՛ք այս խոսքը և գրի առեք ձեր մտքերը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Նրանց թշնամի դարձավ» արտահայտությունը թարգմանված է եբրայերեն «***այաբ***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում):

3. Հռոմեացիների 5.10-ում գտնվում է մեղավորի դեմ Աստծո թշնամանքի ամենակարևոր սուրբգրային հղումներից մեկը: Այն նույնպես ցույց է տալիս, որ այս վարդապետությունը չի սահմանափակվում Հին կտակարանով, այլ վերաբերում է նաև Նոր կտակարանին: Գրի առեք ձեր մտքերն այս հատվածի վերաբերյալ:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Թշնամիներ» բառը թարգմանված է հունարեն «***էխթրո՛ս***» բառից, որը մատնանշում է թշնամու՝ մարդու, որը թշնամացած է ինչ-որ մեկի հանդեպ կամ հակառակվում է նրան: Երբեմն պնդում են, որ մարդն է Աստծո թշնամին, իսկ Աստված ոչ մի դեպքում մարդու թշնամին չէ: Այնուամենայնիվ, այս պնդումը խիստ մոլորեցնող է: Թեև այս խոսքում առկա են երկու գաղափարներն էլ, ընթերցողը պետք է մտապահի, որ այստեղ մեղավորի հակառակությունն Աստծուն՝ երկրորդական է. գլխավոր միտքն Աստծո սուրբ հակառակությունն է մեղավորին:

ՎՐԻԺԱՌՈՒԹՅՈՒՆ

Աստծո զայրույթը սերտորեն կապակցված է Նրա վրիժառության հետ: Սուրբ գրքում վրիժառության գաղափարը հաճախ ներկայացվում է որպես անօրեն մարդկանց արատ (տե՛ս Ղևտ. 19.18, Ա Թագ. 25.25,30-33). այնպես որ, մեզ համար դժվար է պատկերացնել, թե ինչպես սուրբ և սիրող Աստված կարող է ***վրիժառության Աստված*** լինել: Մենք պետք է հասկանանք հետևյալը. Աստծո վրիժառության դրդապատճառը մշտապես Նրա նախանձավորությունն է սրբության և արդարադատության հանդեպ:

Այսօր շատերը մերժում են վարդապետությունը աստվածային վրիժառության մասին, ինչպես նաև՝ ցանկացած նման ուսմունք, որը նույնիսկ ենթադրում է, որ սիրող և ողորմած Աստված կարող է վրեժ առնել: Նրանք վիճարկում են, որ նման գաղափարները պարզապես հին ժամանակներում ապրող մարդկանց սխալական եզրակացություններ էին, որոնց պատկերացմամբ Աստված թշնամական և դաժան էր: Իհարկե, որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է մերժենք ցանկացած վարդապետություն, որը դաժան է համարում Աստծուն և անտեսում է Նրա գթասրտությունը: Այնուամենայնիվ, մենք չպետք է անտեսենք Աստվածաշնչի պարզ ուսմունքն աստվածային վրիժառության մասին: Աստված գթասիրտ ու ողորմած է, երկայնամիտ է և առատ է ողորմությամբ, բայց Նա նույնպես արդար է: Նա կպատժի մեղավորին, որպեսզի արդարացնի Իր անունը և արդարադատություն իրականացնի Իր ստեղծվածների միջև: Քանի որ մարդիկ մեղանչում են, Աստված ***արդարացի կերպով*** է առնում Իր վրեժը: Երեմիայի գրքում Աստված երեք անգամ հարցնում է. «Մի՞թե սրա համար այցելություն պիտի չանեմ... կամ սրա նման մի ազգից Իմ Անձը վրեժ պիտի չառնի» (Երեմիա 5.9,29, 9.9):

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, և այն որոշակի տեղեկություն է հաղորդում իրեն կրողի մասին: Ի՞նչ տիտղոս է վերագրվում Աստծուն Սաղմոս 94.1-ում: Ի՞նչ է այն հայտնում մեզ Նրա մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վրեժխնդրություն» բառը թարգմանված է եբրայերեն «***նեկուամա***» բառից, որը կարելի է թարգմանել որպես «վրիժառություն» կամ «վրեժ»: Աստծուն վերագրվող այս տիտղոսի կրկնությունը ցույց է տալիս դրա հավաստիությունը: Նա վրիժառության Աստված է, Ով անկասկած վրեժ կլուծի այն հանցանքի համար, որը գործվել է Իր Անձի, Իր օրենքի և Իր արարչագործության դեմ:

2. Ինչպե՞ս է Աստված պատկերվում Նաում 1.2-ում: Բացատրե՛ք այս նկարագրության իմաստը: Ի՞նչ է այն հայտնում մեզ Աստծո մասին:

ա. *Ն*_____ *և Վ*_____ *Աստված է Տերը:*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Նախանձոտ» բառը թարգմանված է եբրայերեն «***կուանո***» բառից, որը նշանակում է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկին տիրանալու ուժգին ցանկություն և նույնիսկ նախանձավորություն: «Վրեժխնդիր» բառը թարգմանված է եբրայերեն «***նաքամ***» բառից, որը նշանակում է «վրեժ լուծել կամ վրեժ առնել»: Այս խոսքի գաղափարն այն է, որ Աստված նախանձավոր է Իր պատվի համար: Նա չի կիսի Իր փառքը ոչ ոքի հետ (տե՛ս Եսայի 42.8), ո՛չ էլ թույլ կտա, որ այն արժեզրկվի մեղավոր մարդկանց կողմից՝ նրանց կռապաշտության և անհնազանդության միջոցով: Նա վրեժ կառնի չապաշխարող մեղավորներից, որոնք անարգում են Իրեն:

բ. *Վ_____ առնող է Տերը Իր Ո_____:*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վրեժ առնող» բառակապակցությունը թարգմանված է եբրայերեն «***նաքամ***» բառից, որը նաև կարող է թարգմանվել որպես «վրեժ լուծել» կամ «պատիժ իրականացնել»: «Ոսոխ» բառը թարգմանված է եբրայերեն «***ցար***» բառից, որը նաև կարող է թարգմանվել «թշնամի» կամ «ախոյան» բառերով: Իր անհնազանդությամբ մեղավորը դարձնում է Աստծուն իր թշնամին և դառնում է ենթակա Աստծո վրեժխնդրությանը կամ պատժին:

3. Երկրորդ Օրինաց 32.39-42-ում գրված է ամենասարսափելի նկարագրություններից մեկն այն մասին, որ Աստված վրեժ է լուծում Իր իշխանությունն անարգող և Իր օրենքը ոտնահարող մարդկանցից: Ուշադրությամբ կարդացե՛ք այս հատվածը, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի մասին:

ա. *Հիմա նայե՛ք, որ Ես՝ ԵՍ ԵՄ, և Ինձ հետ միասին էլ աստված չկա (խս. 39):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում Աստված հայտարարում է Իր գերազանցությունը ամբողջ արարչագործության հանդեպ: Նա միակ ճշմարիտ Աստվածն է, և Նա ամեն ինչի Արարիչը և Պահապանն է: Այդ իսկ պատճառով, Նա (1) արժանի է մարդու երկրպագությանը, գոհությանը, հնազանդությանը և (2) իրավունք ունի պահանջել դա մարդուց:

բ. *Ես կմեռցնեմ և կապրեցնեմ, և Ես կզարկեմ և կբժշկեմ, և Իմ ձեռքից ազատող չկա (խս. 39):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում Աստված հայտարարում է Իր գերիշխանությունը ամբողջ արարչագործության հանդեպ: Նա մարդու անխուսափելի իրականությունն է: Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորը սովորեց այս մեծ դասը, ինչից հետո մեծ խոնարհությամբ հայտարարեց. «Եվ երկրիս բոլոր բնակիչները ոչնչի պես են համարվում, և Նա Իր ուզածի պես է անում երկնքի զորքով և երկրի բնակիչներով, և մեկը չկա, որ զարկի Նրա ձեռքին և Նրան ասի՝ ինչ ես անում» (Դանիել 4.35):

գ. *Եթե կայծակի սուրս սրեմ, և ձեռքս դատաստանը բռնի, Իմ թշնամիներին վրեժխնդրություն կանեմ և Ինձ ատողներին հատուցում կանեմ: Իմ նետերն արյունով կարբեցնեմ, և իմ սուրը միս կուտի սպանվածների և գերիների արյունից, թշնամիների իշխանների գլխից (խոսքեր 41,42):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս երկուսը ամբողջ Աստվածաշնչի ամենազարհուրելի խոսքերն են: Աստծո սերն ապաշխարող մեղավորի հանդեպ՝ անըմբռնելի է, և նույնպես Նրա զայրույթը՝ չապաշխարող մեղավորի հանդեպ: Մտածե՛ք հետևյալ երկու կարևոր ճշմարտության մասին. (1) համառ անհնազանդությունը ցույց է տալիս մեղավորի ատելությունը կամ խորշանքն Աստծո հանդեպ, և (2) մեկ օր Աստծո զայրույթն ամբողջովին կթափվի նրանց վրա, ովքեր հրաժարվում են ապաշխարել: Անօրենները կսպառվեն բորբոքված հնոցի առջև դրված մոմե արձանիկի պես:

4. Մենք կդիտարկենք ևս երկու հատված Հին կտակարանից, որոնք է՛լ ավելի են բացատրում մեզ մեղավորի և նրա մեղքի հանդեպ Աստծո վրիժառության իրողությունը և իմաստը: Գրի առեք ձեր մտքերը յուրաքանչյուրի վերաբերյալ:

ա. *Երկրորդ Օրինաց 7.9,10*

_____

_____

_____

_____

բ. *Եսայի 1.24*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հանգստացնել» բառը թարգմանված է եբրայերեն «***նախամ***» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «սփոփել» բառով: Մենք դիտարկեցինք Աստծո արձագանքը մարդու ապստամբությանը, որն արտահայտվում է տրտմությամբ, զայրույթով և խորշանքով: Այժմ տեսնում ենք, որ թափելով Իր զայրույթը և բավարարելով Իր արդարադատության պահանջները՝ Աստված հանգստություն կամ սփոփանք է գտնում:

5. Վարդապետությունն աստվածային վրիժառության մասին չի սահմանափակվում Հին կտակարանով. այն պարզորեն ուսուցանվում է նաև Նոր կտակարանում: Երբ Աստծո սրբությունը և արդարադատությունը բախվում են մարդու ապստամբությանը, արդյունքը զայրույթն ու վրիժառությունն են: Ի՞նչ է սովորեցնում Եբրայեցիների 10.30,31-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

_____

ՄԱՍ ՉՈՐՍ

ԱՍՏԾՈ ԴԱՏԱՍՏԱՆԸ ՄԵՂԱՎՈՐԻ ՀԱՆԴԵՊ

Գլուխ 17. Բաժանված Աստծուց

Մենք դիտարկեցինք Աստծո վերաբերմունքը չապաշխարող մեղավորի հանդեպ: Այժմ կդիտարկենք այն դատաստանները, որոնք գալիս են մեղքի արդյունքում: Շատերն այսօր խուսափում են աստվածային դատաստանի վարդապետության մասին խոսելուց, իսկ ոմանք ընդհանրապես ժխտում են այն: Այնուամենայնիվ, եթե մենք հավատում ենք, որ Աստվածաշունչն Աստծո ոգեշնչված Խոսքն է, մենք պետք է ընդունենք այս վարդապետությունը նույն համոզվածությամբ, որով ընդունում ենք մյուսները: Աստված ամբողջ երկրի Դատավորն է (տե՛ս Ծննդ. 18.25), և Նա կպատժի անօրեններին ըստ իրենց գործերի:

Մենք կսկսենք մեր ուսումնասիրությունը հավանաբար մեծագույն և ամենահիմնարար դատաստանից, որն Աստծուց ***բաժանված*** կամ ***օտարացած*** լինելն է:

ԱՍՏԾՈՒՑ ԲԱԺԱՆՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԵՂԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպես որ ֆիզիկական մահը անձի բաժանումն է մարմնից, այնպես էլ հոգևոր մահը անձի բաժանումն է Աստծուց: Աստված բարոյապես կատարյալ է և որևէ առնչություն չունի չարի հետ: Անկարելի է, որ Նա հաճություն ունենա մեղքի մեջ կամ հաղորդակցվի նրանց հետ, ովքեր անարդարություն են գործում: Այնպես որ, մարդու բարոյական ապականությունը և անարդարությունը բաժանում են նրան Աստծուց հսկա պարսպի պես՝ անկարելի դարձնելով շփումն Աստծո հետ: Եթե մեղքը չհեռացվի, մարդուն վիճակված կլինի ապրել և մահանալ Աստծո ներկայությունից դուրս և կտրվել Նրա օրհնության լիությունից:

Մենք կսկսենք հասկանալ, թե որքան կործանարար է մարդկության համար Աստծուց բաժանված և օտարացած լինելը, երբ դիտարկենք դա Աստծո մասին հետևյալ ճշմարտությունների լույսի ներքո:

> **Աստված ամբողջ կյանքի Հեղինակն է՝ և՛ նյութական, և՛ հոգևոր**. այնպես որ, Աստծուց օտարացած լինելը նշանակում է օտարացած լինել հենց կյանքից:
>
> **Աստված ամբողջ գիտելիքի և լույսի Աղբյուրն է**. այնպես որ, Աստծուց օտարացած լինելը նշանակում է մատնվել անտեղյակությանը և խավարին:
>
> **Աստված անսահման փառքի, արժեքների և սքանչելիքների Ակունքն է**. այնպես որ, Աստծուց օտարացած լինելը նշանակում է լինել միացած այն ամենին, ինչն անփառունակ, անարժեք և միապաղաղ է:
>
> **Աստված արդարության և բարության Չափանիշն է**. այնպես որ, Աստծուց օտարացած լինելը նշանակում է մատնվել այն ամենին, ինչն անարդար, խեղաթյուրված և չար է:
>
> **Աստված մարդու գոյության պատճառն է**. այնպես որ, Աստծուց օտարացած լինելը նշանակում է բաժանված լինել կյանքի նպատակից և իմաստից՝ մատնվելով դատարկության և անհուսության:

1. Դիտարկելով Աստծո երանելիությունը և Նրանից բաժանված լինելու բացասական հետևանքները՝ գրի առեք ձեր մտքերը: Որո՞նք են Աստծուն մոտ լինելու առավելությունները: Որո՞նք են Նրանից բաժանված լինելու հետևանքները:

_____

_____

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԵՂԱՎՈՐԸ ԲԱԺԱՆՎԱԾ Է ԱՍՏԾՈՒՑ

Մենք դիտարկեցինք Աստծուց բաժանված լինելու մի քանի ակնհայտ հետևանքներ: Այժմ հատկապես կդիտարկենք Սուրբ գրքի ուսմունքը Աստծո կողմից մեղավորին տրվող դատաստանի այս կողմի մասին:

1. Համաձայն Ծննդոց 2.16,17-ի՝ ինչպիսի՞ պատիժ կստանար Ադամը, եթե անհնազանդ գտնվեր Աստծո պատվիրանին: Ի՞նչ աստիճանի կլիներ այդ պատիժը:

ՆՇՈՒՄՆԵՐ. Ադամի պատիժը կլիներ մահը՝ ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր և հաղորդակցական: Հաղորդակցական առումով Ադամն օտարացված կլիներ Աստծուց և այն կյանքից, որի աղբյուրը Նրանում է: Մնացած բոլոր ախտերը, որոնք բաժին հասան Ադամին, այս հարաբերության խզման անմիջական հետևանքն էին:

2. Ծննդոց 3.24-ում տպավորիչ պատկերված է Աստծո և մարդու բաժանության սկիզբը: Նկարագրե՛ք այս իրադարձությունը և բացատրե՛ք, թե ինչ կերպով է սա վերաբերում ամբողջ մարդկությանը:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արտաքսել» բառը թարգմանված է եբրայերեն «***գարիշ***» բառից, որը նշանակում է «վռնդել, դուրս գցել կամ վտարել»: Ելնելով Իր սրբությունից, արդարությունից և արդարադատությունից՝ Աստված դատաստան բերեց մարդու վրա: Միևնույն ժամանակ, այն, որ նրան թույլ չտրվեց հավիտյան ապրել իր ողորմելի և անկում ապրած վիճակում, նույնպես աստվածային ողորմության դրսևորում էր. «Եվ Եհովա Աստված ասաց. «Ահա Ադամը եղավ իբրև մեզնից մեկը, որ բարին և չարը գիտենա, և հիմա միգուցե իր ձեռքը մեկնի և կենաց ծառից էլ առնի և ուտի և հավիտյան ապրի»» (Ծննդոց 3.22):

3. Իր սրբության պատճառով, Աստված չի կարող չեզոք լինել մեղքի և այն գործողների հանդեպ. ընդհակառակը, Նա պետք է ատի մեղքը և խորշանքով երես թեքի դրանից: Ի՞նչ է Ամբակում 1.13-ը սովորեցնում մեզ այս ճշմարտության մասին:

4. Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ մեղքը ոչ միայն անհամատեղելի է Աստծո հետ, այլև որ մեղքի արդյունքում Աստծո և մեղավորի հարաբերությունները խաթարվում են: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը այս ճշմարտության մասին:

   ա. *Առակաց 15.29*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Եսայի 59.1,2*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս բաժանությունն Աստծո և մեղավորի միջև տեղի չի ունեցել Աստծո կողմից որևէ բարոյական ձախողման կամ Նրա զորության պակասի պատճառով: Այս բաժանությունն անմիջապես բխում է մարդու ձախողումներից՝ նրա բարոյական ապականությունից և ինքնակամ մեղանչելուց:

5. Եփեսացիների գրքում գտնվում են մի քանի խոսքեր, որոնք նկարագրում են այն բաժանությունը, որը գոյություն ուներ հեթանոս ազգերի և միակ ճշմարիտ Աստծո միջև: Այս խոսքերը նաև հրաշալիորեն պատկերում են այն մեծ բաժանությունը, որը գոյություն ունի Աստծո և ցանկացած մեղավորի միջև՝ թե՛ հրեայի, թե՛ հեթանոսի: Ինչպե՞ս են մեղավորները նկարագրվում հետևյալ աստվածաշնչյան խոսքերում:

   ա. *Ա*_____ *Քրիստոսի (2.12):*

   բ. Հ_____ *Իսրայելի քաղաքակցությունից (2.12):* Հունարեն «***ապալլոտրիո՛ն***» բայից, որը կարող է թարգմանվել որպես «օտարացած»: «Քաղաքակցություն» բառը նույնպես կարող է թարգմանվել որպես «քաղաքացիություն» (NET):

գ. *Օ_____ խոստման ուխտերից (2.12):* Հունարեն «***քսենոս***» բառից, որը նաև կարող է թարգմանվել որպես «օտարերկրացի»:

դ. *Հ_____ չունեիք (2.12):*

ե. *Ա_____ էիք աշխարհում:* Մարդը չունի ոչ մի հույս առանց Աստվածաշնչի Աստծո, առանց հաշտության և հավիտենական կյանքի խոստման, որը տրվել է Հիսուս Քրիստոսի քավչարար աշխատանքի միջոցով:

զ. *Օ_____ և Պ_____ (2.19):* «Օտար» բառը հունարեն «***քսենոս***» բառից է, որը նաև կարող է թարգմանվել որպես «օտարերկրացի»: «Պանդուխտ» բառը թարգմանված է հունարեն «***պարոիկոս***» բառից [«***պարա***» = «կողքին» + «***օինոս***» = «տուն»] և նշանակում է մարդ, որը դրսում է, այսինքն՝ օտարական է:

է. *Օ_____ Աստծո կյանքից (4.18):* Հունարեն «***ապալլոտրիո՛ն***» բայից, որը կարող է թարգմանվել որպես «օտարացած»:

6. Սաղմոս 1.6-ն ազդեցիկ խոսք է, որն օգնում է մեզ հասկանալ, թե ինչ է նշանակում Աստծուց օտարացած լինելը: Գրի առեք ձեր մտքերն այս խոսքի մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գիտի» բառը թարգմանված է եբրայերեն «***յադա***» բառից, որը նշանակում է մտերիմ իմացություն, փոխհարաբերություն, շփում և հաղորդություն: Աստված մտերմորեն ճանաչում է արդարներին և գործում է նրանց կյանքում՝ հանուն բարօրության (տե՛ս Հռոմ. 8.28), բայց Նա օտարացած է անօրեններից: Սա չի նշանակում, որ Աստծո գիտելիքն անօրեն մարդկանց մասին սահմանափակ է, կամ որ Նա տեղյակ չէ նրանց գործերից: Աստված գիտի այս աշխարհում ապրող նույնիսկ ամենաօտարացած և չար մարդկանց ծածուկ մտքերը և գործերը:

7. Հիմնվելով այն սուրբգրային հատվածների վրա, որոնք մենք ուսումնասիրեցինք Գլխավոր կետեր 1-6-ում՝ բացատրե՛ք, թե ինչ կերպով է մարդու մեղքն առաջացնում խաթարված հարաբերություն և բաժանություն Աստծուց:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 18. Մատնված թշվառության

Նախորդ գլխում դիտարկեցինք Աստծո դատաստաններից մեկն անօրենների համար՝ Նրանից բաժանված լինելը: Այժմ կդիտարկենք այդ բաժանությունից բխող ևս մեկ դատաստան՝ թշվառության մատնված լինելը:

Եթե չանդրադառնանք մահվան իրականությանը, այս կյանքի թշվառությունները հավանաբար մեծագույն ապացույցն են այն մասին, որ Աստված դատում է մեղքը: Մենք ոչ միայն անկում ապրած արարածներ ենք, այլև ապրում ենք անկում ապրած աշխարհում: Նույնիսկ մեր կարճաատև կյանքում մենք բեռնավորված ենք բազմաթիվ դժվարություններով և նեղություններով՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին:

Ժամանակակից քրիստոնեության միտումն է բացատրել այս կյանքի թշվառությունները որպես մեղքի «բնական» հետևանք և մերժել ցանկացած հավանականություն, որ դրանք տեղի են ունենում Աստծո գերիշխանության, արդարադատության և զայրույթի արդյունքում: Շատերը փորձում են հեռացնել ցանկացած պատասխանատվություն Աստծուց, որպեսզի պաշտպանեն Նրան մեղադրանքներից սիրո բացակայության և դաժանության մեջ: Այնուամենայնիվ, Սուրբ գիրքը պարզորեն հայտնում է, որ իրականում, այս կյանքի ժամանակավոր թշվառությունները՝ տարբեր չափերով, Աստծո դատաստանի արդյունքն են, որ գալիս են մեղավորի վրա և այն անկում ապրած աշխարհի վրա, որում նա գտնվում է: Հռոմեացիների 1.18-ը սովորեցնում է մեզ, որ «Աստծո բարկությունը երկնքից ***հայտնվում*** է մարդկանց ամեն ամբարշտության և անիրավության վրա»: Այս աշխարհի ժամանակավոր թշվառությունները Նրա բարկության հայտնության կողմերից մեկն են:

Թեև այն ժամանակավոր թշվառությունները, որոնք կլանում են մարդու կյանքի ամեն մի բնագավառը, գլխավորապես Աստծո արդարադատության և զայրույթի հայտնությունն են, դրանք զուրկ չեն ողորմությունից: Մարդու ծնունդից մինչև մահը ամեն մի թշվառություն և դժվարություն աստվածային հիշեցում է այն մասին, որ նա անկում է ապրել, որ նրա անձն ապականված է, և որ նա օտարացած է Աստծուց: Ծննդաբերության ցավերը խոսում են մարդու հետ. այս աշխարհի արհավիրքները, բնական աղետները, պատերազմները, համաճարակները և սովերը խոսում են մարդու հետ. այս կյանքի հուսահատությունները և հիասթափությունները խոսում են մարդու հետ. ներքին պայքարը՝ դժգոհությունը և անհանգստությունը, խոսում է մարդու հետ. մահվան մշտական սպառնալիքը խոսում է մարդու հետ.

«Դու կորսված ես և պետք է գտնվես: Դու թշնամացած ես և պետք է հաշտվես: Դու ընկած ես և պետք է բարձրացվես: Դու վտարված ես և պետք է վերստանաս քո դիրքը: Դու աղավաղված ես և պետք է վերափոխվես»:

1. Ծննդոց 3.16-19-ում նկարագրվում է այն թշվառությունը, որը հասավ մարդկության և արարչագործության վրա՝ մեղքի պատճառով: Բացատրե՛ք, թե ինչ կերպով է յուրաքանչյուր թշվառություն հայտնում և՛ Աստծո դատաստանը, և՛ Նրա ողորմությունը:

   ա. *Կնոջն ուղղված դատաստանը (խս. 16)*

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Դեպի քո մարդը (կամ՝ ամուսինը) լինի քո փափագը» խոսքերը կարող են նշանակել հետևյալը. (1) իր ամուսնու հետ հարաբերությունների մեջ կինն ունենալու է փափագ և չի ունենալու բավականություն. (2) կինը, որը ձգտում էր անկախ լինել Աստծուց, այժմ ունի չափազանց ուժգին ցանկություն կամ կիրք տղամարդու հանդեպ, և (3) տղամարդու և կնոջ հարաբերությունները կոնֆլիկտային են լինելու. կինը «ցանկանալու» է իշխել իր ամուսնուն, իսկ ամուսինը չարաշահելու է իր իշխանությունն իր կնոջ հանդեպ:

բ. *Տղամարդուն ուղղված դատաստանը (խոսքեր 17-19)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Տղամարդուն ուղղված դատաստանը կարելի է ամփոփել երեք կետով. ծանր աշխատանք, ունայնություն և մահ: Այսպիսին է եղել տղամարդու դրությունը ամեն սերնդի մեջ: Նույնիսկ ամենից ազդեցիկ և հարուստ տղամարդիկ չեն կարողացել խուսափել այս դատաստանից: Անկախ իրենց նվաճումներից՝ նրանցից յուրաքանչյուրը դրել է իր գլուխը մահվան մահճին՝ կորցնելով այն ամենը, ինչ ձեռք է բերել:

2. Ադամի ապստամբությունից հետո մարդկության վրա եկած անեծքը պարզորեն նկարագրվում է Աստվածաշնչի «Իմաստության գրքերում» (այսինքն՝ Հոբի, Սաղմոսների, Առակաց, Ժողովող և Երգ երգոց գրքերում): Իմաստության գրքերից ի՞նչ են սովորեցնում մեզ հետևյալ հատվածները անկում ապրած մարդու անխուսափելի թշվառության և հիասթափությունների մասին: Ի՞նչ կերպով են այս ճշմարտությունները վերադարձնում մարդուն Աստծո մոտ:

ա. *Հոբ 5.7*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքի իմաստը հետևյալն է. այն, որ թշվառությունը և նեղությունները հատուկ են մարդկային կյանքին և հաճախակի են տեղի ունենում նրա հետ, նույնքան ճշմարիտ է, որքան այն, որ կրակի կայծերը վեր են բարձրանում: Ոչ ոք չի զարմանում՝ տեսնելով, որ կայծերը վեր են բարձրանում, քանի որ դա սովորական երևույթ է: Նմանապես, մենք ոչ մի դեպքում չպետք է զարմանանք՝ տեսնելով թշվառության մեջ գտնվող մարդկանց:

բ. *Հոբ 7.1,2*

գ. *Սաղմոս 89.47*

դ. *Ժողովող 2.22,23*

Գլուխ 19. Մատնված մեղքին

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ ծնվել են հոգևորապես մահացած, բարոյապես արատավորված և ընդունակ գրեթե անսահման չարիքի: Եթե նրանց թույլ տային լիարժեք կերպով արտահայտել իրենց արատավորությունը, ամբողջ մարդկությունը կբնաջնջվեր: Հասարակության պահպանման համար և հանուն Իր նպատակների և փառքի, Աստված սահմանափակում է մարդկանց չարությունը և թույլ չի տալիս նրանց լինել այնքան վատը, որքան նրանք կարող են լինել: Աստծո այս սահմանափակող աշխատանքը միակ բանն է, որը կանխում է մարդկության ինքնաոչնչացումը: Սա Աստծո շնորհքի մեծագույն դրսևորումն է բոլոր մարդկանց հանդեպ:

Աստված մատնում է մարդկանց իրենց մեղքերին այն ժամանակ, երբ դադարում է սահմանափակել մարդու չարիքը և տալիս է նրան ավելի շատ ազատություն՝ իր արատավորությունը դրսևորելու համար: Աստված վերցնում է Իր զսպող շնորհքը և մատնում է մարդուն իր սրտի բարոյական ապականությանը և արատավորությանը: Սա անխուսափելիորեն հանգեցնում է կործանման, և սա Աստծո զայրույթի ամենազարհուրելի դրսևորումներից մեկն է: Այս գլխում մենք լրջորեն կդիտարկենք Աստծո Խոսքի ամենամռայլ հատվածներից մեկը՝ Հռոմեացիների 1.18-32-ը: Ամենասարսափելին այն է, որ այն դատաստանը, որի մասին այստեղ գրված է, տարբեր չափերով դրսևորվել է յուրաքանչյուր սերնդի մեջ՝ սկսած մարդկության անկումից մինչև մեր սերունդը: Կարդացե՛ք Հռոմեացիների 1.18-32-ը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո պատասխանեք հետևյալ հարցերին:

1. Համաձայն 18-րդ խոսքի, ինչի՞ դեմ է հայտնվում Աստծո զայրույթը: Ո՞րն է դրա պատճառը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բռնել» բառը թարգմանված է հունարեն «*կատեխո*» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «զսպել, խոչընդոտել, արգելք դառնալ կամ ետ պահել»:

2. Համաձայն 19,20-րդ խոսքերի, ինչպե՞ս Սուրբ գիրքը կարող է իրավամբ հայտարարել, որ բոլոր մարդիկ «անպատասխան» են կամ արդարացում չունեն, նույնիսկ նրանք, ովքեր երբեք արտոնություն չեն ունեցել ճանաչելու Աստծո հայտնությունը, որը գրված է Սուրբ գրքում:

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը չի նշանակում, որ բոլոր մարդիկ գիտեն այն ամենը, ինչ կարելի է իմանալ Աստծո մասին, կամ որ բոլոր մարդիկ ստացել են հայտնության նույն չափը: Այն նշանակում է, որ բոլոր մարդիկ՝ ամեն տեղ և բոլոր ժամանակներում, ունեն բավականաչափ գիտելիք ճշմարիտ և կենդանի Աստծո մասին, որպեսզի Դատաստանի օրը արդարացում չունենան իրենց մեղքերի համար: Թեև Աստծո հայտնությունը բոլոր մարդկանց սահմանափակ է, այն անորոշ կամ անհասկանալի չէ: Նա «հայտնի» կամ ակնհայտ է դարձրել բոլոր մարդկանց, որ գոյություն ունի մեկ ճշմարիտ Աստված, և որ պետք է երկրպագել միայն Նրան: «Նրանցում» բառը ենթադրում է, որ գիտելիքը կենդանի Աստծո մասին չի հայտնվում միայն ստեղծագործության միջոցով, այլ որ Ինքը Աստված կնքել է այս գիտելիքն ամեն մարդու սրտի վրա: Այն տիեզերքը, որն Աստված ստեղծել է, ապացուցում է Նրա գոյությունը, և պարզապես հաստատում է այն, ինչ արդեն հայտնի է բոլոր մարդկանց. գոյություն ունի մեկ ճշմարիտ Աստված, և Նա արժանի է երկրպագության և հնազանդության:

3. Համաձայն 21-25-րդ խոսքերի, ինչպիսի՞ն է եղել մարդկության համընդհանուր պատասխանն Աստծո հայտնությանը: Ի՞նչ կերպով են հետևյալ խոսքերը նկարագրում մարդու արձագանքը: Ինչպե՞ս է սա արտահայտվել ամբողջ պատմության ընթացքում:

   ա. *Որովհետև Աստծուն ճանաչելով, Նրան Աստծո պես չփառավորեցին կամ շնորհակալ չեղան (խս. 21):*

   բ. *Այլ իրենց մտածմունքներում ունայնացան, և նրանց անմիտ սրտերը խավարեցին (խս. 21):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդը շրջվեց ամենագետ Աստծո լույսից և կառուցեց իրականության իր տեսանկյունը: Այս ապստամբությունը հանգեցրեց մտավոր անհեթեթությունների, բարոյական խավարի և ունայնության:

գ. *Ասելով, թե իմաստուն են, հիմարացան (խս. 22):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Երբ սահմանափակ և սխալական մարդը իր գիտելիքը դասում է ամենագետ Աստծո գիտելիքից վեր, արդյունքում շատանում են հիմարները և հիմարությունը:

դ. *Եվ անեղծ Աստծո փառքը փոխեցին եղծանելի մարդու և թռչունների և չորքոտանիների և սողունների պատկերի նմանության հետ (խս. 23):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Անհավատ մարդկանց խելագարությունն ամենից հաճախ արտահայտվում է նրանց երկրպագության առարկաներով: Երկրպագությունը սեփական անձին է՛լ ավելի է նվաստանում՝ վերածվելով նույնիսկ ամենացածր արարածներին երկրպագելուն:

ե. *Որոնք Աստծո ճշմարտությունը ստության հետ փոխեցին և երկրպագեցին ու պաշտեցին ստեղծվածներին, քան թե Ստեղծողին, որ օրհնյալ է հավիտյան (խս. 25):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք տեսնում ենք, որ ամբողջ պատմության ընթացքում մարդիկ մերժում են Ստեղծողին, որը վեր է իրենցից, և փոխարենը պաշտում են ստեղծվածներին, որոնք իրենցից ցածր դիրք ունեն:

4. Մենք իմացանք 18-րդ խոսքից, որ Աստծո զայրույթը հայտնվում է երկնքից նրանց դեմ, ովքեր գիտակցաբար մերժում են և ճնշում են ճշմարտությունը: Համաձայն հետևյալ խոսքերի, ***ինչպե՞ս*** է Աստծո զայրույթը հայտնվում նրանց դեմ:

   ա. *Աստված էլ նրանց մատնեց իրենց սրտերի Ց_____ մեջ՝ Պ_____ համար (խս. 24):* Աստված մատնեց նրանց իրենց բարոյապես ապականված սրտերի կրքերին, և արդյունքը խայտառակ պղծություն էր: «Պղծություն» բառն այս խոսքում թարգմանված է հունարեն «***ախաթարսի՛ա***» բառից, որը կարելի է նաև թարգմանել որպես «անմաքրություն»:

   բ. *Աստված մատնեց նրանց Ա_____ կրքերի (խս. 26)*: Հունարեն «***ատիմի՛ա»*** բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «անպատիվ», «խայտառակ» կամ «ամոթալի»:

   գ. *Աստված մատնեց նրանց Ա_____ մտքի (խս. 28):* Հունարեն «***ադոկիմոս***» բառից [«***ա***» - ժխտական մասնիկ + «***դոկիմոս***» = «փորձված, հավանություն ստացած»]: Այս բառը նույնպես կարելի է թարգմանել որպես «չընդունված», «որակավորում չունեցող» կամ «անպետք»: Արատավոր միտքը չի կարող անցնել Աստծո արդարության ստուգումը:

5. Համաձայն 28-32-րդ խոսքերի, երբ Աստված մատնում է մարդկանց իրենց սրտերի համեմատ վարվելուն, ո՞րն է դրա վերջնական արդյունքը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է հասկանալ, որ այս արատները ոչ այնքան մարդկությանը սպասվող Աստծո գալիք դատաստանի ***պատճառն*** են, որքան այն բանի ***հետևանքը***, որ Աստված արդեն իսկ դատել է մարդկությանը: Մարդկության մեծագույն մեղքն այս արատները չեն. այդ մեղքի մասին գրված է 21-րդ խոսքում. «Որովհետև Աստծուն ճանաչելով, Նրան Աստծո պես չփառավորեցին կամ շնորհակալ չեղան»: Քանի որ մարդկությունը մերժեց Աստծուն և հրաժարվեց ապրել Նրա իշխանության ներքո, Աստված դատեց մարդկանց՝ մատնելով իրենց բարոյապես ապականված սրտերին և ծայրաստիճան ապականված մտքերին: Ահա թե ինչու է հասարակությունը լի այն արատներով, որոնք թվարկված են 28-32-րդ խոսքերում:

Գլուխ 20. Մահ

Մաս մեկ. Մահվան աստվածաշնչյան նկարագրությունը

Անկասկած, մարդու անարդարության դեմ Աստծո զայրույթի մեծագույն ապացույցը ֆիզիկական մահն է՝ անձի բաժանումը մարմնից: Սկսած Ադամից և մինչև օրս, բոլոր մարդիկ բախվում են այս զարհուրելի և անհերքելի իրողությանը՝ այն փաստին, որ իրենք մահանալու են: Անկախ մարդու մեծությունից, իշխանությունից կամ հասարակական դիրքից՝ մահն անխուսափելի ճակատագիր է, որը սպասում է բոլորին: Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ այս զարհուրելի իրողությունը մեղքի անմիջական հետևանքն է: Կարևոր է նշել, որ մարդու մահը նրա ոչնչացումը չէ: Մահանալուց հետո մարդը չի դադարում գոյություն ունենալ. նրա գոյությունը շարունակվում է՝ կա՛մ Աստծո հետ հավիտենական հաղորդության մեջ Երկնքում, կա՛մ Նրանից հավիտենական բաժանման մեջ դժոխքում:

Կրկին, անհրաժեշտ է, որ մարդը գտնի մահվան մեջ ***և՛ Աստծո դատաստանը, և՛ Նրա ողորմությունը***: Մահն «Աստծո մեծ հիշեցումն» է մարդուն իր մահկանացու լինելու և փրկություն ստանալու կարիքի մասին: Յուրաքանչյուր մահախոսական, յուրաքանչյուր հուղարկավորություն, յուրաքանչյուր տապանագիր աղաղակում է մարդուն՝ հորդորելով շրջվել այս աշխարհի մտահոգություններից դեպի հավիտենությունը, շտկել իր կյանքը մինչև իր մահվան օրը և պատրաստ լինել հանդիպելու իր Աստծուն:

Թեև մահն անժխտելի իրողություն է, որն աննահանջ կերպով հակադրվում է մարդկությանը, դրա իրական բնույթն առեղծված է մնում ողջերի համար: Մենք չենք կարող հենվել նույնիսկ այն մարդկանց ամենից անկեղծ պատմությունների վրա, որոնք ենթադրաբար «եղել են այն աշխարհում» և վերադարձել են՝ պատմելու համար մարդկանց իրենց փորձառությունը: Եթե ուզում ենք «հաստատ խոսք» ունենալ նման մեծ առեղծվածի մասին, մենք պետք է դիմենք Սուրբ գրքին:

Աստվածաշունչը հաճախ է խոսում մահվան մասին՝ բազմաթիվ զգուշացումներով և հորդորներով, սակայն զուսպ է արտահայտվում դրա իրական բնույթի վերաբերյալ: Այն, ինչում մենք կարող ենք վստահ լինել, պետք է քաղվի Սուրբ գրքում գտնվող մի քանի անմիջական հղումներից: Այս հատվածները սովորեցնում են մեզ երկու մեծ ճշմարտություն: ***Առաջինը***՝ մահը մարդու գիտակցական գոյության ավարտը չէ: ***Երկրորդը***՝ մահվան ժամանակ մարդու մարմինը վերադառնում է հողին (մինչև հարությունը), իսկ հոգին վերադառնում է Աստծո մոտ:

1. Հակոբոս 2.26-ում գրված է մահվան պարզ, բայց խորը նկարագրություն: Ցույց տվեք այն ճշմարտությունը, որի մասին սովորեցնում է այս խոսքը, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը: Ինչ է մահը: Ե՞րբ է այն տեղի ունենում:

   ա. *Մ*_____ *առանց Հ*_____ *մեռած է*:

   _____

   _____

   _____

   _____

_____

_____

2. Մենք կարող ենք տեսնել Հակոբոս 2.26-ից, որ մահվան ժամանակ մարդու հոգին բաժանվում է նրա մարմնից: Համաձայն Ժողովող 12.7-ի և Սաղմոս 146.4-ի, ինչ է տեղի ունենում մարմնի և հոգու հետ այդ բաժանման պահին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս պահին օգտակար է հիշել և հաշվի առնել երկու աստվածաշնչյան իրադարձություն. (1) Ադամի արարումը Ծննդոց 2.7-ում. «Եվ Տեր Աստված հողի փոշուց շինեց մարդուն և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ», և (2) անկման հետևանքով Ադամին վրա հասած աստվածային անեծքը Ծննդոց 3.19-ում. «Երեսիդ քրտինքով հաց ուտես, մինչև որ ետ դառնաս դեպի երկիրը, որովհետև նրանից առնվեցիր, նրա համար, որ հող էիր դու, և դեպի հողը դառնաս»:

3. Սուրբ գրքում օգտագործվում են մի քանի կարևոր փոխաբերություններ, որոնց նպատակն է օգնել մեզ հասկանալ մահվան բնույթը: Ցույց տվեք մահվան հետևյալ փոխաբերություններից յուրաքանչյուրը:

ա. *Հ_____ Ա_____ (Ծննդոց 49.33):*

բ. *Ա_____ կենալ (Հոբ 34.20):*

գ. *Հ_____ Դ_____ (Ծննդոց 3.19, Սաղմոս 104.29):*

դ. *Կ_____ (Հոբ 24.24):*

ե. *Բ_____ (Բ Տիմոթեոս 4.6), Դ_____ Գ_____ (Բ Պետրոս 1.15):*

Գլուխ 21. Մահ

Մաս երկու. Մահը որպես աստվածային դատաստան

ՄԱՀԸ ՈՐՊԵՍ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Սկսած իր առաջին հիշատակումից Սուրբ գրքում, մահը դիտարկվում է որպես Աստծո կողմից մարդու մեղքի դատաստանի արդյունքը: Ինչո՞ւ են մարդիկ մահանում: Աստվածաշնչի պատասխանը պարզ և միանշանակ է. նրանք մահանում են, քանի որ մեղավոր են: Աստված հայտնեց Ադամին. «Որովհետև նրանից (այսինքն՝ բարու և չարի գիտության ծառից) կերած օրդ մահով պիտի մեռնես» (Ծննդոց 2.17): Այս և այլ խոսքերից պարզ է դառնում, որ մահն արարչագործության մասը չէր ամենասկզբից. այն մուտք գործեց մեր աշխարհ Ադամի մեղքի միջոցով և փոխանցվեց բոլոր մարդկանց, քանի որ բոլորն են մեղանչում (տե՛ս Հռոմ. 5.12): Ամեն մի տապանաքար և տապանագիր Աստծո դատաստանի դրսևորումն է մեր անկում ապրած ցեղի հանդեպ: Այն, որ մեղքը բոլոր դեպքերում Աստծո դատաստանի դրսևորումն է, չի նշանակում, որ ոմանք ավելի վաղ են մահանում այն պատճառով, որ ավելի մեղավոր են մյուսներից: Չէ՞ որ կան երեխաներ, որոնք մահանում են իրենց մայրերի որովայնում առանց նույնիսկ մեկ մեղք գործելու, և կան մարդիկ, որոնք տասնամյակներ շարունակ ապրում են բացահայտ ապստամբությամբ Աստծո դեմ: Այնպես որ, երբ մենք ասում ենք, որ մահն Աստծո դատաստանի դրսևորումն է, մենք պարզապես նկատի ունենք, որ մեզնից յուրաքանչյուրն այս անկում ապրած մեղանչական ցեղի մասնիկն է, և որ մահն Աստծո դատաստանի դրսևորումն է բոլորիս հանդեպ:

1. Ամբողջ Սուրբ գրքում մահը դիտարկվում է որպես մարդու մեղքի արդյունք: Լինի Ադամի մեղքը, որը վերագրվել է մարդկությանը, կամ բոլոր մարդկանց սեփական անարդարությունը, միևնույն է, սկզբունքը նույնն է. բոլոր մարդիկ մահանում են, քանի որ բոլոր մարդիկ մեղանչում են: Ի՞նչ են հետևյալ աստվածաշնչյան խոսքերը Հին և Նոր կտակարաններից սովորեցնում մեզ այս ճշմարտության մասին:

   ա. *Եզեկիել 18.4,20*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Հռոմեացիների 6.23*

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վարձք» բառը թարգմանված է հունարեն «***օպսոնիոն***» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել որպես «վարձատրություն», «մատակարարում» կամ «նպաստ»: Այս բառն օգտագործվում էր կրթաթոշակի կամ զինվորների կենսաապահովման վճարի իմաստով:

2. Ե՛վ Հին, և՛ Նոր կտակարանները պարզ և միանշանակ ցույց են տալիս, որ մեղքի անխուսափելի հետևանքը մահն է: Հակոբոս 1.15-ում Սուրբ գիրքը հայտնում է մեզ մեղքի ծածուկ աշխատանքը և մահացու արդյունքը մարդու կյանքում: Ծանոթացե՛ք այս խոսքի բովանդակությանը և գրի առեք ձեր մտքերը:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ցանկություն» (կամ «կիրք») բառը թարգմանված է հունարեն «***էպիթումի՛ա***» բառից, որը նշանակում է սաստիկ ցանկություն կամ փափագ: Այս բառը կարող է ունենալ և՛ դրական, և՛ բացասական իմաստ՝ կախված համատեքստից: Այս խոսքում այն նշանակում է կիրք կամ սաստիկ ցանկություն, որը հակառակ է Աստծո կամքին: Երբ մարդը թույլ է տալիս, որ նման ցանկությունն աճի և հասունանա, այն ծնունդ է տալիս մեղքի: Երբ մեղքը կատարվում է՝ որպես գործողություն, այն մահ է ծնում: Մեղքի արդյունքը մշտապես մահն է:

3. Եսայի 64.6-ում ազդեցիկ կերպով պատկերված է կապը մարդու մեղքի և մահվան միջև: Կարդացե՛ք այս խոսքը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, և գրի առեք ձեր մտքերը հետևյալ հարցերի վերաբերյալ:

ա. *Ինչպե՞ս է նկարագրվում մարդու բարոյական ապականությունը:*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պիղծ» բառը հավանաբար հղում է բորոտությանը (տե՛ս Ղևտ. 13.8,45)։ Արդար գործերի համեմատությունը պիղծ կամ անմաքուր հանդերձի հետ ապացուցում է, որ մեղավորի ներքին բարոյական ապականությունն աղտոտում կամ պղծում է նույնիսկ նրա ամենաարդար գործերը։ Նոր կտակարանում Հուդա 23-ը նկարագրում է մեղավորի հանդերձները որպես «մարմնից աղտոտված»։

բ. *Որո՞նք են մարդու բարոյական ապականության և մեղքին ձգտելու անխուսափելի հետևանքները։*

ՆՇՈՒՄՆԵՐ. Քամուց տարվող չոր և անկյանք տերևների փոխաբերությունը դառը հիշեցնում է առանց Աստծո ապրող մարդու մահկանացության և նրա կյանքի ունայնության մասին։

4. Սաղմոս 90.2-10-ում գտնվում է մահվան ազդեցիկ և բանաստեղծական պատկերում՝ որպես Աստծո կողմից մեղավոր մարդկանց դատաստանը։ Գրի առեք ձեր մտքերը հետևյալ պնդումներից յուրաքանչյուրի մասին։

ա. *«Դու մարդուն փոշի ես դարձնում և ասում. «Ե՛տ դարձեք, մարդկանց որդինե՛ր»» (խս. 3)։*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը հիշատակում է այն անեծքը, որն Աստված հռչակեց Ադամի դեմ անկումից հետո. «Երեսիդ քրտինքով հաց ուտես, մինչև որ ետ դառնաս դեպի երկիրը, որովհետև նրանից առնվեցիր, նրա համար, որ հող էիր դու, և դեպի հողը դառնաս» (Ծննդոց 3.19)։

բ. *«Ջրհեղեղով ողողում ես նրանց, և նրանք քուն են լինում, ինչպես խոտ, որ առավոտյան կանաչում է: Առավոտյան ծաղկում է և անցնում. իրիկունը կտրվում է և չորանում» (խոսքեր 5,6):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Նմանատիպ մի հատված գտնվում է Սաղմոս 103.15,16-ում. «Մարդու օրերը խոտի նման են. ինչպես դաշտի ծաղիկը, այնպես ծաղկում է: Երբ որ քամին անցնում է նրա վրայով, նա էլ չկա, և նրա տեղն այլևս չի ճանաչում նրան»:

գ. *«Որովհետև մաշվեցինք Քո բարկությունով և Քո սրտմտությունով շփոթվեցինք: Մեր անօրինություններ-ը դրիր Քո առջև, մեր ծածուկ մեղքերը՝ Քո երեսի լույսի մեջ: Որովհետև մեր բոլոր օրերը փչանում են Քո բարկությունով. մեր տարիներն անց ենք կացնում ինչպես ափեղցփեղ խոսք» (խոսքեր 7-9):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Սաղմոսերգուն գրում է. «Տե՛ր, եթե Դու անօրինությունները համարես, ո՞վ կկենա, Տե՛ր» (130.3): Սա հռետորական հարց է, և ակնհայտ պատասխանն է՝ «ոչ ոք»:

դ. *«Մեր տարիների օրերը յոթանասուն տարի են, և եթե զորությունով ութսուն տարի էլ լինեն, նրանց փառքն աշխատանք է և ցավ, որովհետև շուտով անց է կենում, և մենք թռչում ենք» (խս. 10):*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Տրամաբանական շղթան ակնհայտ է. մեղքը տանում է մահվան, իսկ մահը՝ ունայնության: Մեղքի պատճառով մարդու կյանքն ընդամենը ունայնությունից մի փոքր ավելի է: Մահը կլանում է ցանկացած փառք, որը մարդը կարող է ձեռք բերել, և ոչնչացնում է ամեն հույս: Երկրի վրա Աստծո ստեղծվածներից նույնիսկ ամենաազնվագույնը դատապարտված է կրելու իր մահկանացության տառապանքը և դատաստանի զարհուրանքը: Միայն Հիսուս Քրիստոսում է այս սարսափելի անեծքը դարձվում մարդուց:

ՄԱՀԸ ՈՐՊԵՍ ԱՍՏԾՈ ԳԵՐԻՇԽԱՆ ԳՈՐԾ

Համաձայն Սուրբ գրքի, մահը Աստծո կողմից մարդու մեղքի դատաստանի հետևանքն է: Բոլոր մարդիկ մահանում են, և նրանք մահանում են համաձայն Աստծո գերիշխան վճռի: Նա ոչ միայն վճռել է մեր մահվան օրը, այլև Ինքն է իրագործելու այդ վճիռը: Նա է տալիս կյանքը և վերցնում այն. Նա է կենդանացնում և սպանում: Շատերը ժամանակակից քրիստոնեական շրջանակներում խիստ կվարանեն՝ խոստովանելու համար, որ մահն Աստծո գերիշխան վճռի արդյունքն է և Աստծո գործն է: Փոխարենը, նրանք կբացատրեն մահը որպես անկում ապրած աշխարհում ապրելու հետևանք կամ ինչ-որ բան, ինչը վեր է սիրող Արարչի վերահսկողությունից: Սա կոպտորեն հակասում է Սուրբ գրքի վկայությանը:

1. Ինչպե՞ս է Դանիել 5.23-ը նկարագրում Աստծուն: Ավարտե՛ք այդ նկարագրությունը և բացատրե՛ք դրա իմաստը:

   ա. *Այն Աստծուն, որի Զ_____ է քո Շ_____ և որինն են քո բոլոր ճանապարհները:*

   _____

   _____

   _____

   _____

2. Սուրբ գիրքը պարզ և միանշանակ կերպով ցույց է տալիս, որ Աստված ունի բացարձակ գերիշխանություն յուրաքանչյուր մարդու կյանքի և մահվան վրա: Ստորև գտնվում են երկու ամենակարևոր խոսքերը Սուրբ գրքում այս ճշմարտության մասին: Ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ:

   ա. *Երկրորդ Օրինաց 32.39*

   _____

   _____

բ. *Ա Թագավորաց 2.6*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գերեզման» բառը թարգմանված է եբրայերեն «*շեոլ*» բառից: Ամենից հաճախ այն վերաբերում է գերեզմանին կամ մահացածների գտնվելու վայրին:

3. Վարդապետությունն Աստծո գերիշխանության մասին սովորեցնում է մեզ, որ յուրաքանչյուր մարդու մահն արդեն իսկ սահմանվել է աստվածային վճռով: Մեզնից յուրաքանչյուրին շնորհված են հաշված օրեր: Անկարելի է երկարացնել այն, ինչ Աստված որոշել է, թեկուզ մեկ շնչով: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը այս ճշմարտության մասին:

ա. *Հոբ 14.5*

բ. *Ժողովող 3.1,2*

գ. *Եբրայեցիների 9.27*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սահմանված» բառը թարգմանված է հունարեն «***ապոկեյմայ***» բառից, որը նշանակում է «մի կողմ դրված, պահված կամ նախապես պատվիրված»: Յուրաքանչյուր մարդու մահվան ժամանակը կախված է Աստծո գերիշխան վճռից: Այն մարդու կամքի, պատահականության կամ ինչ-որ ազդեցությունների արդյունք չէ:

դ. *Ղուկաս 12.20*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը Եբրայեցիների 9.27-ի ազդեցիկ պատկերումն է: «Ետ պահանջել» բառը թարգմանված է հունարեն «***ապահ՛տեո***» բառից, որը նշանակում է «ետ խնդրել կամ պահանջել»: Երբ Աստված վերադառնալու հրահանգ է տալիս, մարդը չի կարող մերժել այն:

Գլուխ 22. Մահ

Մաս երեք. Մահվան իշխանությունը մարդու վրա

ՄԱՀՎԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԸ

Գոյություն ունի մի աստվածաշնչյան ճշմարտություն, որին չեն հակառակվում ոչ մի բնագավառում (գիտական, պատմական և այլն). այն, որ բոլոր մարդիկ մահանում են: Մարդկության հոծ զանգվածը վարակված է մահկանացության անողորմ ժանտախտով: Միլիարդավորներն ընկել են դրա մտրակից, և հազարավորները միանում են նրանց ամեն օր: Չկա ոչ մի բուժում և ոչ մի հույս, որ ժամանակի ընթացքում այս իրողությունն ինչ-որ կերպով կփոխվի:

Մահն այնքան հաճախակի է և տարածված է, որ կարող է թվալ, թե չարժե խոսել դրա համընդհանուր բնույթի մասին: Այնուամենայնիվ, կարևոր է դիտարկել այս վարդապետությունը ոչ թե այն պատճառով, որ այն ժխտվում է, այլ քանի որ այն հաճախ մոռացվում կամ անտեսվում է: Մենք գիտենք, որ մահկանացու արարածներ ենք: Մենք գիտենք, որ մահանում ենք: Մենք գիտենք, որ չենք կարող խուսափել մահից կամ խափանել դրա գալուստը: Այդ իսկ պատճառով, մենք (գիտակցաբար կամ անգիտակցաբար) հակված ենք հնարավորինս հեռացնելու մեզնից մտքերը մահվան մասին: Մենք այնքան ենք հմտացել մահվան միտքը մեզնից հեռացնելու մեջ, որ նույնիսկ կարող ենք կրել մեր ամենամտերիմ ընկերների դագաղները՝ նույնիսկ մեկ վայրկյան չմտորելով այն ճշմարտության շուրջ, որ նույն ճակատագիրը սպասում է յուրաքանչյուրիս: Այնպես որ, անհրաժեշտ է, որ մենք լսենք այն ճշմարտությունը, որը ձգտում ենք ճնշել:

1. Հին կտակարանում օգտագործվում է մի շատ կարևոր փոխաբերություն՝ մահվան համընդհանուր բնույթը ներկայացնելու համար: Ցո՛ւյց տվեք այս փոխաբերությունը և բացատրե՛ք դրա իմաստը:

   ա. *Ամեն Ե*_____ *Ճ*_____ *(Հեսու 23.14, Գ Թագավորաց 2.1,2):*

   _____

   _____

   _____

   _____

2. Սուրբ գիրքը սովորեցնում է մի կարևոր ճշմարտություն այն մասին, որ մահն անաչառ է: Այն պատահում է բոլոր մարդկանց՝ հարուստներին և աղքատներին, իմաստուններին և անմիտներին: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը այս ճշմարտության մասին:

   ա. *Հոբ 21.22-26*

   _____

   _____

բ. *Ժողովող 2.16*

ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ԿԱՐՃԱՏԵՎՈՒԹՅՈՒՆԸ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին մարդը ստեղծվեց Աստծո պատկերով, սակայն մեղքի ի հայտ գալուց հետո այնքան բան կորսվեց: Մարդու գոյությունը ողբերգականորեն խեղաթյուրվեց և անճանաչելի կերպով ձևախեղվեց: Մարդը վերածվեց կարճ կյանք ունեցող, խոցելի և ունայն էակի: Այժմ նա ապրում է, մինչև որ նրանից քամվում է կենսունակությունը, նրա բոլոր նպատակները կործանվում են, և նրա մարմինը վերադառնում է հողին, որից որ վերցված էր: Իզուր չէ, որ Ժողովողն աղաղակում է. «Ունայնություն ունայնությանց, բոլորը ունայն է» (Ժողովող 1.2):

1. Ամբողջ Սուրբ գրքում կան անթիվ նկարագրություններ մարդու խոցելիության, նրա կյանքի կարճատևության և նրա ձգտումների ունայնության մասին: Ստորև գտնվում են ամենակարևոր հատվածներն այս մասին: Մտորե՛ք այս հատվածներից յուրաքանչյուրի շուրջ, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը: Ի՞նչ այլաբանություններ և համեմատություններ են օգտագործվում՝ մարդուն և նրա կյանքը նկարագրելու համար: Ի՞նչ են դրանք հայտնում մեզ:

ա. *Հոբ 14.1,2*

բ. *Սաղմոս 39.4-6*

գ. *Սաղմոս 78.39*

դ. *Սաղմոս 103.14-16*

ե. *Սաղմոս 144.3,4*

զ. *Հակոբոս 4.15*

2. Հոբի գրքում կա երկու հատված, որոնք օգտակար են՝ պատկերելու համար մարդու կյանքի խոցելիությունը և կարծատևությունը: Ուշադրությամբ մտորե՛ք այս հատվածներից ամեն մեկի շուրջ, իսկ հետո գրի առեք ձեր մտքերը:

ա. *Մարդու կյանքի խոցելիությունը (Հոբ 4.17-21)*

բ. *Մարդու կյանքի կարծատևությունը (Հոբ 9.25,26)*

3. Հետևյալ աստվածաշնչյան հատվածներում գտնվում են մարդու կյանքի խոցելիության և կարծատևության ամենացնցող նկարագրությունները: Ծանոթացե՛ք այս հատվածների բովանդակությանը և գրի առեք ձեր մտքերը: Ինչպե՞ս է պատկերվում մարդու կյանքի ունայնությունը:

ա. *Սաղմոս 49.10-14*

_____

_____

_____

_____

_____

բ. *Ժողովող 3.19,20*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է նշել, որ այս հատվածը չի ժխտում մարդկային անձի անմահությունը, ինչպես նաև արդարների և անօրենների ապագա հարությունը: Հեղինակը նկարագրում է իրականությունն այնպես, ինչպես այն թվում է մեր ֆիզիկական զգայարաններին: Նրա գլխավոր միտքն այն է, որ բոլոր մարդիկ մահանում են:

գ. *Ժողովող 5.15-17*

_____

_____

_____

_____

դ. *Ա Տիմոթեոս 6.7*

_____

_____

4. Սուրբ գիրքը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ մեղանչում են, և որ մեղքի պատճառով բոլոր մարդիկ մահանում են: Մահն անխուսափելի իրողություն է, որը սպասում է մեզնից յուրաքանչյուրին: Այն մեր անկանխելի, անխուսափելի և անպարտելի թշնամին է: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ սուրբգրային հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Հոբ 14.7-12*

բ. *Սաղմոս 49.7-9*

գ. *Սաղմոս 89.47,48*

դ. *Ժողովող 8.8*

5. Ավարտելու համար մեր ուսումնասիրությունը մարդու խոցելիության և նրա կյանքի կարճատև լինելու մասին, մենք կդիտարկենք վերջին երկու սուրբգրային հատվածները՝ Եսայի 40.6-8-ը և Ժողովող 12.1-ը: Առաջինում գրված է ամենից ազդեցիկ պնդումներից մեկը մարդու կարճատև և Աստծո հավիտենական բնույթի մասին: Երկրորդում գրված է անչափ կարևոր հորդոր բոլոր մարդկանց: Կարդացե՛ք յուրաքանչյուր հատվածը, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո գրի առեք այն ճշմարտությունները, որոնք քաղել եք դրանցից:

ա. *Ճշմարտությունը մարդու մասին (Եսայի 40.6-8)*

բ. *Այդ դեպքում, ինչպե՞ս մենք պետք է ապրենք (Ժողովող 12.1)*

Գլուխ 23. Անօրենների վերջնական դատաստանը

Վերջին դատաստանը, ամենայն հավանականությամբ, Սուրբ գրքի ամենազարհուրելի վարդապետությունն է: Այն, որ յուրաքանչյուրն Ադամի ցեղից կկանգնի արդար և ամենագետ Աստծո առջև և կդատվի ըստ իր մտքի, խոսքի և գործի, անընմբռնելի է մեզ համար:

Թեև Վերջին դատաստանի վարդապետությունը հաճախ ծաղրվում և մերժվում է՝ որպես անցյալի վերապրուկ, անհրաժեշտ է հիշել, որ այն Սուրբ գրքի պարզ ուսմունքներից մեկն է, և այն ողջամիտ ճշմարտություն է, որը մենք պետք է ընդունենք՝ հաշվի առնելով այն ամենը, ինչ գիտենք Աստծո հատկանիշների մասին: Անկասկած, Աստծո բացառիկ իրավունքն է և՛ տիրել այն արարածներին, որոնց Ինքը ստեղծել է, և՛ դատել այն արարածներին, որոնց Ինքը տիրում է: Իրականում, սա ոչ միայն Նրա բացառիկ իրավունքն է, այլև Նրա արդար բնավորության պահանջը: Մի՞թե ամբողջ երկրի Դատավորն արդարություն չի գործի (տե՛ս Ծննդ. 18.25): Մի՞թե ***անհրաժեշտ*** չէ, որ բարոյական հատկանիշներ ունեցող Աստված բարոյական դատաստանի ենթարկի այն տիեզերքը, որն Ինքը ստեղծել է: Մի՞թե մենք կարող ենք մտածել, որ Աստված չպետք է ունենա այն իրավունքը, որը մենք պահանջում ենք մեզ համար մեր արդարադատության ատյաններում: Իհարկե չենք կարող:

Վերջին դատաստանն ***Աստվածաշնչի հիմնարար վարդապետությունն*** է: Անկարելի է հավատալ Աստվածաշնչի աստվածային ոգեշնչմանը և անսխալականությանը՝ չընդունելով վարդապետությունը Վերջին դատաստանի և անօրենների հավիտենական դատապարտության մասին: Թեև շատ բան այս վարդապետության մեջ առեղծված է մնում, այնուամենայնիվ, համաձայն Սուրբ գրքի՝ այն միանշանակ ճշմարտություն է: Յուրաքանչյուրը Ադամի ցեղից դատվելու է Աստծո կողմից: Անօրենները կդատապարտվեն հավիտենական պատժի, իսկ Քրիստոսում փրկվածները կժառանգեն փրկության լիությունը:

1. Վերջին դատաստանն Աստվածաշնչի և քրիստոնեական հավատքի հիմքային վարդապետություններից մեկն է: Այն պարզորեն երևում է Եբրայեցիների 6.1,2-ում: Ինչպե՞ս է հեղինակն անվանում այս վարդապետությունը:

   ա. *Քրիստոսի մասին Ս_____ խոսք:*

   ՆՇՈՒՄՆԵՐ. Այս բառը թարգմանված է հունարեն «***արխե***» բառից, որը նշանակում է սկիզբ կամ ծագում: Այս արտահայտությունը կարելի է թարգմանել որպես «սկզբնական խոսք» կամ «տարրական ուսմունք»: Այն ցույց է տալիս, որ վարդապետությունը հավիտենական դատաստանի մասին քրիստոնեության սկզբնական կամ հիմնարար ուսմունքներից մեկն է: Այն աստվածաբանական ենթադրություն չէ, այլ՝ հավաստի սուրբգրային փաստ:

2. Աստծո Վերջին դատաստանը այն աստիճան է ներհյուսված Հին կտակարանի մտածողության մեջ, որ դրա իրողությունը ժխտելը նշանակում է ժխտել Սուրբ գրքի անսխալական բնույթը: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հինկտակարանյան հատվածները Աստծո Վերջին դատաստանի հավաստիության մասին:

ա. *Սաղմոս 9.7,8*

բ. *Սաղմոս 96.10-13*

գ. *Ժողովող 3.17*

դ. *Ժողովող 11.9*

ե. *Ժողովող 12.13,14*

3. Կարևոր է հասկանալ, որ ճշմարտությունը Վերջին դատաստանի մասին ընդամենը «հինկտակարանյան վարդապետություն» չէ: Ի՞նչ են հայտնում հետևյալ նորկտակարանյան հատվածները Աստծո Վերջին դատաստանի հավաստիության մասին:

   ա. *Հռոմեացիների 14.10-12*

   բ. *Եբրայեցիների 9.27*

   գ. *Բ Պետրոս 3.7*

4. Այն օրը, երբ Աստված դատելու է բոլոր մարդկանց, ունի տարբեր անվանումներ Սուրբ գրքում: Ցույց տվեք այդ անվանումներն ըստ հետևյալ աստվածաշնչյան խոսքերի, իսկ հետո գրի առեք ձեր մտքերն այն մասին, թե ինչ են դրանք հայտնում:

   ա. *Դ*_____ *Օ*_____ *(Բ Պետրոս 2.9):*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Դատաստան» բառը թարգմանված է հունարեն «***կրի՛սիս***» բառից, որից առաջացել է մեզ ծանոթ «կրիզիս» (ճգնաժամ) բառը: Այն նշանակում է օրինական դատ, դատավորի որոշում կամ գնահատում: Այս խոսքում այս բառակապակցությունը նշանակում է այն օրը, երբ ամենագետ Աստված կորոշի բոլոր մարդկանց ճակատագիրը: Նրա որոշումը երբեք չի բեկանվի:

բ. *Բ*_____ *և այն Աստծո արդար Դ*_____ *հայտնության օրը (2.5)*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Դատաստանի օրը կհայտնվի Աստծո կատարյալ արդարությունը: Յուրաքանչյուրը կստանա ճիշտ այն, ինչին արժանի է՝ կա՛մ վարձատրություն, կա՛մ զայրույթ: Այդ օրը ոչ ոք չի կասկածի, որ Աստված արդար է:

գ. *Մ*_____ *Օ*_____ *(Հուդա 6)*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեծ» բառը թարգմանված է հունարեն «***մե՛գաս***» բառից: Եթե օրվա մեծությունը որոշվում է այն բանով, թե որքանով է այն վերաբերում մարդկությանը, և որքանով է այն կարևոր նրանց համար, Դատաստանի օրն ավելի ակնառու է, քան մնացած բոլոր օրերը: Այդ օրը կորոշվի բոլոր մարդկանց հավիտենական ճակատագիրը:

դ. *S*_____ *O*_____ *(3.10)*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Դատաստանի օրը կլինի Աստծո օրը: Այդ օրը Աստված կարդարանա ամբողջ արարչագործության առջև: Բոլոր կասկածները Նրա գոյության և բնավորության մասին կփարատվեն:

5. Դատաստանի օրը Աստված կդիտարկի Ադամի ցեղի յուրաքանչյուր ներկայացուցչի մտքերը, խոսքերը և գործերը: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը Աստծո դատաստանի մանրակրկիտության մասին: Մի՞թե ինչ-որ բան կանտեսվի կամ կծածկվի Նրա առջև:

ա. *Մարկոս 4.22, Ղուկաս 8.17, 12.2,3*

_____

_____

_____

_____

_____

բ. *Ժողովող 12.14*

_____

_____

_____

_____

_____

գ. *Ա Կորնթացիների 4.5*

_____

_____

_____

_____

_____

դ. *Եբրայեցիների 4.13*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մերկ» բառը թարգմանված է հունարեն «***գումնո՛ս***» բառից, որը բառացիորեն նշանակում է «մերկ»: «Բաց» բառը թարգմանված է հունարեն «***տրախելի՛զո***» բառից, որը նշանակում է «մերկացնել վիզը»: Նոր կտակարանից դուրս այս բառն օգտագործվում է՝ նկարագրելու համար զոհաբերվող կենդանու վիզը ձգելը՝ մորթելու համար:

6. Հայտնություն 20.11-15-ում գտնվում է Սուրբ գրքի ամենապատկերավոր հատվածը Վերջին դատաստանի մասին: Կարդացե՛ք այս հատվածը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո պատասխանեք հետևյալ հարցերին.

ա. *Ինչպե՞ս են նկարագրվում Աստված և Նրա աթոռը 11-րդ խոսքում: Ի՞նչ կերպով են ներկայացվում Աստծո մեծությունը և սրբությունը:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո աթոռը կամ գահը ցույց է տալիս Աստծո բացարձակ գերիշխանությունը ամբողջ արարչագործության հանդեպ: Նրա գահի սպիտակ լինելը խոսում է դրա վրա Նստողի սրբության կամ բարոյական անարատության մասին:

բ. *Համաձայն 12,13-րդ խոսքերի, ովքե՞ր են կանգնում Աստծո գահի առջև: Նրանցից որևէ մեկը կարո՞ղ է խուսափել դատաստանից կամ չգնալ դատաստանի: Բացատրե՛ք ձեր պատասխանը:*

գ. *Համաձայն 12,13-րդ խոսքերի, ինչպե՞ս են մարդիկ դատվում: Ո՞րն է Աստծո դատաստանի հիմքը: Նրա դատաստանը մանրակրկի՞տ է: Բացատրե՛ք ձեր պատասխանը:*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գրքեր» բառի հոգնակի լինելը ցույց է տալիս, որ Աստված լիարժեք և սպառիչ կերպով գրի է առել յուրաքանչյուրի գործերը: «Իրենց գործերի համեմատ» արտահայտության կրկնությունը փորձում է վերջնականապես հասկանալի դարձնել ընթերցողի համար, որ բոլոր մարդիկ դատվելու են ըստ իրենց մտքի, խոսքի և գործի: Մտածող մարդու համար այս ճշմարտությունը սարսափելի է:

դ. *Համաձայն 14,15-րդ խոսքերի, ինչպիսի՞ն է յուրաքանչյուրի ճակատագիրը, ով մերժում է Հիսուս Քրիստոսին և դատվում է համաձայն իր գործերի:*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա այն սարսափելի իրողությունն է, որը չի կարելի անտեսել: Այն Սուրբ գրքի մեծ և հաստատ ճշմարտությունն է այն մասին, որ նրանց, ովքեր մերժեցին Աստծո ողորմությունը, անվերջանալի պատիժ է սպասում: Հաջորդ գլուխներում կդիտարկենք հավիտենական պատժի աստվածաշնչյան վարդապետությունը:

Գլուխ 24. Դժոխք

Մաս մեկ. Դժոխքի բնույթը

Մենք սովորեցինք, որ Աստծո զայրույթը հայտնվում է այն բանով, որ մարդը բաժանվում է Աստծուց. նա մատնվում է մեղքին, մատնվում է թշվառության և դառնում է ենթակա ֆիզիկական մահվան: Այժմ կդիտարկենք աստվածային զայրույթի մեծագույն դրսևորումը՝ ***դժոխքը:*** Սուրբ գրքի ամենամռայլ ճշմարտություններից մեկն այն է, որ մեղքի հետևանքները չեն ավարտվում ֆիզիկական մահով: Մահից հետո կա Վերջին դատաստան, և ովքեր մահանում են իրենց մեղքերի մեջ, դատապարտված են անցկացնելու հավիտենությունը դժոխքում: Թեև այս վարդապետությունը հաճախ ծաղրվում և ժխտվում է, մենք չենք կարող անտեսել Սուրբ գրքի այս պարզ ուսմունքը: Գոյություն ունի հավիտենական դատաստանի վայր անօրենների համար:

Փորձելով հասկանալ դժոխքի բնույթը, մենք պետք է զգուշորեն առաջ շարժվենք: Մի կողմից, մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի հետևենք Սուրբ գրքին, ոչ թե դժոխքի երևակայական նկարագրություններին, որոնք ստեղծել է թե՛ հին, թե՛ ժամանակակից գրականությունը և մեդիան: Մյուս կողմից, մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չփոքրացնենք դժոխքի վարդապետությունը և դրա սարսափները: Համաձայն Սուրբ գրքի և հատկապես Հիսուս Քրիստոսի ուսմունքների, գոյություն ունի իրական վայր, որը կոչվում է «դժոխք», որը սարսափելի տանջանքներով լի և հավիտենական վայր է:

ԴԺՈԽՔ ԵՎ ԳԵՀԵՆ

Նոր կտակարանում օգտագործվում է երկու բառ դժոխքն անվանելու համար՝ ***«Հադես»*** և ***«Գեհեն»:*** Մենք կարող ենք ավելի հստակ հասկանալ դժոխքի բնույթը՝ ուշադրությամբ ուսումնասիրելով այս երկու հղումները:

ՀԱԴԵՍ

Հունարեն «Հադես» բառը («***հա՛դես***», թարգմանվում է «դժոխք» բառով) հանդիպում է տասն անգամ Նոր կտակարանում[6]: Թեև այն ամենից հաճախ օգտագործվում է՝ որպես հղում մահվանը և մահացածների ընդհանուր բնակատեղիին, Ղուկաս 16.23-ում այն ակնհայտորեն օգտագործվում է՝ մատնանշելու համար այն վայրը, որտեղ անօրենները չարչարվում են: Գոյություն ունի երկու հիմնական մեկնաբանություն այն մասին, թե ինչ է Հադեսը և ինչ առնչություն ունի Գեհենի հետ: (1) Կա՛մ Հադեսն անօրենների ժամանակավոր բնակատեղին է մինչև Վեջին դատաստանը, երբ անօրենները կմիանան իրենց հարություն առած մարմիններին և կուղարկվեն պատժի հավիտենական վայրը, որը կոչվում է Գեհեն, (2) կա՛մ Հադեսը և Գեհենը նկարագրում են նույն չարչարանքի վայրը: Ըստ երկրորդ մեկնության, անօրենները չարչարվում են անմարմին վիճակում մինչև Վերջին դատաստանը և հարությունը, իսկ հարությունից և Վերջին դատաստանից հետո նրանք միանում են իրենց հարություն առած մարմիններին և վերադառնում նույն չարչարանքի վայրը:

ԳԵՀԵՆ

«Գեհեն» բառն արամերեն «***գեհիննամ***»-ի լատինական տարբերակն է. այն նշանակում է «Ենովմի դաշտավայր» (կարդացե՛ք Հեսու 15.8), որը գտնվում է Երուսաղեմից դեպի հարավ (այսօր հայտնի է ***Վադի***

[6] Մատթեոս 11.23, 16.18, Ղուկաս 10.15, 16.23, Գործք 2.27,31 («գերեզման»), Հայտնություն 1.18, 6.8, 20.13,14

էր-Ռաբաբի անվանումով)։ Այս բառի հունարեն ձևը «***գեեննա***»-ն է, որը հանդիպում է տասներկու անգամ Նոր կտակարանում[7]։ Աքազ և Մանասե թագավորների իշխանության ժամանակ այն մի վայր էր, որտեղ ծնողները զոհում էին իրենց երեխաներին ամմոնացիների աստված Մողոքին (Երեմիա 32.35, նույնպես կարդացե՛ք Դ Թագավորաց 16.3, 21.6)։ Ովսիայի թագավորության ժամանակ երեխաների զոհաբերությանը վերջ տրվեց, և Ենովմի դաշտավայրը պղծվեց։ Հետագայում այն վերածվեց աղբանոցի, որտեղ տարվում էր աղբը, մահացած կենդանիների ոսկորները և մահապատժի ենթարկված հանցագործների մարմինները։ Այդ վայրում մշտապես կրակ ու ծուխ էր. այն լի էր որդերով, ճիճուներով և մակաբույծներով։ Մինչև Քրիստոսի օրերը այդ բառը լայնորեն գործածվում էր անօրենների վերջնական պատժի և չարչարանքի իմաստով՝ հավիտենական վայրի, որում կա մահ, ապականություն, պղծություն և թշվառություն։

ԱՐՏԱՔՍՈՒՄ ԱՍՏԾՈ ԲԱՐԵՀԱՃ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Հավանաբար, ամենազարհուրելի ճշմարտությունը դժոխքի մասին այն է, որ այն նշանակում է արտաքսում Աստծո բարեհաճ ներկայությունից։ Համաձայն ժամանակակից ավետարանական մտածողության, դժոխքը հաճախ նկարագրվում է որպես չարչարանքների վայր, որը դուրս է Աստծո ներկայությունից։ Հաճախ ասում են, որ երկինքը երկինք է, քանի որ Աստված այնտեղ է, և դժոխքը դժոխք է, քանի որ Աստված այնտեղ չէ։ Թեև այս պնդման մեջ կա ճշմարտության մասնիկ, այն ծայրաստիճան մոլորեցնող է։ Դժոխքը չարչարանքի վայր է ոչ թե այն պատճառով, որ Աստված այնտեղ չէ, այլ քանի որ այնտեղ չէ ***Նրա բարեհաճ ներկայությունը***։ Իրականում, դժոխքը դժոխք է, քանի որ Աստված ***այնտեղ է***՝ Իր ամբողջական արդարադատությամբ և զայրույթով։

1. Բ Թեսաղոնիկեցիների 1.9-ը ամենակարևոր խոսքերից մեկն է Աստվածաշնչում այն մասին, որ անօրենները բաժանվում են Աստծո բարեհաճ ներկայությունից։ Ծանոթացե՛ք այս խոսքի բովանդակությանը և գրի առեք ձեր մտքերը։

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Տիրոջ երեսից» բառակապակցության մեջ «-ից» ածանցը թարգմանված է հունարեն «***ապո՛***» նախդիրից, որը մեկնվել և թարգմանվել է երկու ձևով. (1) «հեռու Տիրոջ երեսից», ինչը նշանակում է, որ պատիժը հենց Տիրոջից բաժանված լինելու մեջ է, կամ (2) «Տիրոջ երեսից», ինչը նշանակում է, որ պատիժը գալիս է Տիրոջ ներկայությունից։ Երկու դեպքում էլ «Տիրոջ երեսից» արտահայտությունը չի կարող նշանակել, որ Աստծո ներկայությունը և զորությունը բոլորովին բացակայում են դժոխքից, քանի որ դժոխքն ինքնին Նրա զայրույթի դրսևորումն է։

2. Սուրբ գրքում կա մի քանի խոսք, ըստ որոնց մարդու վերջնական դատաստանը և դժոխքում հայտնվելու դատավճիռը նշանակում է բաժանում կամ վտարում Աստծո բարեհաճ ներկայությունից։ Ուշադրությամբ ուսումնասիրե՛ք այս խոսքերից յուրաքանչյուրը և գրի առեք ձեր մտքերը։

[7] Մատթեոս 5.22,29,30, 10.28, 18.9, 23.15,33, Մարկոս 9.42,44,46, Ղուկաս 12.5, Հակոբոս 3.6

ա. *Մատթեոս 7.23 (նույնպես կարդացե՛ք Ղուկաս 13.27)*

_____

_____

_____

_____

բ. *Մատթեոս 25.30 (նույնպես կարդացե՛ք 8.12, 22.13)*

_____

_____

_____

_____

3. Դժոխքը չարչարանքի վայր է ոչ թե Աստծո բացակայության պատճառով, այլ՝ քանի որ դժոխքում չկա Նրա բարեհաճ ներկայությունը: Դժոխքը դժոխք է, քանի որ Աստված այնտեղ է՝ Իր ամբողջական արդարադատությամբ և զայրույթով: Ի՞նչ է սովորեցնում Հայտնություն 14.9,10-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Անօրենները ոչ միայն դատվելու և դատապարտվելու են Գառան առջև, այլև մշտապես տանջվելու են Նրա հսկողության ներքո: Քրիստոսի գալուստի ժամանակ անօրեններն աղաղակելու են սարերին և բլուրներին, որպեսզի դրանք ընկնեն իրենց վրա և ծածկեն իրենց գահի վրա Նստողի ներկայությունից և Գառան բարկությունից (տե՛ս Ղուկ. 23.30, Հայտն. 6.16): Այնուամենայնիվ, նրանց խնդրանքը հավիտյան չի կատարվելու:

ԱՆԱՍԵԼԻ ՉԱՐՉԱՐԱՆՔ

Անկարելի է հավատարիմ լինել Սուրբ գրքին, հատկապես՝ Հիսուսի խոսքերին, և միևնույն ժամանակ ժխտել կամ անտեսել սուրբգրային ճշմարտությունները դժոխքում անօրենների տառապանքների մասին: Ինչպես որ մենք կտեսնենք, Սուրբ գիրքը, հատկապես՝ Ավետարանները, նկարագրում են դժոխքը որպես անասելի չարչարանքի վայր: Իրավամբ ասվում է, որ մարդու միտքը չի կարող ընկալել Երկնքի երանությունը, և մարդու լեզուն չի կարող նկարագրել այն: Համաձայն Սուրբ գրքի, նույնը կարելի է ասել նաև դժոխքի չարչարանքների և զարհուրանքների մասին: Կարևոր է հիշել, որ թեև այս վարդապետությունը վանող է շատերի համար, այն, միևնույն է, ճշմարիտ է:

Մինչև շարունակելը, կարևոր է հասկանալ, որ դժոխքն այնպիսի վայր չէ, որտեղ անօրենները դաժանաբար կտտանքների են ենթարկվում, այլ այնպիսի վայր, որտեղ նրանք ստանում են ***կատարյալ արդարադատություն*** իրենց մեղքի դիմաց: Աստված դաժան չէ: Նա չարախնդորեն չի չարչարում Իր թշնամիներին: Իրականում, Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստծուն հաճելի չէ անօրենի մահը (տե՛ս Եզեկիել 18.23,32): Այնուամենայնիվ, Աստված արդարադատության Աստված է, և դժոխքն այն վայրն է, որտեղ անօրեններն արժանանում են արդար դատաստանի: Նրանք ստանում են պատժի ճիշտ այն չափը, որը հասնում է իրենց:

1. Ինչպե՞ս է Հիսուսը նկարագրում դժոխքը և դրա չարչարանքները հետևյալ խոսքերում:

   ա. *Տ_____ տեղ (Ղուկաս 16.28):* Հունարեն «***բա՛սանոս***» բառից, որը վերաբերում է սաստիկ ցավին և հաճախ նույնացվում է կտտանքների հետ: Այնուամենայնիվ, մենք պետք է հիշենք, որ դժոխքը դիվային կտտանքների վայր չէ, ինչպես որ դա պատկերված է Դանտեի *«Ինֆեռնո»*[8]-ի մեջ, այլ կատարյալ արդարադատության վայր, որտեղ ամեն մարդ ստանում է այն ճշգրիտ չափը, որին արժանի է:

   բ. *Լ_____ և ատամների Կ_____ (Մատթեոս 8.12):* Դժոխքում անօրենների չարչարանքների նկարագրությունը կարևոր է, քանի որ Ինքը Հիսուսը հաճախ է խոսում այս մասին (տե՛ս Մատթ. 13.42,50, 22.13, 24.51, 25.30, Ղուկ. 13.28): Դժոխքը ցավի, տառապանքի և զղջման վայր է:

2. Հետևյալ երկու սուրբգրային հատվածները որոշ չափով նկարագրում են դժոխքի աննկարագրելի չարչարանքները: Կարդացե՛ք յուրաքանչյուր հատվածն այնքան, մինչև ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո ամփոփե՛ք այն, ինչ հայտնված է մեզ դժոխքի չարչարանքների մասին:

   ա. *Ղուկաս 16.19-31*

   _____

   _____

   _____

   _____

   _____

[8] «Ինֆեռնո»-ն 14-րդ դարի պոետ Դանթե Ալիգիերիի էպիկական «Աստվածային կատակերգության» առաջին մասն է, որը նկարագրում է հեղինակի այլաբանական «ճանապարհորդությունը» դժոխքի մի շարք շրջաններով:

ՆՇՈՒՄՆԵՐ. Քանի որ հարուստի և Ղազարոսի պատմությունն առակի հետ ընդհանուր հատկանիշներ ունի, ոմանք փորձել են անտեսել դրանում բերված դժոխքի նկարագրությունը՝ այն ընդամենը փոխաբերական համարելով: Այնուամենայնիվ, թեև ստույգ չէ, թե որքան բառացիորեն պետք է նկարագրենք այս պատմության ամեն մասնիկը, կա երկու հստակ և անժխտելի ճշմարտություն, որոնք մենք կարող ենք քաղել. (1) մահից հետո տեղի է ունենում արդարների և անօրենների բաժանում, և (2) արդարները մխիթարվում են հավիտենական վարձատրությամբ, իսկ անօրենները կրում են հավիտենական գիտակցված պատիժ:

բ. *Հայտնություն 14.9-11*

_____

_____

_____

_____

_____

3. Թեև Աստվածաշունչը պարզորեն հայտնում է, որ դժոխքի յուրաքանչյուր բնակիչ անասելի չարչարանք է կրելու, այն նույնպես սովորեցնում է, որ այդ չարչարանքը լինելու է համաձայն յուրաքանչյուրի մեղավորության: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Մատթեոս 11.21-24*

_____

_____

_____

_____

_____

բ. *Ղուկաս 12.47,48*

_____

_____

_____

_____

_____

գ. *Մատթեոս 23.14, Մարկոս 12.38-40*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մատթեոս 11.21-24 և Ղուկաս 12.47,48 հատվածներից սովորում ենք, որ մարդիկ ենթարկվելու են պատասխանատվության ըստ այն հայտնության, որը տրվել է իրենց: Մատթեոս 23.14 և Մարկոս 12.40 խոսքերից սովորում ենք, որ մարդիկ նույնպես դատվելու են ըստ իրենց մեղքերի ծանրության:

ԱՆՎԵՐՋ ՊԱՏԻԺ

Հավանաբար, ամենասարսափելի ճշմարտությունը դժոխքի մասին այն է, որ այն հավիտենական է: Ովքեր մտնում են դրա դարպասներով, չունեն հետագա փրկության կամ վերականգնման ոչ մի հույս: Նրանք հավիտյան դատապարտված են: Սա երևի թե ամենավանող ճշմարտությունն է այն մարդկանց համար, որոնք մերժում են Աստվածաշնչի վարդապետությունը դժոխքի մասին: Ինչպե՞ս անվերջ պատիժը կարող է արդար լինել: Մի՞թե այն մեծապես չի գերազանցում գործած հանցանքները:

Մտածելով դժոխքի հավիտենական բնույթի մասին՝ անհրաժեշտ է դիտարկել երկու ճշմարտություն: ***Առաջինը***՝ մենք պետք է հաշվի առնենք մեղքի գարշելի բնույթը: Անսահման արժանիքներ ունեցող Աստծո դեմ գործած մեղքն արժանի է անվերջ պատժի: ***Երկրորդը***՝ մենք պետք է գիտակցենք, որ դժոխքի պատիժը հավիտենական է, քանի որ անօրենները հավիտյան մնում են իրենց ապստամբության մեջ՝ առանց ապաշխարության: Մենք չպետք է ենթադրենք, որ անօրենները կապաշխարեն Դատաստանի օրը կամ, նույնիսկ, դժոխքում մնալուց կարճ ժամանակ անց: Փոխարենը, նրանց ատելությունն Աստծո հանդեպ, սրտի խստությունը և անամոթ ապստամբությունը կմնան ամբողջ հավիտենության ընթացքում: Հավիտենական ապստամբությունը պահանջում է հավիտենական պատիժ:

1. Ինչպե՞ս է դժոխքը նկարագրվում հետևյալ աստվածաշնչյան խոսքերում: Մտածե՛ք այն մասին, թե ինչ են հետևյալ նկարագրությունները ցույց տալիս մեզ դժոխքի հավիտենական բնույթի մասին:

   ա. Հ_____ Կ_____ *(Մատթեոս 18.8, 25.41, Հուդա 7)*:

   բ. Հ_____ Տ_____ *(Մատթեոս 25.46):* Կարևոր է նշել, որ հավիտենական կյանքը նշված է նույն խոսքում, որում գրված է հավիտենական տանջանքի մասին: Եթե մենք ընդունում

ենք վարդապետությունը Երկնքում արդարների հավիտենական երանության մասին, մենք նույնպես պետք է ընդունենք վարդապետությունը դժոխքում անօրենների հավիտենական պատժի մասին:

գ. Հ_____ Կ_____ (Բ Թեսաղոնիկեցիների 1.9): Ոմանք կարող են սխալմամբ առարկել, որ «կործանում» բառը նշանակում է գոյության դադարում, սակայն «հավիտենական» բառն անհնար է դարձնում նման մեկնությունը: Դժոխքում անօրենները կմատնվեն այնպիսի գոյության, որն արդարացի կերպով կարելի է անվանել հավիտենական կործանում:

2. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները դժոխքի հավիտենական բնույթի և մեղավորներին բաժին ընկած հավիտենական պատժի մասին:

ա. *Մատթեոս 25.41*

_____

_____

_____

_____

_____

բ. *Մարկոս 9.47,48*

_____

_____

_____

_____

_____

գ. *Հայտնություն 14.9-11*

_____

_____

_____

_____

_____

3. Ովքեր ժխտում են դժոխքի հավիտենական բնույթը, ընդունում են Երկնքի հավիտենական բնույթը: Այնուամենայնիվ, ինչպես հիշատակվեց վերևում, այն մարդը, որը ժխտում է դժոխքի հավիտենական բնույթը, պետք է հետևողական լինի և նույնպես ժխտի Երկնքի հավիտենական բնույթը: Ինչպե՞ս է Հիսուսը ցույց տալիս այս տրամաբանությունը: Լրացրե՛ք բաց թողնված բառերը:

ա. *Համաձայն Մատթեոս 25.46-ի, անօրենները գնում են դեպի Հ_____ պատիժ, իսկ արդարները՝ դեպի Հ_____ կյանք:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Անհետևողական է վերագրել երկու տարբեր իմաստ մեկ նախադասության մեջ գտնվող նույն բառին: Եթե «հավիտենական» պատիժն իրականում չի նշանակում, որ անօրենները հավիտյան պատժվելու են, նշանակում է՝ «հավիտենական» կյանքն իրականում չի նշանակում, որ արդարները հավիտյան ապրելու են Աստծո ներկայության մեջ:

Գլուխ 25. Դժոխք

Մաս երկու. Դժոխքի զարհուրանքները

ԴԺՈԽՔԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սուրբ գրքում ներկայացվում են դժոխքի բազմաթիվ պատկերավոր և ցնցող նկարագրություններ: Այն, թե արդյո՞ք դրանք պետք է հասկացվեն բառացի, պահպանողական աստվածաբանների տևական բանավեճերի առարկան է: Արդյո՞ք դժոխքը բառացիորեն կրակի, խավարի, ծծումբի և ծխի վայր է: Եթե ինչ-որ մեկը ժխտում է այս նկարագրությունների բառացի մեկնությունը, որպեսզի հարի դժոխքում անօրենների չարչարանքներն ավելի թույլ կերպով ներկայացնելու կարծիքին, նրա փաստարկները պետք է մերժվեն: Այնուամենայնիվ, հասկանալի և ընդունելի է հավատալը, որ այս նկարագրությունները փոխաբերական են այն իմաստով, որ դրանք փորձում են պատկերել այնքան զարհուրելի մի բան, որը մարդու միտքը չի կարող ընկալել, և մարդու լեզուն չի կարող նկարագրել: Աստվածաշնչի հեղինակներն օգտագործում էին այս երկրի վրա մարդկությանը հայտնի մեծագույն սարսափները՝ դժոխքի զարհուրանքները նկարագրելու համար, բայց մենք կարող ենք վստահ լինել, որ դժոխքի զարհուրանքները շատ ավելի վատն են, քան ցանկացած բան, որ կարելի է գտնել այս երկրի վրա: Կրակը, խավարը, ծծումբը և ծուխն ընդամենը թույլ փորձեր են՝ նկարագրելու համար շատ ավելի զարհուրելի իրականություն, քան այս բառերը կարող են պատկերել: Ինչպես որ մարդու միտքը չի կարող ընկալել Երկնքի փառքը, և մարդու լեզուն չի կարող նկարագրել այն, դժոխքի զարհուրանքները վեր են մեր ընկալումից և նկարագրելու կարողությունից:

1. Ի՞նչ նկարագրություններ են օգտագործում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը՝ ցույց տալու համար դժոխքի զարհուրելի բնույթը:

   ա. *Կ_____ (Մատթեոս 3.10, 7.19):* Ամբողջ Սուրբ գրքում կրակի գաղափարն օգտագործվում է՝ ցույց տալու համար Աստծո ***դատաստանը*** և ***զայրույթն*** ընդդեմ մեղքի և մեղավորի: Այն Աստծո սուրբ և արդար հակազդեցությունն է այն ամենին, ինչը հակասում է Նրա բնությանը և կամքին: Այն սաստիկ, սարսափազդու և անդիմադրելի է: Այնուամենայնիվ, որքան էլ զարհուրելի լինի իսկական կրակը վառվող մարդու համար, այն չի կարող նույնիսկ մի փոքր նկարագրել Աստծո զայրույթի սարսափելի կրակը, որը բաժին է ընկել մեղավորներին դժոխքում:

   բ. *Հ_____ Կ_____ (Մատթեոս 18.8, 25.41):* Շեշտադրումն այն է, որ անօրենների չարչարանքները դժոխքում տևում են ***հավիտյան***: Դժոխքում գտնվողների համար չկա փրկության և վերականգնման հույս:

   գ. *Ա_____ Կ_____ (Մատթեոս 3.12):* Խոսքն այն մասին է, որ դժոխքի չարչարանքները լինելու են ոչ միայն հավիտենական, այլև ***չթուլացող***: Դատապարտվածները երբեք թեթևություն չեն ունենա:

   դ. *Կ_____ և Ծ_____ Լ_____ (Հայտնություն 20.9):* Այս նկարագրության նպատակն է՝ փոխանցել դժոխքի ***վիթխարի չափերը*** և ***ուժգնությունը***: Դժոխքի դատաստանը պար-

զապես չարչարանքի ցող կամ բարակ վտակ չէ: Դժոխքի բնակիչները նավաբեկության են ենթարկվում Աստծո զայրույթի ահռելի, տատանվող ծովի մեջ և ետուառաջ են շպրտվում Աստծո արդարացի վրդովմունքի կատաղի և անվերջ ալիքներից: Նրանք ասես խորտակվում են կրակի հսկայական եռացող կաթսայի մեջ:

ե. *Կ*_____ *Փ*_____ *(Մատթեոս 13.42):* Այս խոսքը ներկայացնում է ճշմարտությունը դժոխքի ***սաստկության*** մասին: Փռան կամ հնոցի մեջ ջերմությունը գրեթե դուրս չի գալիս, չկան անձրևներ, որոնք կարող են թուլացնել կրակը, և չկա քամի, որը թարմություն կամ թեթևություն է բերում: Նույնպես, դժոխքի չարչարանքների սաստկությունը երբեք չի թուլանում:

զ. *Դ*_____ *Խ*_____ *(Մատթեոս 8.12, 22.13, 25.30):* Այս նկարագրությունը պատկերում է ճշմարտությունը դժոխքի բնակիչների ***օտարացման*** մասին: Նրանք դուրս են գցվում, և նրանց համար այլևս տեղ չի գտնվում: Նրանք օտարացվում են ոչ միայն Աստծուց, այլև մարդկային շփումից: Դժոխքը բացարձակ և անտանելի մեկուսացման վայր է, որն ամբողջովին բաժանված է Աստծո լույսից:

է. *Խ*_____ *Մ*_____ *(Հուդա 13):* Կան շատ քիչ բաներ, որոնք այնքան մեկուսացնող և ստրկացնող են, որքան ականակույր խավարը: Նման խավարում գտնվելն առաջացնում է ***հուսահատության*** անասելի զգացում:

ը. Ե_____ Մ_____ (Հայտնություն 20.14, 21.8): Անօրենների վերջնական ճակատագիրը հավատացյալի ճակատագրի ճիշտ հակառակն է: Հավատացյալի համար այլևս չի լինի մահվան վախ (տե՛ս Եբր. 2.14,15), քանի որ այլևս մահ չի լինի (տե՛ս Հայտն. 21.4): Որպես հակադրություն, անօրենները կապրեն ***անդադար մահվան*** վիճակում: Նրանք կունենան գիտակցական գոյություն, սակայն զուրկ կլինեն կյանքի օրհնություններից, հույսից և ուրախությունից:

2. Դիտարկելով դժոխքը նկարագրող մի շարք անվանումներ, գրի առեք ձեր մտքերը: Ինչպե՞ս դուք կպատմեիք մարդկանց դժոխքի մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ՝ ԴԺՈԽՔԻՑ ԱՄԵՆ ԿԵՐՊ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դժոխքի զարհուրանքները պարզորեն գրված են Սուրբ գրքի զգուշացումներում, որպեսզի մենք ամեն գնով խուսափենք դրանից: Դժոխքը վատագույնն է բոլոր զարհուրանքներից, որոնք կարող են պատահել մարդուն: Կարևոր է նշել, որ Հիսուս Քրիստոսը խոսեց դժոխքի մասին ավելի շատ, քան մնացած մարդիկ միասին Աստվածաշնչում: Նա պարզ և միանշանակ կերպով սովորեցրեց դժոխքի իրողությունների մասին և տվեց մարդկանց ամենալուրջ և ամենախիստ զգուշացումները՝ հորդորելով փախչել գալիք բարկությունից:

1. Մատթեոս 10.28-ը և Ղուկաս 12.5-ը Քրիստոսի երկու ամենախիստ զգուշացումներն են դժոխքի զարհուրանքների մասին: Գրի առեք ձեր մտքերը: Ինչ են հայտնում այս զգուշացումները դժոխքի զարհուրանքների և դրանից վախենալու անհրաժեշտության մասին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսի օրերում աշխարհը լի էր պատերազմներով, թշնամանքով, վարձու զինվորականներով և անգութ բռնակալներով: Հռոմեական կայսրությունն այնքան դաժան էր, որքան որ զորավոր էր: Այնուամենայնիվ, չնայած բոլոր այն վտանգներին, որոնց Առաջին եկեղեցին ստիպված էր բախվել, Հիսուսը զգուշացրեց Իր աշակերտներին, որ դրանցից առավել նրանք վախենային Աստծուց: Այս կյանքի ամենատևական կտտանքները սահմանափակ են թե՛ ուժգնությամբ, թե՛ տևողությամբ, բայց Աստծո զայրույթը դժոխքում անսահմանափակ է և անվերջ:

2. Հիսուսը և Աստվածաշնչի հեղինակները ոչ միայն սովորեցնում էին դժոխքի զարհուրանքների մասին, այլև զգուշացնում էին մարդկանց՝ հորդորելով ամեն գնով խուսափել դժոխքից: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան խոսքերը այս ճշմարտության մասին:

   ա. *Ղուկաս 13.24*

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կուզեն» բառը թարգմանված է հունարեն «***ագոնի՛զոմայ***» բառից, որը նշանակում է «մրցել, պայքարել՝ լարելով վերջին ուժերը, գործել՝ ջերմեռանդորեն կամ մեծ նախանձավորությամբ»:

բ. *Մատթեոս 18.8, Մարկոս 9.47*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքերը չպետք է ընկալվեն բառացի. Հիսուսը չի սովորեցնում, որ սեփական անձը խեղելը մեր մեղավոր կրքերը սանձելու արդյունավետ և պատշաճ միջոցն է: Նա պարզապես սովորեցնում է, որ մենք պետք է արմատապես հեռացնենք մեղքը՝ իր զարհուրելի հետևանքներով մեկտեղ:

3. Մտածե՛ք դժոխքից ամեն գնով խուսափելու Աստվածաշնչի զգուշացման մասին և գրի առեք ձեր մտքերը: Ինչպե՞ս դուք կզգուշացնեիք մարդկանց դժոխքի մասին:

Գլուխ 26. Մարդու միակ հույսը

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀՈՒՅՍԸ

Մենք ավարտում ենք մեր ուսումնասիրությունը մարդու իրական դրության մասին: Մեր ուսումնասիրության ընթացքում հանգեցինք մի շարք կարևոր հետևությունների: Ադամի մեղքը տարածվեց ամբողջ մարդկային ցեղի վրա: Յուրաքանչյուր մարդ բարոյապես ապականված էակ է, որը թշնամաբար է վերաբերվում Աստծուն և չի ցանկանում հնազանդվել Նրա կամքին: Բոլորս ընդունակ ենք անասելի մեղքերի և այլասերությունների և այդ պատճառով արժանի ենք սուրբ և արդար Աստծո արդարացի դատապարտությանը: Սուրբ գիրքը պարզորեն հայտնում է, որ բոլոր մարդիկ՝ առանց բացառության, դատապարտված են Աստծո առջև և չունեն որևէ արդարացում կամ այլուրեքություն (ալիբի): Ավելին՝ մարդը ոչինչ չի կարող անել՝ փոխելու համար իր հանգամանքները և հաշտվելու Աստծո հետ: Սա սարսափելի ճշմարտություն է, բայց մենք պետք է հավատանք և ընդունենք այս ճշմարտությունը, որպեսզի հասկանանք այն մեծ փրկությունը, որն Աստված կատարեց Իր ժողովրդի համար Հիսուս Քրիստոսի միջոցով:

1. Հետևյալ սուրբգրային հատվածները պատշաճ կերպով ամփոփում են այս ուսումնասիրությունը, քանի որ դրանք ոչ միայն հռչակում են մռայլ ճշմարտությունն այն մասին, որ մենք չենք կարող փրկել ինքներս մեզ, այլև ազդարարում են փրկության մեծ հույսը, որն Աստծո ողորմությամբ հայտնվեց Հիսուս Քրիստոսում: Մտորե՛ք յուրաքանչյուր սուրբգրային հատվածի շուրջ, իսկ հետո գրի առեք այն ***մռայլ ճշմարտությունը*** և ***մեծ հույսը***, որոնք գտնվում են դրանցից ամեն մեկում:

ա. *Սաղմոս 130.3,4*

(1) Մռայլ ճշմարտությունը (խս. 3)

_____

_____

_____

_____

(2) Մեծ հույսը (խս. 4)

_____

_____

_____

_____

բ. *Հռոմեացիների 3.19-22*

(1) Մռայլ ճշմարտությունը (խոսքեր 19,20)

(2) Մեծ հույսը (խոսքեր 21,22)

գ. *Հռոմեացիների 3.23-26*

(1) Մռայլ ճշմարտությունը (խս. 23)

(2) Մեծ հույսը (խոսքեր 24-26)

դ. *Հռոմեացիների 7.24-8.2*

(1) Մռայլ ճշմարտությունը (7.24)

(2) Մեծ հույսը (7.25-8.2)

ե. *Գաղատացիների 3.22*

(1) Մռայլ ճշմարտությունը

(2) Մեծ հույսը

2. Մտորե՛ք այս հատվածներում արտահայտված և՛ մռայլ իրողության, և՛ հույսի շուրջ, և գրի առեք ձեր մտքերը: Ո՞րն է մարդու միակ հույսը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճշմարտությունը մարդու իրական դրության մասին ծանր տպավորություն է գործում նրանց վրա, ում խիղճը Սուրբ Հոգին արթնացրել է: Պողոս առաքյալը բացականչում է. «Ես ի՜նչ խեղճ մարդ եմ: Ո՞վ կազատի ինձ այս մահի մարմնից» (Հռոմեացիների 7.24): Պողոսի հարցի պատասխանը և մարդու զարհուրելի կացության լուծումը միայն Քրիստոսի Ավետարանում է՝ այն փրկարար աշխատանքի մեջ, որը Նա կատարեց մեր փոխարեն:

Սաղմոսերգուն նշում է, որ եթե Տերը հաշվեր Իր դեմ գործած մեր անօրինությունները, երկրի վրա չէր լինի նույնիսկ մեկ մարդ, որը կկարողանար կանգնել Նրա առջև դատաստանի ժամանակ (տե՛ս Սաղմ. 130.3): Մեր անօրինությունները մեր գլխից վեր են բարձրացել. դրանք նման են ծանր բեռի, որի ծանրությունը շատ ավելին է, քան կարող ենք կրել (տե՛ս Սաղմ. 38.4): Մեղքը մարդկության մեծագույն խնդիրն է, նաև անհատներին և հասարակությունները կործանող ախտերի միակ աղբյուրը: Այնպես որ, մեր երկու մեծագույն կարիքներն են փրկությունը մեղքի դատապարտությունից և փրկությունը մեղքի իշխանությունից: Այս երկու կարիքներն էլ լրացվել են Հիսուս Քրիստոսի Անձում և մեր փոխարեն կատարած Նրա փրկարար աշխատանքի միջոցով:

Աստվածաշունչը միանշանակ հայտարարում է, որ Աստված ողորմած է, գթած է, երկայնամիտ է և առատ է ողորմությամբ (տե՛ս Ելից 34.6): Այդ իսկ պատճառով, Նա չի կամենում անօրենի մահը, այլ ցանկանում է, որ նա դառնա իր ճանապարհից և ապրի (տե՛ս Եզեկիել 18.23): Անկախ մարդու մեղքից և նրա ապստամբության աստիճանից, նրան առաջարկվում է և՛ ներում, և՛ մաքրում, եթե նա թողնի իր ճանապարհը և վերադառնա Տիրոջը: Դավիթը նույնիսկ այնքան հեռու է գնում, որ ասում է, որ Աստված կթողնի իր անօրինությունները, կծածկի իր մեղքերը և այլևս չի համարի իրեն իր հանցանքները (տե՛ս Սաղմ. 32.1,2):

Սա ապշեցուցիչ լուր է, բայց կանգնեցնում է մեզ աստվածաբանական և նույնիսկ փիլիսոփայական երկընտրանքի առջև. ինչպե՞ս կարող է բարի և արդար Աստված ներում շնորհել մեղավոր մարդուն: Մի՞թե ամբողջ երկրի Դատավորը չպետք է արդարությամբ վարվի (տե՛ս Ծննդ. 18.25): Կարո՞ղ է արդար Աստված անտարբեր լինել մեղքի հանդեպ կամ, այսպես ասած, ավելել այն կարպետի տակ, ասես այն երբեք

տեղի չէր ունեցել: Կարո՞ղ է սուրբ Աստված հաղորդություն ունենալ մեղավոր մարդկանց հետ և սուրբ մնալ: Հենց Աստծո Խոսքն է հռչակում, որ անօրենին արդարացնողը զզվելի է Տիրոջ համար (տե՛ս Առակ. 17.15): Այդ դեպքում, ինչպե՞ս Աստված կարող է ներել անօրեն մարդկանց՝ առանց փոխզիջման գնալու Իր բնավորության հետ: Կրկին, պատասխանը Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի մեջ է:

Համաձայն Սուրբ գրքի, մարդը մեղանչեց (տե՛ս Հռոմ. 3.23), իսկ մեղքի վարձատրությունը մահն է (տե՛ս Հռոմ. 6.23): Աստված արդար է, և Նրա օրենքի պահանջները պետք է բավարարվեն, մինչև որ հանցավորը կկարողանա ներում ստանալ: Երբ եկավ ժամանակի լրումը, Աստծո Որդին Մարդ դարձավ և քայլեց այս երկրի վրա՝ կատարելապես հնազանդվելով Աստծո օրենքին (տե՛ս Գաղատ. 4.4): Իր կյանքի ավարտին և համաձայն Հոր կամքի, Նա խաչվեց մեղավորների ձեռքով (տե՛ս Գործք 2.23): Խաչի վրա Նա զբաղեցրեց Իր հանցավոր ժողովրդի տեղը, և նրանց մեղքը վերագրվեց Իրեն (տե՛ս Բ Կորնթ. 5.21): Որպես Մեղք Կրող, Նա անիծվեց Աստծուց (տե՛ս Գաղատ. 3.13), թողնվեց Նրա կողմից (տե՛ս Մատթ. 27.46) և փշրվեց Նրա զայրույթի ծանրության ներքո (տե՛ս Եսայի 53.10): Իր մահվան միջոցով մեղքի պարտքը վճարվեց, Աստծո արդարադատության պահանջները բավարարվեցին, և Աստծո զայրույթը խաղաղեցվեց: Այս կերպով Աստված լուծեց այս մեծ երկընտրանքը: Նա արդարությամբ պատժեց Իր ժողովրդի մեղքերն Իր միակ Որդու մահվամբ, և այժմ կարող է ձրիաբար արդարացնել նրանց, ովքեր հուսացած են Իրեն:

Իր Որդու մահվան միջոցով Աստված այժմ կարող է և՛ արդար լինել, և՛ արդարացնել նույնիսկ ամենավատ մեղավորին, որը հավատում է Իրեն (տե՛ս Հռոմ. 3.26): Այնուամենայնիվ, Ավետարանը ոչ միայն ազատում է մեղքի դատապարտությունից, այլև մեղքի իշխանությունից: Իր առաջին նամակում Հովհաննես առաքյալն ասում է մեզ. «Նա, ով հավատում է, թե Հիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնված» (Ա Հովհաննես 5.1): Այս վերստին ծնունդը կարողություն է տալիս մարդուն թե՛ ապաշխարելու և հավատալու փրկությանը, թե՛ վարվելու կյանքի նորոգության մեջ (տե՛ս Հռոմ. 6.4): Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով մարդու քարե սիրտը, որը հոգևորապես մահացած էր և անընկալունակ էր Աստծո հանդեպ, փոխվեց մսեղեն սրտի, որը և՛ հոժար է, և՛ ի զորու է լսել Աստծո ձայնը և հետևել Նրան (տե՛ս Եզեկիել 36.25-27): Մի ժամանակ այդ մարդը չար ծառ էր և չար պտուղ էր բերում, իսկ այժմ նա բարի ծառ է՝ տնկված ջրերի վտակների մոտ, որը պտուղ է տալիս ժամանակին, և որի տերևները չեն թառամում (տե՛ս Մատթ. 7.17,18, Սաղմ. 1.3): Հենց այսպես է հավատացյալն արդարանում, և հենց այսպես է նա դառնում Աստծո ձեռքի գործը՝ ստեղծված Քրիստոս Հիսուսում բարի գործերի համար (տե՛ս Եփես. 2.10): Իրականում, այս ընթացիկ բարոյական վերափոխումն է, որը հիմնավորում է հավատացյալի հավաստիացումն իր փրկության մեջ և ապացուցում է, որ նրա դարձը ճշմարիտ է:

Ինչպես որ ասացինք, Ավետարանը զարմանալի լուր է, սակայն անհրաժեշտ է պատասխանել հետևյալ կարևոր հարցերին. «Ինչպե՞ս կարելի է փրկություն ստանալ: Ի՞նչ պետք է անել փրկվելու համար»: Պատասխանը պարզ է. անհրաժեշտ է ապաշխարել և հավատալ Ավետարանին (տե՛ս Մարկ. 1.15): Այս աշխատանքային ձեռնարկում օգտագործված բազմաթիվ սուրբգրային հատվածներն արդեն հերքեցին ցանկացած փաստարկ կամ ենթադրություն այն մասին, որ մարդը կարող է փրկվել իր առաքինությամբ կամ արժանիքներով: Մենք զուրկ ենք թե՛ մեկից, թե՛ մյուսից: Նույնիսկ այլ մարդկանց առջև կատարած, այսպես կոչված, «արդար գործերն» ընդամենը կեղտոտ լաթեր են Աստծո առջև (տե՛ս Եսայի 64.6): Այդ իսկ պատճառով, մենք պետք է մերժենք ցանկացած վստահություն մարմնի մեջ և վստահենք միայն Քրիստոսին (տե՛ս Փիլիպ. 3.3): Քրիստոնյան այն մարդն է, ով համաձայնել է Աստծո հետ իր մեղավոր վիճակի վերաբերյալ, թողել է ցանկացած վստահություն իր առաքինության կամ արժանիքների մեջ և լիովին հուսացած է Հիսուս Քրիստոսի Անձին և Նրա կատարած աշխատանքին:

HeartCry

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայացք «HeartCry» Միսիոներական ընկերությանը.

«HeartCry» Միսիոներական ընկերությունը հիմնադրվել է 1988 թվականին Պերուի Հանրապետությունում: Մենք ցանկանում էինք աջակցել տեղացի միսիոներներին՝ իրենց ժողովրդին հասնելու և աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելու համար: Այդ ժամանակվանից Տերն ընդլայնել է մեր սահմանները. ներկայումս աշխատանք ենք իրականացնում ոչ միայն Լատինական Ամերիկայում, այլև Աֆրիկայում, Ասիայում, Եվրասիայում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Ամերիկայում:

Մեր ծառայության նպատակն է՝ օժանդակել տեղացի միսիոներների աշխատանքը ամբողջ աշխարհում: Մեր ռազմավարությունն ունի չորս հիմնական ուղղություն. ֆինանսական աջակցություն, աստվածաբանական ուսուցում, Աստվածաշնչերի և հոգևոր գրականության տարածում և ցանկացած միջոցների տրամադրում, որոնք անհրաժեշտ են Մեծ Հանձնարարականն իրականացնելու համար:

Ներկայումս աջակցում ենք ավելի քան 250 միսիոներական ընտանիքի աշխարհի 40 երկրներում:

Ծանոթացում «HeartCry»-ի հետ

«HeartCry» Միսիոներական ընկերությունը հիմնադրվել է և մինչև օրս գոյություն ունի չորս հիմնական նպատակ իրագործելու համար.

- Փառք բերել Աստծուն
- Ծառայել մարդկանց
- Հիմնել աստվածաշնչյան եկեղեցիներ
- Հայտնել Աստծո հավատարմությունը

1. Փառք բերել Աստծուն

Մեր առաջին հիմնական նպատակն Աստծուն փառք բերելն է: Ամենից առավել մենք ցանկանում ենք, որ Նրա անունը մեծարվի ազգերի մեջ «արեգակի ելքից մինչև նրա մուտքը» (Մաղաքիա 1.11), և որ մորթված Գառը ստանա Իր չարչարանքների լիարժեք վարձատրությունը (Հայտնություն 7.9,10): Մեր գլխավոր նպատակը և դրդապատճառը ո՛չ մարդն է, և ո՛չ նրա կարիքները, այլ՝ Աստված, Նրա նվիրվածությունն Իր փառքին և մեր աստվածատուր ցանկությունը, որ Նա երկրպագություն ստանա բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից և լեզուներից: Մենք վստահում ենք ոչ թե այն փաստին, որ Եկեղեցին ի զորու է կատարել Մեծ Հանձնարարականը, այլ որ Աստված ունի անսահմանափակ և անարգել զորություն, որպեսզի իրականացնի այն ամենը, ինչ որոշել է:

2. Ծառայել մարդկանց

Մեր երկրորդ հիմնական նպատակը կորսված և մահվան մատնված մարդկանց փրկությունն է: Այն քրիստոնյան, որը ճշմարտապես ձգտում է փառավորել Աստծուն և վստահ է, որ գերագույն իշխանությունը պատ-

կանում է Նրան, անտարբեր չի լինի ամբողջ աշխարհում ապրող միլիարդավոր մարդկանց հանդեպ, որոնք դեռ պետք է լսեն Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Եթե մենք ճշմարտապես նման ենք Քրիստոսին, մարդկության կորսված բազմությունները կառաջացնեն մեզանում գթասրտություն (Մատթեոս 9.36), նույնիսկ՝ մեծ տրտմություն և չփարատվող վիշտ (Հռոմեացիների 9.2): Մեր քրիստոնեական դավանությունը պետք է վիճարկելի համարել, եթե մենք չենք ցանկանում անել այն, ինչ կարող ենք, որպեսզի հայտնի դարձնենք Քրիստոսի անունն ազգերի մեջ և ամեն բան կրենք Աստծո ընտրյալների համար (Բ Տիմոթեոս 2.10):

3. Հիմնել աստվածաշնչյան եկեղեցիներ

Մեր երրորդ հիմնական նպատակն աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելն է: Թեև մենք գիտակցում ենք, որ մարդկությունն ունի բազմաթիվ կարիքներ և ապրում է տառապանքի մեջ, մենք համոզված ենք, որ այդ ամենը ունի մեկ պատճառ. մարդու սիրտը խիստ ապականված է, թշնամաբար է տրամադրված Աստծո հանդեպ և մերժում է ճշմարտությունը: Այդ իսկ պատճառով, մենք հավատում ենք, որ մարդկանց ծառայելու լավագույն միջոցն է՝ քարոզել Ավետարանը և հիմնել տեղական եկեղեցիներ, որոնք կհռչակեն Աստվածաշնչի ամբողջ խորհուրդը և կծառայեն համաձայն Աստծո Խոսքի պատվիրանների, դրույթների և իմաստության: Այսպիսի աշխատանքը չի կարող կատարվել մարդկային ուժերով, այլ միայն Աստծո գերբնական կանխատեսմամբ և այն միջոցներով, որոնք Նա սահմանել է՝ Աստծո խոսքի քարոզումը, բարեխոսական աղոթքը, զոհաբերող ծառայությունը, անպայմանական սերը և ճշմարիտ քրիստոսանմանությունը:

4. Հայտնել Աստծո հավատարմությունը

«HeartCry» Միսիոներական ընկերության չորրորդ և վերջին հիմնական նպատակն է ցույց տալ Աստծո ժողովրդին, որ Նա ճշմարտապես կարող է և ցանկանում է հոգալ մեր բոլոր կարիքներն Իր հարստության չափով, փառքով: Ծառայության կարիքները լրացված կլինեն աղոթքի միջոցով: Մենք չենք պատրաստվում աջակցություն ձեռք բերել ինքնագովազդման միջոցով, և ո՛չ էլ պարտադրելով կամ շահարկելով Քրիստոսի մեջ մեր եղբայրներին և քույրերին: Եթե այս ծառայությունը Տիրոջից է, ուրեմն Նա էլ կլինի մեր Հովանավորը: Եթե Նա մեզ հետ է, Նա կառաջնորդի մարդկանց մեզ միջոցներ տրամադրելու համար, և մենք կբարգավաճենք: Եթե Նա մեզ հետ չէ, մենք հաջողություն չենք ունենա և չպետք է ունենանք: Պետք է խոստովանենք, որ այս ծառայության գոյության տարիների ընթացքում մեր հավատքը ոչ բավարար և թույլ է եղել, բայց Աստված միշտ հավատարիմ է եղել: Ինչպես մի հրաշալի եղբայր ասում է. «Մեր Աստծուն հաճելի է պաշտպանել նույնիսկ նվազագույն վստահությունը, որն ունեն Իր զավակները»:

Կոչ

Որպես քրիստոնյաներ՝ մենք ունենք կոչում, հանձնարարություն և պատվիրան՝ դնելու մեր կյանքը, որպեսզի Ավետարանը քարոզվի երկնքի տակ ապրող ամեն ստեղծվածի: Աստծուն սիրելուց հետո սա պետք է լինի մեր երկրորդ «մոլուցքը»: Չկա առավել ազնվագույն առաջադրանք, որի համար արժե տալ մեր կյանքը, քան Աստծո փառքը տարածելը, այսինքն՝ մարդկանց փրկության բերելը Հիսուս Քրիստոսի Ավետարանի քարոզման միջոցով: Եթե քրիստոնյան ճշմարտապես հնազանդ է Մեծ Հանձնարարականին, նա կա՛մ կտա իր կյանքը՝ հանքը իջնելու համար, կա՛մ կպահի իջնողի պարանը (Վիլյամ Քերի): Երկու դեպքում էլ անհրաժեշտ է նույն վճռական նվիրվածությունը:

Իմացե՛ք ավելին.

Այցելե՛ք մեր «**heartcrymissionary.com**» կայքը, որպեսզի իմանաք ավելին մեր ծառայության մասին՝ այն, թե որն է մեր նպատակը, ինչին ենք հավատում և ինչպես ենք գործում: Բացի այդ՝ դուք կարող եք ծավալուն տեղեկություններ ստանալ այն միսիոներների մասին, որոնց մենք ծառայելու արտոնություն ունենք:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

«Ուշադրությամբ կարդացեք այս աշխատանքային ձեռնարկը, մտախոհ պատասխանեք ներկայացված հարցերին և կտեսնեք, որ ձեր հոգևոր կյանքը մեծ առաջընթաց կապրի»:

— **Դոկտոր Սթիվեն Ջ. Լոուսոն, «OnePassion Ministries»** ծառայության նախագահ և հիմնադիր

Զուսնենալով ճիշտ պատկերացում մարդկային բնության և մեղքի մասին՝ անհնար է հասկանալ Հիսուս Քրիստոսի Ավետարանը և լիարժեք գնահատել այն շնորհքը, որն Աստված տվեց մեզ Նրա կատարած վեհ աշխատանքի միջոցով: Այնպես որ, այս աշխատանքային ձեռնարկի նպատակն է պատկերել ընթերցողի համար մարդու անկում ապրած բնության իրական լինելը և նրա մեղքի զարհուրելի հետևանքները: Նպատակը ոչ թե ընթերցողի հույսը խլելն է, այլ միակ ճշմարիտ հույսը մատնացույց անելն է, որը Հիսուս Քրիստոսի Ավետարանն է:

«Հասկանալ մարդու իրական դրությունը» գիրքն անցկացնում է ընթերցողին մարդկային մեղքի խավար գետնուղիով, որպեսզի նա շատ ավելի պարզորեն տեսնի Աստծո շնորհքի լույսը: Հեղինակը ցանկացել է ստեղծել այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնացույց է անում Աստվածաշունչը և թույլ է տալիս, որ Աստծո Խոսքը խոսի իր փոխարեն: Այսպիսով, այս դասընթացի նպատակն է, որ ուսանողը հանդիպում ունենա Աստծո հետ Նրա Խոսքի միջոցով: Այս ուսումնական ձեռնարկն այնպես է կազմված, որ ուսանողը բառացիորեն անկարող է ընթերցել այն՝ առանց բաց Աստվածաշնչի:

Փոլ Վոշերի նախորդ աշխատություններից մեկը՝ *«Ճշմարտությունը մարդու մասին»* գիրքն ընդլայնվել, վերանայվել և փոփոխության է ենթարկվել: Այն պարունակում է հարյուրից ավելի նոր նշում, անթիվ այլ ավելացումներ և փոփոխություններ, ունի ավելի ընթեռնելի բովանդակություն և ներկայանում է որպես «Մեդիա Գրատիաե» հրատարակչության **«Աստվածաշնչյան հիմունքներ քրիստոնեական հավատքի համար»** գրքաշարի երրորդ գիրքը:

Փոլ Դեյվիդ Վոշերը տասը տարի շարունակ միսիոներ է եղել Պերուի Հանրապետությունում: Այդ ընթացքում հիմնադրել է «HeartCry» Միսիոներական ընկերությունը, որի նպատակն է՝ աջակցել պերուացի եկեղեցիներ հիմնադրողներին: Ներկայումս Փոլը «HeartCry»-ի Միսիոներական բաժնի տնօրենն է (heartcrymissionary.com): Աստծո օրհնությամբ, այն կարողանում է աջակցել միսիոներների՝ աշխարհով մեկ գտնվող ավելի քան քառասուն երկրում: Նա և կինը՝ Զարոն, ունեն չորս զավակ՝ Յանը, էվանը, Ռոուենը և Բրոնվինը: